# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

40ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 30 (1980) ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 8, 2020
VOLUME 40, NO. 30 (1980) SATURDAY AUGUST 8, 2020

Պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Մեծ Վնասներ Նոր Հաճըն Թաղամասէն Ներս

*Լիբանանի մեր օրկան՝ «Արարատ» օրաթերթը կը հաղորդէ որ, պայթումին հետեւանքով ծանրօրէն տուժած է Նոր Հաճըն թաղամասը, ուր վիրաւորուած են բազմաթիւ հայորդիներ: Թաղամասին մէջ գործող ՀԿԲՄ-ի դարմանատան բժիշկներն ու աշխատակիցները ժամեր շարունակ ընդունեած են շրջանի հայ եւ ոչ-հայ բազմաթիւ վիրաւորները:*

*Պայթումին պատճառով նիւթական ծանր վնասներու կրած են Սուրբ Գէորգ եկեղեցին, «Արարատ» օրաթերթի խմբագրատունը եւ Նոր Հաճնոյ մէջ գտնուող բնակարաններ, վաճառատուներ ու հաստատութիւններ:*

*Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան այցելած է Նոր Հաճըն, ընկերակցութեամբ՝ Ազգային Իշխանութեան ներկայացուցիչ Ռաֆֆի Սիսլեանի: Ուղեկցութեամբ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Սեպուհ Գալփաքեանի, առաջնորդ սրբազանը շրջեցաւ թաղամասին մէջ, ծանօթացաւ բնակիչներուն կրած վնասներուն եւ անոնց մտահոգութիւններուն ու խնդիրներուն:*

## Պէյրութի Նաւահանգիստի Ահաւոր Պայթումը Խլեց Հարիւրէ Աւելի Զոհեր Ու Հինգ Հազար Վիրաւորներ Հայութիւնը Ենթարկուած է Մեծ Վնասներու

*Օգոստոս 4-ի երեկոյեան Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի նաւահանգիստին մէջ տեղի ունեցած ահաւոր պայթումը քանդեց Լիբանանի մայրաքաղաքը ու ցնցեց ամբողջ աշխարհը: Աղէտը պատած է ամբողջ երկիրը, որուն մէջ նաեւ Լիբանանահայութիւնը:*

*Ըստ պաշտօնական տուեալներու զոհերու թիւը կը մօտենայ 150-ի, իսկ վիրաւորները՝ 5000-ի: 200-300 հազար ժողովուրդ մնացած է անտուն: «Արեւելք» կայքէջի տուեալներով յայտնի են ինքնութիւնը 11 հայ զոհերու, իսկ վիրաւորներու թիւը կը հասնի 300-ի:*

*Հսկայ վնասներ կրած են նաեւ Նոր Հաճընի եւ Պուրճ Համուտի Հայկական կեդրոնները, հաստատութիւններն ու բնակելի տուները:*

*Հայաստանի իշխանութիւնները մնայուն կապի մէջ են Լիբանանի պետական եւ Հայկական շրջանակներուն հետ, անմիջական օգնութիւն հասցնելու համար աղէտեալներուն: Վարչապետ Նիկոլ Փաշինեան Օգոստոս 6-ի կառավարութեան նիստի ընթացքին յայտարարեց որ, Հայաստան իր կարելիութեան սահմաններուն մէջ օգտակար պիտի ըլլայ Լիբանանի կառավարութեան եւ տեղւոյն հայ համայնքին*



Պէյրութի նաւահանգիստը պայթիւնի ճիշդ պահուն

*Դեղորայք, սնունդ եւ այլ պարագաներ տեղափոխող օդանաւը Երեւանէն Պէյրութ կը մեկնի հաւանաբար շաբաթ օրը, կառավարութեան նիստին յայտարարեց փոխ վարչապետ Տիգրան Աւինեան:*

*«Կարծում եմ, մենք այսօր օրուայ վերջ ե՛ւ այն օգնութեան չափաքանակը ե՛ւ տեսակը վերջնական ու ամբողջական կ'ունենանք ե՛ւ թէ ժամկէտները ինչ են լինելու: Ենթադրում ենք, որ դա տեղի է ունենալու շաբաթ օրը», - ըսաւ Աւինեան:*

*Պէյրութի հզօր պայթիւնի հետեւանքով մահացածներու ու տուժածներու ընտանիքներուն սփոփանքի ու զօրակցութեան խօսքեր ուղղեց վարչապետ Փաշինեան, շեշտելով, որ Հայաստան անտարբեր չի կրնար մնալ Լիբանանի եղբայ-*

Շար.ը էջ 6

## ՀՀ Գլխաւոր Հիւպատոս Արմէն Բայբուրդեան Ընդունեց ՍԴՀԿ Վարիչ Մարմնի Ներկայացուցիչները



Ձախից աջ - Հիւպատոսի օգնական Վարազդատ Պահլաւունի, Գաբրիէլ Մոլոյեան, Արմէն Բայբուրդեան, Վազգէն Խոտանեան եւ Միհրան Խաչատուրեան

*Յուլիսի 31-ին, Լոս Անճելըսի մէջ ՀՀ գլխաւոր հիւպատոս, դեսպան Արմէն Բայբուրդեանն ընդունեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի ղեկավար կազմի ներկայացուցիչները:*

*ՀՀ գլխաւոր հիւպատոսի հրաւէրով տեղի ունեցած հանդիպման նպատակն էր՝ քննարկել ԱՄՆ Արեւմտեան ափի հայ համայնքին յուզող խնդիրները: Հանդիպման մասնակիցները անդրադարձած են հայ-ատրպէյճանական սահմանին վերջին շրջանին տեղի ունեցած դէպքերուն, ինչպէս նաեւ տարբեր երկիրներու մէջ ատրպէյճանական համայնքներուն կողմէ սադրանքներուն, վայրագութիւններուն եւ վանտալիզմի դրսեւորումներուն՝*

Շար.ը էջ 4

## ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Յայտարարութիւնը Լիբանանի Վերաբերեալ

ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան եւ համայն Հնչակեան ընտանիքի անունով կու գանք մեր խորազգագ ցաւակցութիւնները յայտնելու՝ Պէյրութի նաւահանգիստի ահասարսուռ պայթումին հետեւանքով բոլոր զոհուածներու եւ անյայտ կորածներու ընտանիքի անդամներուն եւ հարազատներուն, իրենց ծանր կորուստին համար: Մեր շուտափոյթ ապաքինման մաղթանքները կ'ուղղենք նաեւ բոլոր վիրաւորներուն:

Դժբախտաբար, ամբողջապէս խուսափելի այս ծանր աղէտը պատահեցաւ այնպիսի պահի մը, երբ Լիբանանի ժողովուրդը? երկիրը համակած քաղաքական եւ տնտեսական խոր ճգնաժամի հետեւանքով հասած էր ծայրայեղ աղքատութեան եւ յուսահատութեան սեմին: Այսօր, առաւել քան երբեք, հայուն համար Հայաստանէն դուրս երկրորդ հայրենիք նկատուող Լիբանանի մեր քոյրերը եւ եղբայրները մեր բոլորին անմիջական աջակցութեան եւ օժանդակութեան կարիքը ունին:

ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը իր անվերապահ նեցուկը կը յայտնէ լիբանանահայութեան եւ կոչ կ'ուղղէ համայն հայութեան եւ իր համակիր շրջանակին, անհատապէս կամ հաւաքաբար, գործնապէս մասնակից դառնալու իրենց շրջաններուն մէջ ընթացող դրամահաւաքի աշխատանքներուն:

Դատելով աւերածութեան աստիճանէն, վերականգնման ճանապարհը վստահաբար պիտի ըլլայ երկար եւ դժուար: Սակայն մենք կը հաւատանք, որ հաւաքական ճիգերով եւ միասնական ջանքերով կը կարողանանք յաղթահարել այս դժուարին յանգրուանը:

**Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան**
**Կեդրոնական Վարչութիւն**
**Օգոստոս 5, 2020**

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Բանակով Հպարտանալու Իրաւունքը

*Հայ-ատրպէյճանական սահմանին լարուածութիւնը դեռեւս պահպանւում է, բայց քաղաքական ուժերի՝ բանակի հաշուին սեփական վարկանիշը բարձրացնելու եւ քաղաքական հակառակորդների վրայ ինքնահաստատուելու փորձերն արդէն սկսուել են: Թւում էր՝ գոնէ այս դէպքում ընդդիմութիւնը խօսելու տեղ չունի, որովհետեւ Հայաստանը պատուով դուրս եկաւ տաւուշեան պատերազմից ու փայլուն յաջողութիւն արձանագրեց, վարչապետ Փաշինեանն էլ յայտարարեց, որ դրա շնորհիւ հայկական կողմի դիրքորոշումն ամրապնդուել է, ու շարադրեց մեր պայմանները նոր իրավիճակում: Բայց՝ չէ. հանրապետականներն իսկոյն յայտարարեցին, թէ բա չէք ասի՝ Նիկոլ Փաշինեանը վերադառնում է Սերժ Սարգսեանի ասածներին, այսինքն՝ ընդունում է, որ նա ճիշտ էր, ինքը՝ սխալ, եւ այլն: Եւ սա՝ այն դէպքում, երբ տաւուշեան բախումների ընթացքում մեր բանակը վերադարձրել է կարեւորագոյն այն բարձունքները, որոնք, ըստ գեներալ Նորատ Տէր-Գրիգորեանցի, ի սկզբանէ մերն էին, բայց ատրպէյճանցիները գրաւել էին, երբ պաշտպանութեան նախարարը Սեյրան Օհանեանն էր (այսինքն՝ Սերժ Սարգսեանի նախագահութեան տարիներին):*

*Խնդիրը, սակայն, դա չէ: Դէ հիմա բարձունքներ են՝ կորցրել էին (Սերժ Սարգսեանը հաստատ մի պատճառ կը գտնէր, օրինակ՝ կ'ասէր, որ Տաւուշում էլ 70-ական թուականների զէնքով էինք կռւում): Խնդիրն այն է, որ յեղափոխութիւնից յետոյ երկու տարի շարունակ շփման գծում համեմատաբար հանգիստ էր, եւ նոյն հանրապետականները երկու տարի շարունակ յայտարարում էին, թէ այդ յարաբերական անդորրը Հայաստանի նոր իշխանութիւնների դաւաճանութեան ապացոյցն է, Նիկոլ Փաշինեանը Ալիեւին խոստացել է հողեր յանձնել, դրա համար էլ ատրպէյճանցիները չեն յարձակւում, այ մի քիչ էլ սպասէք՝ ուր որ է կը յանձնի, եւ այսպէս շարունակ: Տաւուշեան դէպքերը ցոյց տուեցին, որ դա սուտ էր, ու որեւէ ստուերային պայմանաւորուածութիւն չկար: Եւ ի՞նչ, որեւէ հանրապետական ներողութիւն խնդրե՞ց երկու տարի շարունակ ժողովրդին խաբելու եւ իշխանութիւններին զրպարտելու համար: Հակառակը՝ հիմա էլ յայտարարում են, թէ մեր բանակն իշխանութիւնների կամքին հակառակ է յաղթել, բանակը հօ չգիտէ՞ր, որ Փաշինեանը «վերելակում» Ալիեւին խոստացել էր պարտուել:*

*Հիմա՝ շփման գծի ողջ երկայնքով մոնիթորինգի համակարգի մասին, որի անհրաժեշտութիւնը կարեւորեց Փաշինեանը: Ընդդիմութիւնն իսկոյն աղմուկ-աղաղակ բարձրացրեց, թէ «տեսա՞ք, փաստօրէն վերադառնում է Վիեննայի եւ Սանկտ-Պետերբուրգի պայմանաւորուածութիւններին, որոնք ձեռք էին բերուել Սերժ Սարգսեանի ժամանակ ու յետագայում օրակարգից դուրս եկել Փաշինեանի թեթեւ ձեռքով»: Այո, ապրիլեան պատերազմից յետոյ այդպիսի պայմանաւորուածութիւններ իսկապէս էլ ձեռք էին բերուել, ու դրանք մեզ համար իսկապէս չափազանց կարեւոր էին: Բայց չմոռանանք, որ ապրիլեան պատերազմից յետոյ դեռ երկու տարի երկիրը ղեկավարում էր Սերժ Սարգսեանը: Ամօթ չլինի հարցնելը՝ բա այդ երկու տարիների ընթացքում ինչո՞ւ մշտադիտարկման համակարգն այդպէս էլ չստեղծուեց ու մնաց թղթի վրայ: Գուցէ հենց այդ ժամանա՞կ էին պայմանաւորուածութիւնները «ջրուել», գուցէ պարզապէս Սերժ Սարգսեանի ուսին թփթփացրել կամ Էդուարդ Նալբանդեանի թուշը քաշել էին, թէ «դէ լաւ, բան էր՝ ասեցինք, ի՞նչ էք խորացել»: Թէ չէ՝ այդ ի՞նչ պայմանաւորուածութիւններ են, որ ներկայացուելով որպէս «անյապաղ միջոցառումներ»՝ աւելի քան մէկուկէս տարի մնում են թղթի վրայ:*

*Իսկ ղարաբաղեան խնդրում հայկական կողմի դիրքորոշումը, մեծ հաշուով, էական փոփոխութիւններ չի կրել: Պարզապէս մի բան է, երբ դիրքորոշում ես յայտնում որպէս «80-ական թուականների զէնքով կռուող» բանակի գերագոյն-գլխաւոր հրամանատար, եւ բոլորովին այլ բան, երբ մօտաւորապէս նոյն դիրքորոշումն արտայայտում ես՝ թիկունքում ունենալով արագ տեմպերով հզօրացող եւ հակառակորդի ատամները ջարդած զինուած ուժեր:*

*«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»*

# Հարց, Որը Չտրուեց Ռոբերտ Քոչարեանին

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Արցախի հարցում բանակցային գործընթացում հայկական դիրքորոշման արդիւնաւէտ հունի համար պէտք է ընդամէնը կարդալ Արցախի անկախութեան հռչակագիրը, հայկական երեք հեռուստաընկերութիւնների տուած հարցազրոյցում յայտարարեց Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանը, քննադատելով ներկայիս քաղաքականութիւնը: Ռոբերտ Քոչարեանը ներկայիս իշխանութեան քաղաքականութիւնն Արցախի հարցում բնորոշում էր անհասկանալի: Թերեւս դրանից էր նաեւ անհասկանալի նրա քննադատութիւնը, այն, թէ ի վերջոյ ինչն ու ինչի համար է քննադատում Ռոբերտ Քոչարեանը:*

*Այդուհանդերձ, Արցախի հռչակագրին արուած յղումով նա օգնեց բաւականին որոշակիացնել իրավիճակը: Ըստ երկրորդ նախագահի, պէտք է կարդալ Արցախի հռչակագիրը, այնտեղ ամէն ինչ ասուած է, պէտք է դա դարձնել հայկական դիրքորոշման հիմք եւ ամէն ինչ կ'ընկնի տեղը:*

*Հիանալի է ասուած, բայց մնում է ինհարկէ մի բաց: Խօսքն այն մասին է, թէ Ռոբերտ Քոչարեանը որքանով է Արցախի անկախութեան հռչակագրին համահունչ համարում «Մադրիդեան սկզբունքները», որը նրա համաձայնութեամբ բանակցութեան հիմք է դարձել 2007 թուականի վերջից: Թէեւ, մինչ այդ էլ եղած այսպէս ասած բովանդակութիւնը առանձնապէս, հիմնաւորապես չի տարբերուել դրանից:*

*Այդուհանդերձ, երբ երկրորդ նախագահը որպէս բանակցութեան հիմք հաւանութեան էր արժանացնում «Մադրիդեան սկզբունքները», յիշո՞ւմ էր Ացախի անկախութեան հռչակագիրն ու համեմատում այդ սկզբունքների հետ: Որտե՞ղ էր նա տեսնում այդ սկզբունքների շուրջ բանակցութեան եւ Արցախի անկախութեան շահեկանութիւնը: Կարող էր տեսնել թերեւս մի տեղ՝ տարածքներ կարգավիճակի, այսինքն անկախութեան դիմաց: Ըստ այդմ, Ռոբերտ Քոչարեանը հնարաւոր համարու՞մ էր Արցախի անկախութեան դիմաց տարածք յանձնելը:*

*Արցախի հարցում երկրորդ նախագահի դիրքորոշման հասկանալիութեան համար հարցերը իսկապէս շատ են, սկսած, ընդ որում, այն փուլից, երբ նա շարունակեց Ալիեւի հետ բանակցութիւնը՝ չնայած այն բանին, որ Ատրպէյճանի նախագահը պաշտօնապէս կանգնեց մարդասպան կացնահար Սաֆարովի մէջքին:*

*Արցախի հարցն, անշուշտ, բարդ հարց է, եւ Հայաստանի բոլոր երեք նախագհներն էլ ստիպուած են եղել կատարել բարդ մանեւրներ ու թերեւս ունեցել են սխալներ: Ռոբերտ Քոչարեանն, օրինակ, ասում է, թէ սխալն ընդունել կարող են միայն ներքուստ ուժեղ մարդիկ: Հայաստանի երեք նախագահներից սխալն ընդունելու երեք դէպք դժուար է յիշել: Մի դէպք յիշւում է Լեւոն Տէր-Պետրոսեանից, երբ յայտարարեց, թէ իր սխալը Սերժ Սարգսեանին ու Ռոբերտ Քոչարեանին Արցախից բերելն էր, թէեւ նոյն մարդը նաեւ յայտարարել է, թէ Սերժ Սարգսեանը շատ լաւ նախարար էր:*

*«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»*

# Սահմանադրական Դատարանի Կազմի Համալրման Սխալը Կարող է Ճակատագրական Լինել Պետութեան Համար

ԱՇՈՏ ՍԱՐԳՍԵԱՆ

*Սահմանադրական դատարանի դատաւորների թափուր տեղերից մէկի համար կատարուած առաջադրումը բուռն քննարկման առարկայ դարձաւ: Իսկ այդ բուռն քննարկումը ծնող անհանգստութիւնը շատ աւելի մեծ, ընդհուպ՝ երկրի համար ճակատագրական խնդրի տարողութիւն ունի:*

*Ներկայ իշխանութիւնն արդէն շուրջ մէկ տարի իր ջանքերի ահռելի մի մասն ուղղել է լուծելու Սահմանադրական դատարանի ճգնաժամը: Ճգնաժամ, որը կապուած էր մի կողմից՝ վերջինիս օրինակարգութեան, միւս կողմից՝ կարեւորագոյն այդ կառոյցը 2018 թ. յեղափոխութեան դէմ որպէս գործիք նախկինների կողմից օգտագործելու անսքող փորձերի հետ: Խնդիրը լուծելու համար անգամ սահմանադրական հանրաքուէ նախաձեռնուեց, որի, յայտնի պատճառներով անհնարինութեան պայմաններում, ոչ արմատական, սակայն ինչ-որ մի լուծում գտնուեց ԱԺ որոշմամբ:*

*Խնդիրն այն է, որ թէկուզ ժամանակին կեղծուած, թէկուզ թերութիւններով լի, բայց դէ ֆակտօ գործող Սահմանադրութիւնը ՍԴ-ին տուել է գերլիազօրութիւններ, որոնցով նա կարող է խոչընդոտել, տորպեդահարել իշխանութեան ցանկացած քայլ, կաթուածահար անել կառավարութեան եւ Ազգային ժողովի աշխատանքը, արգելափակել սահմանադրական որեւէ փոփոխութեան հնարաւորութիւն: Այսինքն՝ ողջ երկիրը կանգնեցնել փակուղու, ճգնաժամի առջեւ: Իսկ Դատարանի՝ նախկինների հետ փոխկապակցուած անհատական կազմն իր ճնշող մեծամասնութեամբ հակուած էր գնալ այդ ճանապարհով: Այս ամէնը քաջ գիտակցելով ու այդ վտանգի իրական դրսեւորումները տեսնելով է, որ իշխանութիւնը, իրաւացիօրէն, այդ հարցը դարձրեց ներքաղաքական կեանքի թիւ մէկ խնդիրը:*

*Խնդրի ոչ արմատական լուծման հետեւանքով ստացուել է այնպէս, որ դատաւորների թափուր տեղերից թէկուզ մէկի համալրումն այնպիսի անձով, որը կա՛մ արմատներով ու շահերով աւելի հարազատ է նոյն «հրայրթովմասեանական» միջավայրին, կա՛մ բարոյական ու մասնագիտական նկարագրով հեռու է Սահմանադրական դատարանի դատավորի համար պահանջուող անաչառութեան, անկողմնակալութեան եւ այլ որակներից, ինչը կարող է ջուրը լցնել մինչ այժմ այս ուղղութեամբ արուած ողջ աշխատանքը: Վահրամ Աւետիսեանի թեկնածութիւնը (նկատի ունենալով լայնօրէն քննարկուած յայտնի հանգա-*

Շար.ը էջ 7

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Ռոպերթ Քոչարեան Ըսելիք Ունի Միայն Դատարանին Մէջ. Անդրանիկ Քոչարեան

*Մարտ 1-ի գործով ամբաստանեալ Ռոպերթ Քոչարեան ըսելիք ունի միայն դատարանին մէջ: Հանրութիւնը իրմէ կ՚ակնկալէ լսել ոչ թէ քննադատութիւններ, այլ բացատրութիւններ 2008-ի արիւնոտ իրադարձութիւններու իր որոշումներուն մասին, իշխող խմբակցութեան պատգամաւոր Անդրանիկ Քոչարեան այսպէս արձագանգեց Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի քննադատութիւններուն:*



Պատգամաւոր
Անդրանիկ Քոչարեան

*Ռոպերթ Քոչարեան հարցազրոյց տուած է 5-րդ ալիք, Հ2 եւ «Երկիր Մետիա» հեռուստաընկերութիւններուն: Աւելի քան մէկ ժամ տեւած հարցազրոյցին, քննադատած է Նիկոլ Փաշինեանի իշխանութեան վարած ներքին ու արտաքին քաղաքականութիւնը, խօսած է իշխանափոխութեան անհրաժեշտութեան մասին: Ան չէ բացառած յեղափոխականներուն յաջողած մեթոտի կիրառումը՝ զանգուածային ճնշումներ եւ ճանապարհներ փակելու միջոցով:*

*Շուրջ 4 միլիոն տոլար գրաւով ազատութեան մէջ գտնուող Ռոպերթ Քոչարեանի խօսքով, եթէ կառավարութիւնը չփոխէ գործելաոճը, լուրջ խնդիր կ՚ունենայ: Արտահերթ իշխանափոխութենէն մինչեւ հերթական ընտրութիւն բոլոր տարբերակները քաղաքական սեղանին վրայ կը գտնուին: Ընդդիմադիր ուժերու յայտարարութիւնները կը հաստատեն, որ իշխանափոխութեան օրակարգը ձեւաւորուած է, կը մնան կազմակերպչական հարցերը, ըսած է Քոչարեան: Թէ ո՞ր ուժերու համախմբումով հաւանական իշխանափոխութիւնը պիտի կատարուի, երկրորդ նախագահը փակագծեր չէ բացած:*

*Ռոպերթ Քոչարեանին եւ իր քաղաքական համախոհներուն, ժողովուրդը արդէն մերժած է, ընդ որում, քանի մը սերունդի, հակադարձեց Անդրանիկ Քոչարեան՝ հարցնելով այդ ո՞ր ուժերուն հետ եւ ինչպէ՞ս կը պատկերացնէ իշխանափոխութիւնը, երբ Հայաստանի քաղաքացիները արդէն իրենց որոշումը կայացուցած են: Քոչարեանի եւ ժողովուրդի միջեւ միայն փշալարեր կան:*

*Արցախեան հիմնախնդիրի կարգաւորման հարցին ալ անդրադարձած էր Հայաստանի նախկին ղեկավարը, մտահոգուած Փաշինեանի՝ «Արցախը Հայաստան է եւ վերջ» ձեւակերպման առնչութեամբ: Այդ գուցէ փոխաբերական նշանակութիւն ունի գործող իշխանութեան համար, բայց, փաստացի, Արցախը վերածուած է Հայաստանի մարզի կարգավիճակի, ըսած է Ռոպերթ Քոչարեան:*

*Ղարաբաղեան կարգաւորման ու արտաքին քայլերուն ուղղուած քոչարեանական քննադատութիւններուն իշխանական պատգամաւորը նախընտրեց արձագանգել կարճ՝ մէկ օրինակով. «Ո՞նց կարող է Ռոպերթ Քոչարեանն այսօր խօսել Արցախի անվտանգութեան եւ դրա մէջ այսօրուայ իշխանութիւնների կատարած քայլերի մասին, երբ որ այդ քայլերն ըստ էութեան ամբացրել են մեր անվտանգային համակարգը: Ռոպերթ Քոչարեանը չմոռանանք եղել է այն միակ ղեկավարը, որը Ատրպէյճանի հետ քննարկել է Մեղրիի տարբերակը»:*

# Վանեցեան Հրաժարած է Նախապատրաստուող Գործով Բացատրութիւն Տալ

*Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) նախկին տնօրէն, «Հայրենիք» կուսակցութեան նախագահ՝ Արթուր Վանեցեան Ազգային Անվտանգութեան Ծառայութեան կողմէ հարցաքննութեան ենթարկուելէ ետք լրագրողներուն յայտնեց, որ նախապատրաստուող գործով որեւէ դատավարական կարգավիճակ չունի:*



ԱԱԾ նախկին տնօրէն ՝
Արթուր Վանեցեան

*«Նիւթերի նախապատրաստման շրջանակներում հրաւիրուել եմ բացատրութիւն տալու համար: Ուզում եմ նշել, որ որեւէ պարտաւորութիւն չունէի գալու, բայց, յարգելով ինստիտուտը, այցելել եմ եւ հրաժարուել եմ բացատրութիւն ներկայացնելուց»,- «Արմէնփրես»-ի հաղորդումով՝ ըսաւ Վանեցեան:*

*Վանեցեանը չմանրամասնեց, թէ ինչ գործի մասին է խօսքը. «2018 թուականին վերականգնուած է աշխատանքի մեր նախկին աշխատակիցներից մէկը, ով, ըստ ԱԱԾ մեկնաբանութեան, իրաւունք չունէր այդ պաշտօնին վերականգնուելու»:*

*Վանեցեան անդրադարձաւ այն հարցին, թէ հանդիպա՞ծ է Ռոպերթ Քոչարեանի հետ: «Այդ տեղեկատուութիւնն արդէն իսկ հերքուել է, բայց ես չեմ բացառում, որ առաջիկայում լինի հանդիպում բոլոր քաղաքական ուժերի, անհատների հետ, այդ թւում՝ կարող է լինել եւ Քոչարեանի, եւ Սերժ Սարգսեանի, եւ Լեւոն Տէր Պետրոսեանի հետ: Քաղաքական գործընթացները ենթադրում են հանդիպումներ բոլոր քաղաքական ուժերի եւ քաղաքականութեան մէջ գործունէութիւն ծաւալող անձանց հետ»,- ըսաւ Վանեցեան:*

# Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Յոյս Ունի, Որ Սեպտեմբերին Կ՚արձանագրուի «Քորոնա» Ժահրի Ճգնաժամի Աւարտը

*Վերջին 15 օրուայ ընթացքին, «Քորոնա» ժահրի համաճարակային վիճակը Հայաստանի մէջ էականօրէն բարելաւուած է եւ կը բարելաւուի, յայտարարեց վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան, յոյս յայտնելով, որ Սեպտեմբերին կ՚արձանագրուի ճգնաժամի աւարտը:*



Վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան

*«Մենք հիմա ձեւակերպում ենք խնդիր, որ մենք համաճարակն, ըստ էութեան, որպէս օրակարգի հարց դուրս բերենք մեր հանրային կարգի օրակարգից: Սա չի նշանակում, որ «Քորոնա» ժահրի դէպքեր ընդհանրապէս չլինեն Հայաստանի Հանրապետութիւնում, սա նշանակում է, որ «Քորոնա» ժահրի դէպքերը լինեն այն աստիճանի եւ այն մակարդակի վրայ, որ մենք դա չհամարենք առնուազն առողջապահական առումով ճգնաժամ: Հետեւաբար, այո, մենք այսօր այդ առիթը, հնարաւորութիւնը ունենք: Ինչքանո՞վ կ՚իրացնենք այդ հնարաւորութիւնը, կախուած է եւ՛ պետական մարմինների, եւ՛ մեզնից իւրաքանչիւրի, եւ՛ իւրաքանչիւր քաղաքացու պատասխանատուութեան մակարդակից», - ընդգծեց Փաշինեան:*

# Նախագահ Սարգսեան ՍԴ Դատաւորի Պաշտօնին Առաջադրած Է Արթուր Վաղարշեանի Թեկնածութիւնը

*Նախագահ՝ Արմէն Սարգսեան ստորագրած է Արթուր Վաղարշեանի Սահմանադրական դատարանի (ՍԴ) դատաւորի թեկնածու առաջադրման գրութիւնը: Այս մասին կը յայտնէ Նախագահի աշխատակազմի հասարակութեան հետ կապերու վարչութիւնը:*

*Աւելի վաղ, Դատաւորներու ընդհանուր ժողովը ՍԴ դատաւորի թեկնածու ընտրած է Վճռաբեկ դատարանի նախագահ՝ Երուանդ Խունդկարեանը, իսկ կառավարութիւնը՝ իրաւաբանական գիտութիւններու դոկտոր, փրոֆեսոր Վահրամ Աւետիսեանը:*

*Սահմանադրական դատարանի երեք թափուր տեղերը առաջացած են մէկ ամիս առաջ Հայաստանի մէջ ընդունուած սահմանադրական փոփոխութիւններու ի արդիւնք, երբ դադրեցուեցան Ալվինա Կիւլումեանի, Ֆելիքս Թոխեանի եւ Հրանդ Նազարեանի լիազօրութիւնները:*

# «Ես Չեմ Մասնակցած Թուրքիոյ Կողմէ Կազմակերպուած Ծրագրին». Լիլիթ Մկրտչեան

*«Հայոց պատմութիւն», «Համաշխարհային պատմութիւն» եւ «Հասարակագիտութիւն» առարկաներու չափորոշիչները կազմող աշխատանքային խումբի ղեկավար, պ.գ.թ.(պատմական գիտութիւններու թեկնածու), դոցենտ, դասախօս, ուսուցիչ, դասաւանդման 18 տարուայ աշխատանքային փորձ ունեցող՝ Լիլիթ Մկրտչեան առցանց ասուլիսին շեշտեց, որ ինքը չէ մասնակցած Թուրքիոյ կողմէ կազմակերպուած ծրագրին: Մկրտչեան մասնակցած է ծրագրի մը, որուն նաեւ թուրք մասնագէտներ ներգրաւուած եղած են:*



Դպրոցական դասագիրքերու
չափորոշիչները կազմող
խումբի ղեկավար
Լիլիթ Մկրտչեան

*«Արմէնփրես»-ի հաղորդումով՝ այս մասին Մկրտչեան ըսաւ Օգոստոս 4-ին կայացած առցանց ասուլիսին՝ անդրադառնալով շարք մը պատմաբաններու իրեն ուղղուած քննադատութեան:*

*Ըստ մասնագէտներուն՝ Լիլիթ Մկրտչեան կը համագործակցի թուրք պատմաբաններու հետ: Աւելի վաղ, ՀՀ ԳԱԱ (Գիտութիւններու Ազգային Ակադեմիա) պատմութեան ինստիտուտի տնօրէն՝ Աշոտ Մելքոնեան նշած էր, որ Մկրտչեան իր անուն-ազգանունը, ստորագրութիւնը թողած է «Պատմութեան ուսուցումը Թուրքիայի, Հայաստանի դպրոցներում. քննադատութիւն, այլընտրանքներ» աշխատութեան տակ, ուր Հայկական լեռնաշխարհը Արեւելեան Անատոլիա կամ Կովկաս ներկայացուած է:*

*Ան մտահոգութիւն յայտնած էր, որ Լիլիթ Մկրտչեան, որ այդ աշխատութեան հեղինակներէն մէկն է, այժմ չորս դպրոցական առարկաներու փորձագիտական կազմին ղեկավարն է:*

*«Եթէ ժամանակին գործընկերներս արձագանգէին եւ նոյն ջանասիրութեամբ բացթողումները մատնանշէին, գուցէ մենք այսօր աւելի օգտակար աշխատութիւն ունենայինք, եւ ես դրա համար շնորհակալ կը լինէի նրանց»,- առցանց ասուլիսին նշեց Մկրտչեան:*

## ԼՈՒՐԵՐ

# Վուչիչ. «Սերպիան Տասնապատիկ Աւելի Զէնք Վաճառած Է Ատրպէյճանին, Քան Հայաստանին»



Սերպիոյ Նախագահի՝ Ալեքսանտր Վուչիչ

Սերպիոյ նախագահ՝ Ալեքսանտր Վուչիչ Պելկրատի մէջ տեղի ունեցած ասուլիսին ժամանակ հաստատած է, որ իր երկիրը զէնք վաճառած է Հայաստանին, նշելով, սակայն, որ վերջին տարիներուն Պաքուին վաճառուած սպառազինութեան քանակը անհամեմատ աւելի մեծ եղած է :

«Թէ՛ Ատրպէյճանը եւ թէ՛ Հայաստանը մեր բարեկամներն են: Բայց վերջին քանի մը տարիներուն, մենք տասնապատիկ աւելի զէնք վաճառած ենք Ատրպէյճանին: Չես գիտեր ինչու, սակայն, որեւէ մէկը այդ մասին չխօսեցաւ, որեւէ լրատուամիջոց չանդրադարձաւ անոր», - տարակուսած էր Սերպիոյ Նախագահը՝ ընդգծելով, ի դէպ, որ Ատրպէյճանի նախագահի հետ շատ լաւ յարաբերութիւններ ունի:

Սերպիոյ իշխող Առաջադիմական կուսակցութեան գրասենեակին մէջ նախորդ շաբաթավերջը կայացած այս ասուլիսի ընթացքին, Վուչիչ արձագանգած էր սերպական մամլոյ մէջ տեղ գտած հրապարակումներուն, որոնց համաձայն՝ Պելկրատն ու Երեւանը սպառազինութեան ոլորտին մէջ վերջին տարիներուն շարք մը լուրջ գործարքներ կնքած են: Պելկրատ լոյս տեսնող ??? (ՆԻՆ) հանդէսը, մասնաւորաբար, կը պնդէ, թէ Հայաստանը շուրջ 5 միլիոն 800 հազար եւրոյի եւ 5 միլիոն 300 հազար տոլարի սերպական արտադրութեան զէնք գնած է: Խօսքը մասնաւորապէս տարբեր տրամաչափի ականների եւ «Կրատ» կայանքներու համար նախատեսուած սպառազինութեան մասին է: Նոյն աղբիւրի վկայութեամբ՝ միայն 2019 թուականին Սերպիայէն Երեւան սպառազինութեամբ 16 թռիչք տեղի ունեցած է: Նոյն լրատուամիջոցը նաեւ կը պնդէ, թէ սերպական զէնքի վերջին մատակարարումները կատարուած են Յուլիս 14-ին եւ 15-ին:

Սերպիոյ Նախագահի խօսքով՝ թէեւ ինքը Երեւանի հետ կնքուած գործարքները որոշակիօրէն վիճայարոյց կը համարէ, այնուհանդերձ, այսպիսի մատակարարումներն են, որ հնարաւորութիւն կու տան երկրի ռազմաարդիւնաբերական համալիրին խուսափելու վերջնական անկումէն:

«Իսկ ի՞նչ պիտի ընենք մենք ռազմաարդիւնաբերական համալիրին հետ: Դուք կ'ուզէք, որ այնտեղ ներգրաւուած մարդիկ անգո՞րծ մնան: Սերպիոյ ռազմաարդիւնաբերական համալիրին մէջ 17 հազար մարդ կ'աշխատի, եւ հարկաւոր է այնպէս ընել, որ անոնք պահպանեն աշխատատեղերը: Բայց եթէ ընդհանրացնենք, ուրեմն հարց կը ծագի, որո՞ւ պիտի վաճառենք մենք սպառազինութիւն ապագային: Որու որ ալ վաճառենք, միեւնոյն է, պիտի ենթարկուինք քննադատութեան», - արձանագրած էր Սերպիոյ Նախագահը:

# Եւրոպական Խորհրդարանը Կոչ Ըրած Է Պատժամիջոցներ Կիրառել Ատրպէյճանի Որոշ Պաշտօնեաներու Նկատմամբ

Եւրոպական խորհրդարանի մէջ մեծութեամբ երկրորդ խմբակցութիւնը՝ «Սոցիալիստներու եւ դեմոկրատներու առաջադէմ ալեանսը» (S&D) կոչ ըրած է Եւրոպական միութեան, պատժամիջոցներ կիրառել Ատրպէյճանցի որոշ պաշտօնեաներու նկատմամբ: Այս մասին յայտնած են ՀՀ Ազգային Ժողովի եւրոպական միաձուլման հարցերու մշտական յանձնաժողովէն:

«Հաշուի առնելով Ատրպէյճանի մէջ մարդու իրաւունքներու հետ կապուած իրավիճակի լրջութիւնը՝ կոչ կ'ընենք Եւրոպական միութեան, թիրախաւորուած պատժամիջոցներ կիրառել Ատրպէյճանցի այն պաշտօնեաներուն նկատմամբ, որոնք պատասխանատու են Ատրպէյճանի մէջ ընդդիմութեան եւ քաղաքացիական հասարակութեան դէմ բռնաճնշումներուն համար»,- ըսուած է խմբակցութեան յայտարարութեան մէջ:

Խմբակցութենէն նաեւ նշած են, որ անթոյլատրելի է, որ Ատրպէյճանի Նախագահ Իլհամ Ալիեւը օգտագործէ COVID-19 համաճարակը եւ Հայաստանի հետ յարաբերութիւններու ռազմական լարուածութեան աճը, որպէս պատրուակ, երկրին մէջ քաղաքական ընդդիմութեան մնացորդներու ոչնչացման համար:

# ՀՀ Գլխաւոր Հիւպատոս

Շարունակուած էջ 1-էն

հայկական համայնքներու նկատմամբ:

Գլխաւոր հիւպատոս Բայբուրդեան եւ ՍԴՀԿ Վարիչ Մարմնի ներկայացուցիչները հաստատած են, որ բռնարարքներն ու սադրանքները չեն կրնար տեղ ունենալ ինչպէս Միացեալ Նահանգներու, այնպէս ալ որեւէ այլ երկրներու մէջ: Անոնք շեշտած են, որ Միացեալ Նահանգներու մէջ եւ ամէնուրեք անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր միջոցները՝ հայկական համայնքները ատրպէյճանական հրահրիչ գործողութիւններէն զերծ պահելու համար:

www.massisweekly.com

# Իսրայէլը Պէտք Է Անմիջապէս Դադրեցնէ Ատրպէյճանին Սպառազինութեան Վաճառքը. Զոհրապ Մնացականեան



ՀՀ Արտաքին Գործոց Նախարար՝ Զոհրապ Մնացականեան

Իսրայէլը պէտք է անմիջապէս դադրեցնէ Ատրպէյճանին սպառազինութեան վաճառքը: Այս մասին իսրայէլական The Jerusalem Post թերթին տուած հարցազրոյցին ընթացքին ըսած է ՀՀ Արտաքին Գործոց նախարար՝ Զոհրապ Մնացականեան: Իր խօսքով, Ատրպէյճանին վաճառուած սպառազինութիւնը կ'օգտագործուի Հայաստանի քաղաքացիական ենթակառուցուածքները թիրախաւորելու համար:

Մնացականեան նշած է, որ չնայած Իսրայէլի ու Հայաստանի յարաբերութիւնները վերջին տարիներուն բարելաւուած են, Իսրայէլը շարունակած է մահացու սպառազինութեան վաճառքը Ատրպէյճանին, ինչ որ մեծ խնդիր է երկու երկիրներուն համար:

«Ատրպէյճանի հետ զէնքի առեւտուրը մահացու է, որովհետեւ Ատրպէյճանը երբեք չի երկմտում այդ զէնքերը քաղաքացիական ենթակառուցուածքների, քաղաքացիական բնակչութեան դէմ օգտագործելիս: Մենք մշտապէս արծարծելու ենք այս հարցը, դա միշտ մեր օրակարգի մասն է լինելու երկկողմ եւ բազմակողմ հարթակներում: Իսրայէլը պէտք է դադարեցնի մահաբեր առեւտուրը Ատրպէյճանի հետ», - ըսած է Մնացականեան:

Անդրադառնալով յուլիսեան լարուածութեան օրերուն հայկական զինուժի կողմէ իսրայէլական անօդաչու սարքերու խոցման՝ Մնացականեան ըսած է, որ Հայաստան Ատրպէյճանի դէմ գործած է անկախ զէնքի ծագման երկրէն: «Մեր զինուժը չէզոքացրել է Ատրպէյճանական զէնքերն անկախ դրանց ծագման վայրից», - ըսած է Հայաստանի արտաքին գործոց նախարարը:

# Ամուլսարի Հանքավայրի Մօտ Լարուած Իրավիճակ Եւ Բախումներ



Ամուլսարի մօտ բախումներ՝ Ոստիկաններու եւ ցուցարարներու միջեւ

Երեքշաբթի, Օգոստոս 4-ի առաւօտեան «Լիտիան Արմենիայ» ընկերութեան պատկանող ոսկի հանքի պահակները դէպի Ամուլսար տանող ճանապարհը փակած ակտիւիստներու տնակները քանդած են ու անոնց փոխարէն տեղադրած՝ իրենց տնակները:

Աւելի ուշ աւելի մեծ խումբով բնապահպաններ ժամանած են Ամուլսար՝ իրենց նախկին դիրքերը գրաւելու նպատակով: Դէպքի վայր ժամանած են ոստիկաններ, որոնց ներկայութեան տեղի ունեցած են բախումներ՝ երկու կողմերուն միջեւ: Ոստիկանները ձերբակալած են Լիտիանի պահակներէն մի քանին:

«Դիրքերը յետ ենք գրաւելու», - ըսած է «Կանաչ Հայաստան» կազմակերպութեան ղեկավար՝ Հայկ Գրիգորեան: - «Էն կէտերն են գրաւել, որտեղից իրենք հանգիստ կարող են մուտք գործել Ամուլսարի տարածք, անել իրենց աշխատանքները: Իսկ դա մենք չենք կարող թոյլ տալ, հետեւաբար այդ դիրքերը յետ պիտի վերցնենք մեզ»:

«Լիտիան» յայտարարած է, որ երկու տարի շարունակ բախումներէն խուսափած են, տեղւոյն աշխատանքներու կատարման միակ խոչընդոտը եղած է «Լիտիան»ի ձեւակերպումով՝ իրենց տարածք ներխուժած խումբը: Ոստիկանութիւնը իրենց դիմումներուն չէ արձագանգած, եւ ահա «Լիտիան» ինքը տարածքէն հեռացուցած է ապօրինի գոյքը՝ վագոնները:

ՎԱՐՉՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

## Լոս Անճելըսում ՀՀ Գլխաւոր Հիւպատոս, Արմէն Բայբուրդեանի Յայտարարութիւնը

*Քալիֆորնիայում եւ ԱՄՆ Արեւմտեան միւս նահանգներում բնակուող յարգելի հայրենակիցներ,*

*Հայ-ատրպէյճանական սահմանին ատրպէյճանական կողմի յարձակումներն ու զաւթողական նկրտումները վերջին շրջանում տարածում ստացան նաեւ աշխարհի մի շարք երկրներում, որտեղ հայահոծ համայնք կայ: Յատկապէս Քալիֆորնիան այդ իմաստով ատրպէյճանական սադրանքների թիրախաւորման գլխաւոր նշանակէտներից մէկն է դարձել, ինչի վկայութիւնն անցած շաբաթ տեղի ունեցած ատրպէյճանական սադրիչ գործողութիւններն էին Լոս Անճելըսում Ատրպէյճանի գլխաւոր հիւպատոսութեան առջեւ հայ համայնքի խաղաղ ցոյցի ընթացքում, ինչպէս նաեւ Սան Ֆրանսիսքոյի Գուլզեան-Զաքարեան-Վասպուրական վարժարանի նկատմամբ վանտալիզմը:*



*Հաշուի առնելով ատրպէյճանական կողմից դրսեւորուող թշնամական տրամադրուածութիւնը հայերի նկատմամբ՝ մեր համայնքին յորդորում ենք լինել առաւելագոյն զգոյշ եւ զգօն ատրպէյճանական հրահրիչ գործողութիւնների դիմաց, ձեռնպահ մնալ որեւէ քայլից, որը կարող է հող ստեղծել ատրպէյճանական սադրիչ գործողութիւնների համար: Յորդորում ենք՝ ատրպէյճանական հաւանական սադրանքի կասկածի դէպքում անմիջապէս դիմել իրաւապահ մարմիններին:*

*ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւնն իր հերթին կ'անի հնարաւորը՝ իրաւապահ մարմինների՝ համայնքի անվտանգութեան ապահովմանն ուղղուած աշխատանքին նպաստելու համար:*

## ԱՄՆ-ի Նախագահութեան Դեմոկրատ Թեկնածու Պայտընի Փոխանորդը Հաւանաբար Սեւամորթ Կին Մը Ըլլայ



*Մօտ երեք ամիս ետք՝ յառաջիկայ Նոյեմբեր 3ին, տեղի պիտի ունենան Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութիւնները:*

*Վիճակագրական հաւաստի տեղեկութիւններուն համաձայն, Դեմոկրատ կուսակցութեան նախկին փոխ-նախագահ Ճօ Պայտըն, ներկայիս մեծ առաւելութիւններ ունի Հանրապետական թեկնածու նախագահ Տանըլտ Թրամփի նկատմամբ:*

*Պայտընի հակառակորդները կ'ուզեն շահագործել իր տարիքի վարկածը, առարկելով որ նախագահ ընտրուելու պարագային՝ իր երդման արարողութեան օրը, թեւակոխած պիտի ըլլայ 78 տարիքը: Այս թիւը կը համապատասխանէ նաեւ ԱՄՆ-ի կեանքի տեւողութեան ակնկալուած սահմանին (78.54):*

*Իրերու այս երեւոյթին առջեւ, դեմոկրատները կը մտածեն համեմատաբար աւելի երիտասարդ թեկնածուի մը նշանակումը, փոխ-նախագահի պաշտօնին համար: Այս առնչութեամբ՝ Ճօ Պայտըն քանի մը ամիս առաջ, ընտրարշաւի մը ընթացքին նշած էր որ հաւանաբար իր փոխ-նախագահը իգական սեռէն ներկայացուցիչ մը ըլլայ:*

*Ճօ Պայտընի այս հետաքրքրական յայտարարութեան յաջորդեց շարք մը անուններ, որոնցմէ շատեր սեւամորթներ են եւ ականաւոր անձնաւորութիւններ Աֆրիկօ-ամերիկեան շրջանակներուն մէջ: Արդարեւ, առատ թեկնածուներու երեւոյթը մեծապէս պիտի հեշտացնէ Պայտընի գործընթացը: Ցանկին մէջ են ծերակուտական Քամելա Հարրիսը, սեւամորթ մը Գալիֆորնիայէն, ազգային անվտանգութեան նախկին խորհրդական Սիւզան Ռայսը, Ճեօրճիա նահանգի կառավարիչի նախկին թեկնածու՝ Սթեյսի Ապրամսը, Աթլանթայի քաղաքապետուհի Քէյշա Լանս Պաթօմզը, Ներկայացուցիչներու Տան անդամներ, Վալ Տէմինկզը (Ֆլորիտա) եւ Քարէ Պասը (Լոս Անճելըս):*

*Նշենք նաեւ որ Քամելա Հարրիսը՝ շարունակաբար յիշատակուած է որպէս հաւանական ընտրեալը: Ան պարբերաբար գնահատուած է որպէս նահանգի անուանի դատախազ եւ քարոզարշաւ մղող կոշտ անձնաւորութիւն:*

*Միւս կողմէ հաւանական թեկնածու Սիւզան Ռայսը՝ կարեւոր փորձառութիւն ձեռք բերած է Օպամայի օրով, յատկապէս արտաքին քաղաքականութեան ծիրէն ներս: Սակայն, տխուր յիշատակներ ունի Պէնկազիէն (Լիպիա), 2012ին այդտեղի ունեցած ամերիկեան դիւանագիտութեան արձանագրած ձախողութեան հետեւանքով:*

*Ցամենայն դէպս, դրական կանխագուշակումներ կան Հարրիսի ընտրարշաւի թեկնածութեան յաջողութեան շուրջ: Սեւամորթ կնոջ մը թեկնածու նշանակուիլը՝ մեծ մղում մը պիտի հանդիսանայ Պայտընի ընտրարշաւի գործընթացին: Նաեւ սեւամորթ ընտրողներուն համար ալ նոր տեսալականի մը յաջողութիւնը...:*

## «Ուաշինկթըն Փոստի» Կոշտ Քննադատութիւնը՝ Ատրպէյճանի Բռնապետին

*Ամերիկեան հեղինակաւոր* The Washington Post *թերթը կոշտ քննադատած է Ատրպէյճանի առաջնորդը, որակելով զինք անզուսպ բռնապետ, որու գործողութիւնները սեփական ընդդիմախօսներուն դէմ մտահոգիչ պէտք է ըլլան բոլորին համար:*

*«Իլհամ Ալիեւը ափերէն դուրս եկած է», - գրած է խմբագրականը, անմիջապէս յիշեցնելով, որ մինչ այդ ալ Ատրպէյճանի նախագահը առանձնապէս բարեացակամ չէ եղած անկախ լրագրողներու կամ ընդդիմախօսներու հանդէպ: «Փետրուարեան խորհրդարանական ընտրութիւններէն յետոյ միջազգային դիտորդները արձանագրած էին իրական քաղաքական մրցակցութեան լիակատար բացակայութիւն», - կը փաստէ* The Washington Post*-ը շարունակելով. - «Հիմա ալ «Քորոնա» ժահրի համաճարակի, նաւթի գնանկման ու Հայաստանի հետ լարուածութեան ֆոնին պարոն Ալիեւը յանկարծ բացայայտած է թշնամիներու «հինգերորդ շարասիւնը»՝ ի դէմս ընդդիմութեան, ու սկսած են զանոնք բանտերը նետել»:*

*«Ալիեւի զայրոյթի նոպաները կը սպառնան հողին հաւասարեցնել Ատրպէյճանի անկախ քաղաքական ուժերու վերջին մնացորդները», - կը զգուշացնէ* The Washington Post*-ը՝ մանրամասն պատմելով ընթերցողին, թէ ինչպէս դեռ մարտին Ատրպէյճանի առաջնորդը հրապարակաւ խոստացած էր պայքարիլ «Քորոնա» ժահրի համաճարակի դէմ եւ այդ համաթեքսթում խօսիլ «դուրսի ֆինանսաւորումով աշխատող ներքին թշնամիներու» մասին, որոնց «մեկուսացումը դարձած է պատմական անհրաժեշտութիւն»:*

*Ամերիկեան պարբերականը կը փաստէ, որ այս ելոյթէն յետոյ Յուլիս 12-ին սկսաւ հայ-ատրպէյճանական բախումը, որ կողմերու միջեւ առաջին ընդհարումն էր 2016 թուականէն ի վեր. - «Զոհուեցաւ 11 Ատրպէյճանցի զինուորական, անոնց կարգին՝ մէկ զօրավար, եւ մէկ քաղաքացիական անձ, որմէ ետք Պաքուի մէջ բանակի պաշտպանութեան նուիրուած ցոյց սկսաւ: Խումբ մը ցուցարարներ կարճ ժամանակով ներխուժած էին խորհրդարան, մինչ ոստիկանութիւնը անոնց դուրս կը հանէր, զայրացած ամբոխը նաեւ քանի մը ոստիկանական ինքնաշարժ շրջած էր: Ալիեւ այս ցոյցը օգտագործեց որպէս պատրուակ՝ «հինգերորդ շարասիւնը» հետապնդելու համար», - կը գրէ* The Washington Post*-ը, ընդգծելով, որ միջադէպի յաջորդ օրը երկարաշունչ ելոյթով Ալիեւ յարձակեցաւ Ատրպէյճանի ամենամեծ ընդդիմադիր ուժի՝ «Ժողովրդական ճակատ»-ին վրայ:*

*Ամերիկեան պարբերականը կը յիշեցնէ, որ լարուած այդ օրերուն, ընդդիմադիր ուժի առաջնորդ Ալի Քերիմլին ելոյթ ունեցած էր ի օգուտ զինուած ուժերուն ու յայտարարած, որ «մենք կանգնած ենք մեր պետութեան ու բանակի կողքին»: «Ատրպէյճանի նախագահի համար, սակայն, այս խօսքերը ոչ մէկ նշանակութիւն ունին», - կը փաստէ* The Washington Post*-ը շարունակելով - «Ալիեւը թիրախաւորեց ընդդիմադիրներուն, յայտարարեց, թէ «պէտք է վերջ դնել հինգերորդ շարասիւնին», խոստացաւ երթալ կուսակցութեան «կեղտոտ ու կաշառակեր առաջնորդներու, վախկոտներու ու դասալիքներու ետեւէն»:*

*«Աւելին, Ալիեւը պնդած էր, թէ ընդդիմադիր կուսակցութիւնը «հայերէն վատ է», - կը գրէ խմբագրականը ու կը փաստէ, որ առաջնորդի այդ ելոյթէն յետոյ Ատրպէյճանի անվտանգութեան ուժերը սկսան ձերբակալել ընդդիմադիր կուսակցութեան անդամներուն ու աջակիցներուն:*

*Ըստ* The Washington Post*-ի աղբիւրներուն, այս պահի դրութեամբ՝ Ալիեւի վարչակազմը ազատագրկած է առնուազն 120 մարդ, որոնց կարգին՝ ընդդիմադիր կուսակցութեան առաջնորդներ ու լրագրողներ կան: Շարք մը իրաւապաշտպան կազմակերպութիւններ ու կառոյցներ դատապարտած են ընդդիմութեան դէմ բռնաճնշումներու հերթական այս ալիքը:*

*«Երկաթեայ բռունցքով ընդդիմախօսները ոչնչացնելու Ալիեւի քաղաքականութիւնը կը հակասէ ժողովրդավարութեան, եւ ճիշդ այդ է պատճառը, որ այս անզուսպ բռնապետի գործողութիւնները պէտք է մտահոգութեան առարկայ դառնան իւրաքանչիւրի համար», - եզրափակած է* The Washington Post*-ի խմբագրականը:*

## Լիբանանի Արտաքին Գործոց Նախարարը Հրաժարեցաւ

*Լիբանանի արտաքին գործոց նախարարը Նասիֆ Հիթթի իր հրաժարականը ներկայացնելով ըսաւ թէ երկիրը ձախողած պետութեան մը վտանգին առջեւ կը գտնուի, իսկ եթէ Լիբանանի ժողովուրդի գերագոյն շահերուն ի խնդիր միասնական դիրքաւորում եւ փրկութիւն չ'իրագործուի, այդ պարագային Աստուած չընէ նաւը՝ պիտի ծովամոյն դառնայ, իր ուղեւորներով միասին:*

*Վարչապետ Հասսան Տիապի ուղղուած իր նամակին մէջ Նասիֆ Հիթթին ուժգնօրէն քննադատեց Հըզպալլահ կուսակցութիւնը, որուն աջակցութիւնը կը վայելէ վարչապետ Տիապ: Ան նշեց նաեւ որ Լիբանան սահանքի մէջ է եւ կ'ուղեւորուի դէպի ձախողած պետութիւն: Միաժամանակ ան կոչ ուղղեց Լիբանանին՝ զօրացնելու իր կապերը արաբական համանյքին եւ լիովին վերափոխուի իր արաբական շրջապատին մէջ:*

## Կը Հաւատանք Լուռ Մեծամասնութեան Ազգասիրութեան



ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

*Հայաստանի ներքին կեանքին նոյնիսկ պարզ հետեւող մը պիտի նշմարէ յստակ բեկում մը Նախա-Յուլիսեան եւ Յուլիսեան շրջաններուն միջեւ:*

*Նախա-Յուլիսեան շրջանին մամուլի խորագիրները լեցուն էին իշխանութեան հանդէպ կծու եւ յաճախ անտեղի ու չափազանցուած քննադատութիւններով: Իսկ Յուլիսեան ճակատամարտներու շրջանին այս բոլորը յանկարծ մեղմացան:*

*Պատճառը՝ 12 Յուլիսէն ի վեր Ատրպէյճանի նախաձեռնած յարձակումներն էին Տաւուշի ուղութեամբ: Տրամաբանական երեւոյթ է, որ արտաքին թշնամիի վտանգին դիմաց, բնականօրէն յառաջանայ ներքին թշնամութիւնները մեղմացնելու ու ժամանակաւորապէս մէկդի դնելու գիտակցութիւնը: Երբ արտաքին թշնամին կը սպառնայ մեր հաւաքական կեանքին ու ազատութեան, անհատական ազատութիւնները պէտք է մէկդի դրուին գէթ մինչեւ արտաքին վտանգի չքացումը:*

*Մէկ կողմէ արտաքին թշնամիին տրուած արժանի պատասխան հարուածը եւ միւս կողմէ ներքին լարուածութեան թեթեւացումը մեզի պարգեւեցին հոգեկան որոշ գոհացում մը: Մենք ունեցանք պարզունակ ցանկութիւն մըն ալ, որ կատարուած իրողութիւնը արդեօ՞ք կրնայ առաջնորդել մտքերու լուսաւորման եւ իրար-հասկացողութեան մթնոլորտի մը գոյացման: Մենք գոհունակութեամբ կարդացինք իշխանամէտ թէ ընդիմադիր շրջանակներու կողմէ եղած յայտարարութիւնները, միասնական ուժերով անվերապահօրէն զօրավիգ կանգնելու բոլորիս պաշտպան հայկական բանակի քաջարի մարտիկներուն: Նոյնիսկ եթէ այս յայտարարութիւնները եղան հրապարակային պահանջարկի ստիպողութեան տակ երեւս ճերմկցնելու նպատակաւ, կարեւորը այն է, որ եղան:*

*2018-ի Թաւշեայ յեղափոխութեան իրագործումէն ի վեր, մեր փափաքն ու ակնկալութիւնը եղած է, որ այն չընկալուի լոկ որպէս իշխանափոխութեան իրագործում մը, այլ նաեւ հրահրիչը մտքերու լուսաւորման, բնաւորութիւններու բարելաւման, լայնախոհութեան եւ ազատ, բայց պատասխանատու մտածողութեան: Հաւաքականութիւն մը կը զարգանայ կամ կը փլուզուի, ոչ այնքան արտաքին ուժերու պատճառաւ, որքան ներքին ուժերու կառուցողական կամ քանդիչ գործունէութեամբ:*

*Մենք կը հաւատանք լուռ մեծամասնութեան բնածին բարութեան եւ ազգասիրութեան: Եւ Թաւշեայ յեղափոխութեան յաջողութիւնը եկաւ ապացուցելու, որ երբ լուռ մեծամասնութիւնը կը բարձրաձայնէ, ապա պէտք է անսալ այդ ձայնին, որովհետեւ անիկա կը մարմնաւորէ այդ ժամանակամիջոցին ժողովուրդի հոգիէն, մտքէն ու սրտէն բխող հարազատ շունչը: Այդ շունչով տոգորուած բարձր մտածողութեան տէր մշակոյթի թէ քաղաքականութեան մարդը, երբ կ՚առաջնորդէ այդ մեծամասնութիւնը, ապա այդ հաւաքականութիւնը անպայմանօրէն կը յառաջդիմէ ու կը զարգանայ: Բայց երբ պատեհապաշտ առաջնորդներ կը խլեն այդ դիրքը, ապա փլուզումը անխուսափելի կը դառնայ:*

*Հայաստանի անկախութիւնէն ի վեր մենք ունեցանք երկիրը առաջնորդող չորս առաջին դէմքեր, յանձինս Լեւոն Տէր Պետրոսեանի, Ռոպերթ Քոչարեանի, Սերժ Սարգսեանի եւ Նիկոլ Փաշինեանի: Մեր համեստ կարծիքով, երբ ապագայ սերունդները ծանօթանան անկախութեան առաջին տասնամեակներու զարգացումներուն, հետեւեալ ընդհանրական պատկերացումը պիտի ունենան.*

*Լեւոն Տէր Պետրոսեանի իշխանութեան տարիներէն պիտի յատկանշուի Սովետական Միութեան փլուզման աւերակներուն ընդմէջէն Արցախի ազատագրումը:*

*Ռոպերթ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի իշխանութեան տարիներէն պիտի յատկանշուին Հոկտեմբեր 27-ն, Հայաստանի վաճառումը օտարին, Մարտ 1-ը եւ Ապրիլեան քառօրեայ պատերազմը:*

*Նիկոլ Փաշինեանի իշխանութեան տարիներէն պիտի յատկանշուին Թաւշեայ յեղափոխութիւնը եւ Յուլիսեան յաղթանակները:*

*Մեր փափաքն է, որ Նիկոլ Փաշինեանի իշխանութեան տարիները համալրուին ներքին թէ արտաքին ճակատներու վրայ նորանոր յաղթանակներով եւ ապագայ սերունդները հպարտ զգան, որ 2018-էն ի վեր Հայաստան թեւակոխեց հողահաւաքի եւ հայահաւաքի յարատեւ զարգացման ժամանակաշրջան մը:*

## Աւերիչ Պայթում Պէյրութի Մէջ

Շարունակուած էջ 1-էն

*րական ժողովուրդի ու հայկական համայնքի կարիքներու նկատմամբ.- «Հայաստանի Հանրապետութիւնն օգնութիւն ցուցաբերելու իր պատրաստակամութիւնն է յայտնել՝ այդ քաղաքին պատուհասած ողբերգութեան հետեւանքները յաղթահարելու գործում: Մենք ուժերի ներածի չափով աջակցութիւն ենք ցուցաբերելու Լիբանանի կառավարութեանը եւ տեղի հայ համայնքին», ըսաւ Հայաստանի վարչապետը:*

*Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն, Հինգշաբթի օր, կարճատեւ այցելութեամբ ժամանեց Պէյրութ, ուր հանդիպում ունեցաւ երկրի քաղաքական ղեկավարութեան հետ, անոնցմէ պահանջելով իրականացնել շուտափոյթ բարեփոխումներ: Դէպքի վայրը ստուգելէ ետք Մաքրոն խոստացաւ օգնութիւն փութալ Լիբանանի ժողովուրդին, առանց բաց չէք մը վստահելու կառավարութեան:*

*րին մէջ կորսուած հրշէջները: Պայթումի զոհերուն շարքին է նաեւ Փաղանգաւոր Կուսակցութեան պատասխանատու դէմքերէն Նիզար Նաճարեանը: Պէյրութի եւ արուարձաններու հիւանդանոցները գիշերուան ժամերուն լեցուեցան վիրաւորներով:*

*Պայթումին յաջորդեց հաւանական դրդապատճառ ներուն վերլուծութիւնը, ինչպէս մասնագէտներու եւ հասարակական գործիչներու, այնպէս ալ սովորական քաղաքայիններու մեկնաբանութեամբ, մանաւանդ ընկերային հաղորդակցութեանց յաւելուածներուն եւ կայքերուն վրայ:*

*Պայթումին մասին ճշգրիտ եւ վերջնական մանրամասնութիւններ գուցէ յստականան հետաքննութեան աւարտին, սակայն, երէկ գիշեր, քիմիական ոլորտի մասնա գէտներ շատ խօսեցան այն մասին, թէ պայթած մթերանոցը տարիներ շարունակ լեցուած էր դիւրավառ աւշակածին բորակատ (Ammonium nitrate) նիւթով, որ, տարիներէ*



Վիրաւոր քաղաքացիներ բժշկական օգնութիւն կը ստանան ՀԿԲՄ-ի դարմանատան մէջ

*Արաբական եւ այլ երկիրներէն սկսած է մարդասիրական օգնութիւն հասնիլ Լիբանան: Սակայն մայրաքաղաքի վերակառուցումը, ըստ նախնական գնահատականեպրոճ, կը կարօտի 10-15 միլիառ Տոլարի:*

*Բուն պայթումին եւ անոր յաջորդող իրադարձութիւններուն մասին Պէյրութի մեր քոյր օրկան՝ «Արարատ» օրաթերթը կը գրէ-.*

*«Միջադէպը տեղի ունեցաւ նաւահանգիստի տարածքին մէջ գտնուող 12-րդ մթերանոցին մէջ: Առաջին, աւելի թեթեւ պայթումին եւ հրդեհին յաջորդած երկրորդ պայթումին ձայնը լսուեցաւ ոչ միայն Լիբանանի գրեթէ ամբողջ տարածքին, այլ նոյնիսկ Կիպրոսի մէջ: Նախնական տուեալներով, պայթումը տեղի ունեցած է մինչ հրշէջներ կը փորձէին մարել մթերանոցին շատ մօտ բռնկած հրդեհ մը: Քաղաքացիական պաշտպանութեան, Կարմիր Խաչի եւ այլ կազմակերպութիւններու շտապ օգնութեան խմբակները փութացին միջադէպի բեմավայր, ուր աւերուած տարածքէն դուրս բերին զոհերուն մարմինները, տեղւոյն վրայ դարմանեցին կամ հիւանդանոց փոխադրեցին վիրաւորները եւ փորձեցին գտնել պայթումի վայիվեր ըլլալով անտեսուած եւ մոռացութեան ենթարկուած, երկար տարիներ չէ արժանացած պատկան մարմիններու հսկողութեան եւ անվտանգութեան պահպանումի հետեւողական աշխատանքի, հետեւաբար իսկոյն բռնկած ու պայթած է տակաւին պղտոր պատճառով: Այս գլխաւոր վարկածին կողքին, շարք մը գործիչներ չբացառեցին իսրայէլեան օդային հարուածի մը հաւանականութիւնը, պնդելով, որ մթերանոցը լեցուած էր Հըզպալլային պատկանող զինամթերքով, իսկ ուրիշներ նշեցին, որ հրկիզուածն ու պայթածը տօնական օրերուն գործածուող ցուցադրական պայթուցիկներու հսկայ մթերանոցն էր:*

*Նաւահանգիստի ահաւոր պայթումէն ետք, առողջապահական մարմիններ եւ կառոյցներ քաղաքայիններուն կոչ ուղղեցին մնալու փակ վայրերու մէջ եւ շրջագայելու պարագային անպայման կրելու դիմակներ, նկատի առնելով հրկիզուած նիւթերուն թունաւոր բնոյթը:*

*Վարչապետ Հասսան Տիապ քոյր եւ բարեկամ պետութիւններուն կոչ ուղղեց այս դժուարին օրերուն առանձին չձգելու լիբանանցիները եւ իսկոյն անոնց օգնութեան փութալու:*

www.massispost.com
Daily News Updates

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# Պարգեւատրուած «Արարատ» Օրաթերթի Տնօրէնուհի Անի Սարաֆեան Եփրեմեանը





*Հովանաւորութեամբ Խմբագիրներու սենտիքային, Երեքշաբթի, 28 Յուլիս 2020-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Լիբանանի մէջ Ոսկերիչներու եւ ոսկեգործներու արդիւնաբերութեան սենտիքան պարգեւատրեց «Արարատ» օրաթերթի պատասխանատու տնօրէնուհի Անի Սարաֆեան Եփրեմեանը, Խմբագիրներու սենտիքայի ժողովներու Դահլիճին մէջ, Հազմիէ:*

*Հանդիսութեան ներկայ էին նախկին երեսփոխան, ՍԴՀԿ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Սեպուհ Գալփաքեան, ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկ. Ալեքսան Քէօշկէրեան, Լիբանանեան Ուժեր կուսակցութեան Նախագահ Սամիր Ժաաժահի ներկայացուցիչ Ալան Նասրաուի, ՀԿՄԲ-ի ատենապետ Արամ Մալեան, նախկին նախարար Ռիշար Գույումճեան, ՀՀ դեսպանութեան մշակութային կցորդ Դաւիթ Ալավերտեան, գերապատիւ հայր Սեպուհ Վրդ. Կարապետեան, «Արարատ» օրաթերթի անձնակազմը:*

*Բացման խօսքով հանդէս եկաւ լիբանանեան ֆիլմաշխարհի նշանաւոր բեմադրիչ Գարմէն Լապաքի, որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ըսաւ, որ այս արտակարգ պայմաններուն մէջ հաւաքուած ենք պարգեւատրելու անձ մը, որ լիբանանահայ մշակութային կեանքին մէջ ունի իր գերակշիռ դերը, ըլլալով Նոր Սերունդ Մշակութային Միութեան երկարամեայ ատենապետուհին, տաղանդաւոր ասմունքող եւ «Արարատ» թերթի պատասխանատու տնօրէնուհին՝ Անի Եփրեմեանը:*

*Խմբագիրներու սենտիքան ըլլալով այն ամբիոնը, որ կ՛արտայայտէ բոլոր լիբանանցիներուն ազատ կարծիքը, յստակ գաղափարը եւ անկեղծ խօսքը, սենտիքայի նախագահ Ժոզէֆ Քոսէյֆի մեծ պատիւ համարեց հովանաւորել այս պարգեւատրումը եւ իր խօսքին մէջ ըսաւ, որ «Հայաստանը չմեռաւ, որովհետեւ հայ ազգը ողջ է, կը կերտէ իր ճակատագիրը եւ երբեք չի յանձնուիր: Հայ ժողովուրդը յաղթանակեց, որովհետեւ պահեց իր լեզուն, իր աւանդոյթը, սովորութիւնները եւ իր կեանքի մշակոյթը. պահեց իր գրիչով, իր փետուրով, իր արհեստով ու արուեստով: Հայ ժողովուրդը պնդեց կերտել իր գոյութիւնը, հաստատել իր ներկայութիւնը:*

*Ան աշխարհը ապշեցուց ոտքի կանգնելու եւ ինքնակերտումի իր կարողութեամբ»: Քոսէյֆի ըսաւ, որ այսօրուան պարգեւատրեալը այն հերոսներու շարքէն է, որոնք մահին ընդմէջէն կեանք մշակեցին, խաւարէն լոյս ծնունդ տուին, ծուռումուռ տողերու վրայ ուղիղ գրեցին: Ան աւելցուց, որ Եփրեմեան ծառայեց արդար խօսքով եւ խօսքի իրաւունքով, եւ իր տնօրինած «Արարատ» օրաթերթով կը հետեւի լիբանանեան հայրենիքի բոլոր հոգերուն, ճիւղաւորումներուն եւ հանգոյցներուն: Քոսէյֆի իր խօսքը աւարտեց ըսելով, որ հայերը հաւատարիմ են Լիբանանին, եւ մենք որպէս Խմբագիրներու սենտիքա հպարտ ենք Անի Եփրեմեանով, որ իր ձիրքերը դրած է ի սպաս իր ծննդավայր հայրենիքին եւ որ արժանի է այս իւրայատուկ պարգեւատրման, ուստի կը շնորհաւորենք զինք ու կը մաղթենք նորանոր յաջողութիւններ:*

*Ոսկերիչներու եւ ոսկեգործներու արդիւնաբերութեան սենտիքայի Նախագահ Պօղոս Քիւրտեան նշեց, որ այս պարգեւատրումը կու գայ որպէս երախտագիտութեան արտայայտութիւն «Արարատ» օրաթերթի տնօրէնութեան, որ միշտ եղած է Ոսկերիչներու սենտիքայի կողքին եւ բարձրաձայնած է անոր խօսքը եւ իր մամուլին միջոցով սենտիքային ձայնը հասցուցած է բոլոր հայերուն: Ան պատիւ համարեց ադամանդեայ վահանը առ ի գնահատանք եւ շնորհակալութիւն յանձնել տիկին Եփրեմեանին:*

*Ապա, պարգեւատրեալ Անի Սարաֆեան Եփրեմեան խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց պարոնայք Պօղոս Քիւրտեանին եւ Ժոզէֆ Քոսէյֆիին, եւ իրեն համար պատիւ համարեց այս պարգեւատրումը: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց Լիբանան հայրենիքին, մայրիներու երկրին հանդէպ, որ գրկած է իր բոլոր զաւակները, ընդ որում հայկական համայնքը, եւ անոնց տուած է քաղաքացիական բոլոր իրաւունքները եւ տանտէր համարած է զանոնք:*

*«Արարատ»ի տնօրէնուհին ըսաւ, որ Հնչակեան կուսակցութեան դրօշին տակ լոյս տեսնող օրաթերթը իր հիմնադրութեան թուականէն՝ 1937-էն մինչեւ այսօր կը շարունակէ իր առաքելութիւնը, հակառակ բոլոր տնտեսական, ընկերային եւ ապահովական մարտահրաւէրներուն եւ դժուարութիւններուն: Ան ապա խօսեցաւ «Արարատ»ի մասին, որ կ՛ընդգրկէ երիտասարդ, կարող եւ աշխոյժ աշխատակազմ, պատրաստելով գիտական, տնտեսական, կնոջական, մշակութային, մարզական եւ քաղաքական էջեր: Այս առիթով ան շնորհակալութիւն յայտնեց «Արարատ»ի իւրաքանչիւր աշխատակիցի, խոստանալով շարունակել առաքելութիւնը եւ միասնաբար լոյս սփռել այսօրուան խաւարին մէջ:*

*Եփրեմեան դարձեալ շնորհակալութիւն յայտնեց այս հանդիսութեան կազմակերպիչներուն եւ մաղթեց որ մեր սիրելի Լիբանանը թօթափէ իր վրայէն փոշիները եւ դարձեալ ոտքի կանգնի, որպէսզի անգամ մը եւս ըլլայ միտքի եւ լոյսի փարոս եւ օրինակելի երկիր մը՝ արաբական աշխարհին մէջ: Ան Խմբագիրներու սենտիքայի Նախագահին նուիրեց «Արարատ» քոնեակ, ըսելով՝ որ այդ կը խորհրդանշէ Արարատ լեռը եւ կը կրէ օրաթերթին անունը:*

*Նախարար Ռիշար Գույումճեան խօսք առնելով ըսաւ, որ հայերը պատահմամբ չէ որ Լիբանան եկան, այլ եկանք ու ապրեցանք հոս, որովհետեւ Լիբանան ազատութեան երկիր է, ուր կերտեցինք մեր եկեղեցիներն ու դպրոցները, Լիբանանը ըլլալով պահապանը մեր գոյութեան եւ հաւատքին: Ան նշեց, որ «Արարատ» օրաթերթին եւ Հնչակեան կուսակցութեան դերն ալ պատահական չեն Լիբանանի մէջ, որովհետեւ հայերը երբ սփիւռք եկան, իրենց հետ բերին կուսակցութիւնները, լեզուն, մշակոյթը եւ հոս շարունակեցինք մեր քաղաքակրթութեան ուղեւորութիւնը:*

*«Արարատ»ն ալ, իր կարգին, հիմնական դեր խաղցաւ պահելու հայոց լեզուն, հայկական աւանդութիւնը եւ ժառանգութիւնը: Գույումճեան շնորհաւորեց Անի Եփրեմեանը եւ կորով ու յաջողութիւն մաղթեց անոր:*

*Աւարտին ներկաները հիւրասիրուեցան հայկական քոնեակով:*

*«ԱՐԱՐԱՏ»*

# Լեռնային Ղարաբաղը Պէտք է Ունենայ Միջազգային Կարգավիճակ եւ Մնայ Հայկական. Ֆրանք Փալոն

*Միացեալ Նահանգներու Գոնկրեսի հայկական հարցերով յանձնախումբը վճռական պիտի անդրադառնայ հայ-ատրպէյճանական հակամարտութեան, փորձելով հասնիլ այնպիսի լուծման, որ Լեռնային Ղարաբաղը միջազգային կարգավիճակ ստանայ եւ մնայ հայկական: «Արմէնփրես»-ի հաղորդումով՝ այս մասին ըսաւ Գոնկրեսի հայկական հարցերով յանձնախումբի համանախագահ՝ Ֆրանք Փալոն՝ ՀՀ ազգային ժողովի Հայաստան-ԱՄՆ խորհրդարանական բարեկամական խումբի եւ Գոնկրեսի հայկական հարցերով յանձնախումբի միջեւ տեսակապի միջոցով փոխըմբռնման յուշագրի ստորագրութեան:*

*«Գոնկրեսի հայկական հարցերու յանձնախումբը պիտի շարունակէ աշխատիլ տարածաշրջանին մէջ տեւական խաղաղութեան հաստատման ուղղութեամբ: Ես գիտեմ, որ հիմա լարուած շրջան է, եւ Ատրպէյճանի կողմէն յարձակում տեղի կ՛ունենայ: Եւ մենք գիտենք, որ պէտք է ունենանք այնպիսի լուծում, որու պայմաններուն մէջ Լեռնային Ղարաբաղը ունենայ միջազգային կարգավիճակ եւ մնայ հայկական»,-Ըսաւ Փալոն:*

*Գոնկրեսականը շեշտեց, որ իրենք վճռական են այդ հարցերուն անդրադառնալու մէջ, փորձելով այդ հարցերը լուծել եւ հաւատարիմ մնալ յանձնախումբի եւ Հայաստան-ԱՄՆ բարեկամական խումբի միջեւ յարաբերութիւնները ամրապնդելու նպատակին:*

# Սահմանադրական Դատարանի

Շարունակուած էջ 2-էն

*մանքները) լուրջ հիմքեր էր տալիս նման վտանգի անհանգստութիւն ունենալու համար: Իսկ նրա խօսելուց (արած յայտարարութիւնից) յետոյ անհանգստութեան այդ զգացումը վերածուեց աներկբայ համոզմունքի:*

*Սակայն, միայն Վ. Աւետիսեանի հարցը լուծելով՝ ամէն ինչ չի աւարտւում:*

*Դեռ ՍԴ դատաւորի թեկնածու պէտք է առաջադրեն նաեւ Հանրապետութեան Նախագահ Արմէն Սարգսեանը եւ Դատաւորների ընդհանուր ժողովը: Ա. Սարգսեանի առաջադրած մի թեկնածուի մասին յիշում ենք՝ նոյնքան անընդունելի, մեծամիտ մի կերպար, որին, իրաւացիօրէն, մերժեց ԱԺ-ն:*

*Պատկերաւոր ասած՝ իշխանութիւնը քայլում է սայրի կամ մազէ կամրջի վրայով. ՍԴ դատաւորների թափուր տեղերի համալրումը պէտք է արուի գերճշգրիտ, այլապէս դրա հետեւանքները կարող են ճակատագրական լինել ինչպէս իշխանութեան, այնպէս էլ՝ ողջ երկրի համար: Խնդիրը պէտք է լուծել այս իրողութեան պարզ գիտակցմամբ:*

*«Ի ԼՈՒՐ»*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net 626-797-7680

# Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Թելադրութիւնները Հայաստանի Հանրակրթութեան Չափորոշիչներուն Մասին

## (Ներկայացուած ՀՀ Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնամարզութեան Նախարարին)

Նկատի ունենալով որ Հայաստանի Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնամարզութեան նախարարութիւնը նախաձեռնած է Հայաստանի հանրային կրթութեան համակարգին մէջ որակական փոփոխութիւններ իրականացնելու գործընթացին, որուն առնչուող ազգային ինքնութեան, հոգեւոր եւ մշակութային արժէքներու եւ պատմական ժառանգութեան վերաբերեալ ծրագրային փոփոխութիւնները իրենց հետագայ լրջագոյն հետեւանքները կրնան ունենալ ինչպէս հայրենի, նոյնպէս սփիւռքի հայութեան համար, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, իր ազգային առաքելութեան պատասխանատուութենէն բխող յանձնառութեամբ եւ ազգապահպանութեան եւ հայ ժողովուրդի բարօրութեան ուղղուած իր նախաձեռնութիւններուն էապէս առնչուող կրթական գործունէութիւններու ծիրէն ներս, ուշադրութեամբ կը հետեւի յառաջ տարուող աշխատանքներուն:

Համոզուած ենք, որ այդ աշխատանքները ուղղուած են կազմաւորուող սերունդները ինքնութեան գիտակցութեամբ, ազգային, մարդկային, հասարակական, հոգեւոր եւ մշակութային արժէքներու եւ աւանդութիւններու ընկալումով դաստիարակելու նպատակին, միաժամանակ անոնց մօտ մշակելով անհրաժեշտ հմտութիւններ եւ կարողութիւններ, որպէսզի անոնք յաջողին հասնիլ իրենց անհատական նպատակներուն, իրենց ներդրումը բերելով ազգի եւ հայրենիքի ընկերային, տնտեսական, քաղաքական զարգացումին եւ բարգաւաճումին:

Մենք զիրար համալրող այս երկու նպատակներու անքակտելի համատեղումը հիմք նկատելով բոլոր բնագաւառներու մէջ հայրենիքի զարգացման եւ բարգաւաճումին ուղղուած ազգային կրթութեան արդիւնաւորութեան, ուսումնասիրած ենք առաջադրուած չափորոշիչները եւ ուսումնական տարբեր հանգրուաններու շրջանաւարտներէն ակնկալուող ուսումնառութեան վերջնական արդիւնքները:

Կը հաւատանք, որ ծրագրային փուլի մէջ գտնուող այս աշխատանքը, կարիքը ունի երկարաշունչ սերտողութեան եւ մասնագիտական խումբերու համադրուած ներդրումին, որոնք բնականաբար պէտք է ներառեն մեր ազգային հարուստ ժառանգութիւնը կազմող պատմական, հոգեւոր ու մշակութային դարաւոր հարստութիւնը եւ մանկավարժական փորձառութիւնը, որոնք դարեր շարունակ հիմնատարրերը հանդիսացած են մեր ազգային կրթութեան:

Հետեւաբար, առաջադրուած չափորոշիչներուն առնչուող ուսումնական ծրագիրներու մշակումին վերաբերեալ կ'ուզենք ներկայացնել մեր թելադրութիւնները եւ միտքերը, ընդգծելով յատկապէս մեզի համար առաջնահերթ ազգային ինքնութեան գիտակցութեան, հայրենասիրութեան եւ հոգեւոր ու բարոյական արժէքներու մշակումին համար անհրաժեշտ նախադրեալները:

Նկատի ունինք մասնաւորաբար հայրենի պետութեան դերին կապակցութեամբ ընդհանրապէս հայ ժողովուրդի եւ մասնաւորաբար սփիւռքահայ համայնքներու ընկալումը եւ անկախ Հայրենիքի իրականութենէն բխող կրթական համակարգէն սպասուած արդիւնքներու կարեւորութիւնը, իբր սփիւռքի հայութեան համար ազգապահպանումի երաշխիք եւ հայրենադարձութեան գործօն:

Չափորոշիչներու եւ ուսումնառութեան վերջնական արդիւնքներուն վերաբերեալ առաջադրուած ծրագրային փոփոխութիւններու ծիրէն ներս, նախատեսուած են դասանիւթերու զեղչումներ եւ վերադասաւորումներ, որոնք նիւթ դարձած են հանրային քննարկումներու, արծարծելով նաեւ տարբեր մտահոգութիւններ այդ փոփոխութիւններուն հիմք ծառայող տրամաբանութեան, կրթական մօտեցումներուն եւ համաշխարհային նպատակներուն շուրջ: Այս երեւոյթը աւելի եւս կը շեշտէ մեր համոզումը, թէ անհրաժեշտ է որ դասանիւթերու ընտրութեան, համապատասխան տարիքային հանգրուաններու եւ դասաժամերու բաշխումին եւ ուսուցման միջոցառումներու որդեգրումի եւ արհեստավարժական վերապատրաստման աշխատանքները յառաջ տարուին մասնագէտներու լայն ներգրաւուածութեամբ եւ համագործակցութեամբ, երկարաձգելով սերտողութեան եւ քննարկումներու համար որոշուած պայմանաժամը:

Հարցը կը վերաբերի նախապէս հանրակրթական հաստատութիւններուն մէջ առանձին դասաւանդուող նիւթերու, որոնց շարքին Հայ Եկեղեցիի Պատմութիւն, Հայրենագիտութիւն, Հասարակութիւն, հասարակական գիտութիւններ բնագաւառները, որոնք նոր չափորոշիչներուն համաձայն, համադրուած ձեւով պիտի դասաւանդուին Հայաստանի եւ հայ ժողովուրդի պատմութիւնը, մշակոյթը եւ կրօնը, աշխարհագրութիւնը եւ հասարակական կեանքի ոլորտները ներկայացնող նախակրթարանի հանգրուանին մէկ, իսկ երկրորդականի հանգրուանին քանի մը առանձին դասանիւթերով:

Մենք մեր տասնամեակներու կրթական փորձառութեամբ, յատկապէս սփիւռքի մէջ, խորապէս համոզուած ենք որ առաջնահերթութիւն պէտք է ունենան հայրենագիտական նիւթերը: Կրթական համակարգը կառուցուած պէտք է ըլլայ մատաղ սերունդը ազգասիրութեան, հայրենասիրութեան, աւանդապահութեան եւ հոգեւոր ու բարոյական արժէքներու ըմբռնումով դաստիարակելու տեսլականով: Դպրոցը հետեւողական ճիգերով եւ համապատասխան ծրագիրով, ազգային պետականութեան, մէկ ժողովուրդի պատկանելութեան, հողի եւ հայրենիքի սրբութեան խորագոյն հասկացողութիւնները, պէտք է դրոշմէ աշակերտներու միտքերուն եւ հոգիներուն մէջ, որպէսզի անոնք կազմաւորուին, քաջածանօթ մեր պատմութեան, քաղաքացիական պարտականութեան եւ հայրենիքի հանդէպ նուիրումի զօրաւոր զգացումներով, պատրաստ, ինքնութեան գիտակցութեամբ հպարտ, իրենց արժանաւոր տեղը գրաւելու համաշխարհային իրականութեան մէջ, որպէս Հայութեան ինքնուրոյն մշակոյթին եւ պատմական ժառանգութեան կրողներ:

Երկրորդը կը վերաբերի Հայ Եկեղեցիի Պատմութեան դասանիւթին: Կարգ մը նիւթերու պարագային համադրուած դասաւանդումի դրութիւնը անշուշտ ունի իր կրթական առաւելութիւնները, նիւթերու համակարգուած, համապարփակ եւ միահիւսուած դասաւանդումին առումով, ինչ որ յաւելեալ ճկունութիւն եւ ստեղծարար մօտեցումներու կարելիութիւն կ'ընձեռէ դպրոցներուն եւ ուսուցիչներուն, առիթ տալով նաեւ ուսանողներուն, կողմնորոշուելու իրենց հետաքրքրութիւններու գիծով:

Բայց եւ այնպէս մենք համոզուած ենք, որ նկատի պէտք է ունենալ Հայ Առաքելական եկեղեցիի առանձնայատկութիւնը որպէս հայ ժողովուրդի ազգային եկեղեցին: Մանաւանդ, որ Հայ Եկեղեցւոյ ազգային բացառիկ առաքելութիւնը հայ ժողովուրդի հոգեւոր կեանքին, անոր ազգային մշակոյթին եւ ինքնութեան պահպանումին գիծով, յստակօրէն ձեւակերպուած է Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան մէջ:

Գնահատելով նաեւ, հայ ժողովուրդի ինքնագիտակցութեան մէջ իբր ազգային եկեղեցի անոր առկայութիւնը որպէս առանցքային բաղադրիչ, նաեւ աւելի քան 1700 տարիներու անոր շարունակուող պատմական դերը Հայ ժողովուրդի կեանքին մէջ, Հայ Եկեղեցիի Պատմութեան դասաւանդումը, որպէս առանձին նիւթ, հոգեբանականօրէն եւ խորհրդանշականօրէն յաւելեալ կշիռ կ'ընձեռէ անոր: Կ'ընդծենք, թէ խօսքը չի վերաբերիր կրօնի դասաւանդութեան, այլ Հայ Եկեղեցիի պատմական դերին, որուն դասաւանդումը հանրային դպրոցներուն մէջ, համոզուած ենք, մեծապէս սատար հանդիսացած է հայ աշակերտներու ինքնութեան գիտակցութեան մշակումին:

Կ'ուզենք մատնանշել, որ մենք յստակօրէն կը զատորոշենք Հայ Առաքելական Եկեղեցիի դերը որպէս ազգային կառոյց եւ հայ ինքնութեան բաղադրիչ, հանրային կեանքէն ներս անոր հոգեւոր դերի եւ հաւատքի քարոզչութեան հասկացողութենէն: Մենք կողմնակից ենք մեր անկախ պետականութեան իրականութեան մէջ կրօնք եւ պետութիւն տարանջատումի սկզբունքին: Նաեւ նախանձախնդիր, որ Հայ Եկեղեցին իր հոգեւոր գործունէութիւնը իրականացնէ առաւելագոյն արդիւնաւորութեամբ, ժամանակի եւ սերունդներու փոխուող կարիքներուն եւ ակնկալութիւններուն հետ քայլ պահելով:

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին, ներկայիս, բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու եւ կրօնական կառոյցներու շարքին, կը դիմագրաւէ ժողովուրդի կեանքին մէջ իր ներկայութեան եւ հոգեւոր դերի արդիւնաւորութեան կապուած մարտահրաւէրներ եւ ինչպէս բազմամիլիոն հետեւորդներ ունեցող համաշխարհային միւս եկեղեցիները, հետամուտ պէտք է ըլլայ այդ ուղղութեամբ անհրաժեշտ բարեկարգումներու իրականացումին: Նոյն այդ հանգամանքով, ան նաեւ պէտք է վայելէ յատուկ առանձնաշնորհումներ:

Որդեգրուած չափորոշիչները կրնան փորձարկուած եւ կատարելագործուած ըլլալ շարք մը այլ երկիրներու կրթական կառոյցներու երկարամեայ փորձով եւ շարունակական բարեփոխումներով, սակայն իրենց ընդհանրական իւրայատկութիւններով տարբեր են մեր ժողովուրդի պատմական դարաւոր փորձառութեամբ կազմաւորուած ազգային արժէքներէն եւ ժառանգութենէն:

Հետեւաբար այդ չափորոշիչները եւ կրթական ծրագիրները, իրենց մշակումին մէջ կարիքը ունին յաւելեալ սերտողութեան եւ խոր վերլուծումի, որպէսզի անոնք համահունչ ըլլան մեր ժողովուրդի ազգային եւ կրօնական աւանդութիւններուն եւ ընդհանրական կենսափորձով կազմաւորուած աշխարհահայեացքներուն: Նամանաւանդ, անհրաժեշտ է որ անոնք պատշաճեցուած ըլլան մեր ժողովուրդի ու հայրենիքի յատուկ կարիքներուն, անցած պատմական ուղիին եւ սփիւռքի թէ հայրենիքի մէջ մեր ժողովուրդի դիմագրաւած մարտահրաւէրներուն:

Մեր ակնկալութիւնն է, որ Անկախ Հայաստանը, իր պետական համալրուած եւ ուժեղացուած կառոյցներով եւ մեր ազգային եկեղեցին ժողովուրդի կեանքին մէջ իր հոգեւոր դերի բարձրութեամբ, որպէս հիմնասիւները մեր ազգային ինքնութեան, անջատաբար, բայց եւ համախորհուրդ եւ ներդաշնակ գործակցութեամբ հանդէս գան իբրեւ մեր ժառանգութեան, մշակոյթի, պատմութեան եւ ազգային ինքնութեան պահպանութեան երաշխաւորներ:

Սփիւռքի տարածքին եւ հայրենիքի մէջ իր աւելի քան մէկ դարու գործունէութեան ընթացքին, Կրթութիւնը, որպէս ինքնութեան գիտակցութեան մշակումի, բարեկեցութեան եւ ազգապահպանումի միջոց, եղած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան առաքելութեան հիմնասիւներէն մին:

Միութեան ազգանուէր ծառայութիւնները, Ցեղասպանութենէն առաջ եւ մանաւանդ անոր յաջորդող տասնամեակներուն, վերապրած հայ ժողովուրդի գոյապայքարին ի խնդիր, ծանօթ են բոլորին, իր դպրոցներու լայնատարած ցանցով, մշակութային, մարզական, արուեստներու, մարդասիրական նախաձեռնութիւններու եւ համայնքային կեդրոններու աշխոյժ գործունէութիւններով, որոնք Արեւմտեան Սփիւռքի համայնքային կեանքի կազմակերպումին հիմնաքարերը հանդիսացած են:

Շար.ը էջ 17

# Massis Weekly

Volume 40, No. 30 Saturday, AUGUST 8, 2020

## Huge Explosion Rocks Beirut Port
## Damages and Casualties Reported in Armenian Neighborhoods



The explosion at Beirut port as seen from the sea



Volunteers and medics assisting injured victims of the blast at Armenian Educational Benevolent Union (AEBU) Community Medical Center in Hadjin

BEIRUT — A large blast has hit the Lebanese capital, Beirut, causing widespread damage and injuring many people, officials say. The whole city was shaken by the blast.

It is not yet clear what caused the explosion in the port area of the city. Video posted online showed a large mushroom cloud and destroyed buildings.

Hospitals are said to be overwhelmed by casualties.

Lebanon's health minister, Hamad Hasan, has spoken of many injuries and extensive damage.

Reuters news agency quotes sources as saying 137 bodies have been pulled from the wreckage. There are at list 5,000 injured.

President Michel Aoun said 2,750 tonnes of ammonium nitrate had been stored unsafely in a warehouse for six years.

He scheduled an urgent cabinet meeting for Wednesday, and said a two-week state of emergency should be declared.

The country will observe an official period of mourning for three days from Wednesday.

President Aoun also announced that the government would release 100 billion lira (£50.5m; $66m) of emergency funds.

"What we are witnessing is a huge catastrophe," the head of Lebanon's Red Cross George Kettani told local media. "There are victims and casualties everywhere."

In Armenian neighborhoods of Hadjin, Khalil Badaoui and Seifi in Beirut, the destruction is significant. there is preliminary information about the death of one Armenian , Nazar Najarian, the General Secretary of Lebanese Kataeb party and several injuries, mainly from glass crushing in houses.

The buildings of the Armenian embassy in Lebanon, Sahagian School and other community centers were partially damaged from the explosion.

## Consul General Baibourtian Met with SDHP Western US Executive Committee Representatives



GLENDALE – On July 31, the Consul General of the Republic of Armenia in Los Angeles, Ambassador Armen Baibourtian received the representatives of the Social Democrat Hunchakian Party Western US Executive Committee at the RA Consulate General.

During the meeting, issues of concern to the Armenian communities on the west coast of the United States were discussed in great length. Participants at the meeting delved into the recent events on the Armenian-Azerbaijani border, as well as provocations, atrocities and vandalism committed by Azerbaijani communities in different countries against Armenian communities.

Consul General Baibourtian and representatives of the SDHP emphasized that violence and provocations cannot take place in the United States or in any other country. They stressed that it is necessary to take all measures to prevent provocative actions by Azeris targeting Armenian communities all over the world.

## Armenian FM to Jerusalem Post: Israel Needs to Halt All Weapon Sales to Azerbaijan

JERUSALEM — Israeli weapons sold to Azerbaijan are used to target Armenian civilian infrastructure, and arms sales between the countries should be stopped immediately, Armenian Foreign Minister Zohrab Mnatsakanyan has told The Jerusalem Post.



In an interview in the midst of the ongoing conflict with Azerbaijan, Mnatsakanyan said that while Israeli-Armenian relations have improved in recent years – the Armenian president visited Israel in January – Israel's continued supply of advanced weaponry to Azerbaijan remains an outstanding issue for the countries.

In 2016, Azerbaijani President Ilham Aliyev revealed that his country has signed $5 billion worth of long-term contracts over the years to buy weapons and security equipment from Israel.

Following is the text of Zohrab Mnatsakanyan's interview with Jerusalem Post:

**Question: How did this recent round of violence break out? What do you think Azerbaijan is trying to achieve?**

Zohrab Mnatsakanyan: This recent July violence by Azerbaijan didn't happen in a vacuum. On the eve of the escalation Azerbaijan at the level of highest political-military leadership has been consistently voicing threats of war, territorial and historic claims against Armenia, coupled with very vocal dissatisfaction of the work of the international mediators – the OSCE Minsk Group Co-Chairs.

It was the second attempt of Azerbaijan to resolve Nagorno-Karabakh conflict exclusively on their terms. The recent escalation demonstrated that show of force by Azerbaijan and its perceived military

Continued on page 4

## Armenian Caucus Co-Chairs Send Letter to Library of Congress Urging Historically Accurate Characterization of Armenian Genocide



WASHINGTON D.C. – Today, the Co-Chairs of the Armenian Caucus, Reps. Adam Schiff (CA-28), Frank Pallone, Jr. (NJ-06), Jackie Speier (CA-14), and Gus Bilirakis (FL-14), sent a letter to Dr. Carla Hayden, the Librarian of Congress, urging the Library of Congress to reconsider its decision to decline changing the subject heading for the Armenian Genocide from "Armenian massacres, 1915-1923? to "Armenian Genocide, 1915-1923" and to standardize the use of the term, "Armenian Genocide" across other Library products and exhibits, including Congressional Research Service reports.

"The Library of Congress's role is not to conduct foreign policy or diplomacy. It is to serve as a center of research and knowledge for Congress, America, and the world. And in that capacity, the Library must be guided by principles of scholarship and truth, not by the haphazard application of geopolitical concerns," the Members wrote in their letter. "On that account, there is no serious historical debate about whether the extermination of the Armenians by the Ottoman Empire beginning in 1915 meets the criteria for genocide. The scholarly consensus around the Armenian Genocide is clear. And holdings of the Library of Congress itself are a clear testament to the overwhelming evidence of genocide, including many scholarly works on the subject as well as collections of contemporaneous witness and survivor accounts."

In 2019, the House and Senate both passed resolutions with strong bipartisan consensus to recognize and commemorate the Armenian Genocide.

"The resolutions leave no doubt about Congress's intention and views about the fact of the genocide. There is no possible basis for the Library of Congress, as an institution that exists within the legislative branch, not to follow suit," the letter continued. "It is both the proper thing to do and, more importantly, the historically and morally right thing to do. The Congress, at long last, has made clear we will not be party to genocide denial, and the Library must do the same."

## PM Nikol Pashinyan Hopes Armenia Will Overcome Coronavirus Crisis by September

YEREVAN - Prime Minister Nikol Pashinyan expressed hope last Thursday that Armenia will practically overcome its coronavirus crisis by September, citing a "substantial" drop in daily infections recorded by the health authorities over the last two weeks.

As of August 4, Armenia had 7,300 active [coronavirus] cases for the first time since June 11. There were 196 new infections and 511 recoveries. Total death toll reached 768 another 228 patients with coronavirus have died because of other diseases.

The Armenian Ministry of Health reported an average of 550-600 cases a day in the first half of July. The daily numbers of new cases exceeded 730 at one point in late June.

Pashinyan attributed the decreased numbers to a stricter enforcement of anti-epidemic rules set by his government and people's greater compliance with them. "We all must continue to follow the rules just as strictly no matter how uncomfortable and unpleasant they are for us," he said.

The prime minister urged Armenians to continue to wear mandatory face masks in all public spaces, practice social distancing and frequently wash hands. "We hope that each of you will take this responsibility and confront this challenge so that we can declare the end of the crisis in September," he said.

Deputy Prime Minister Tigran Avinyan told the Armenian parliament on July 14 that the government hopes to cut the daily number of new cases to roughly 140 by the beginning of September. He said this would allow the government to reopen the country's schools shut down by it in March.

The Ministry of Health spokeswoman, Alina Nikoghosian, described the latest figures as further proof of a continuing fall in the country's infection rates. She attributed it to an increased number of Armenians wearing mandatory face masks in all public spaces and following other anti-epidemic rules set by the government.

"We have been more vigilant during the last few months," Nikoghosian told RFE/RL's Armenian service. "I hope that this pace [of improvement] will continue."

## Armenia Bars Turkish Weapons Inspectors



YEREVAN (RFE/RL) -- Citing "unprecedented" security threats emanating from neighboring Turkey, Armenia on Wednesday banned Turkish officers from inspecting Armenian military bases and verifying Yerevan's compliance with an international arms control treaty.

It announced the decision as Turkey and Azerbaijan began joint military exercises in the wake of deadly hostilities on the Armenian-Azerbaijani border which heightened tensions in the Nagorno-Karabakh conflict zone.

Signed in 1990 and revised in 1999, the Treaty on Conventional Forces in Europe (CFE) places specific limits on the deployment of troops and heavy weapons from the Atlantic coast to Russia's Ural mountains. Armenia, Georgia and Azerbaijan signed it after gaining independence.

Signatories to the treaty are allowed to inspect each other's compliance with the arms ceilings through random visits to practically any military base. Military inspectors from Turkey and other NATO member states have regularly visited Armenia since the mid-1990s. The Armenian Defense Ministry had first sent a group of CFE inspectors to eastern Turkey in March 2010.

The Armenian Foreign Ministry said it informed the Organization for Security and Cooperation in Europe on Wednesday that Yerevan has decided to "suspend" Turkish inspections of its armed forces.

In a statement, the ministry attributed the move to Turkey's "unilateral support to Azerbaijan" and "unprecedented threats against Armenia" voiced following the border clashes that broke out on July 12. It also pointed to the Turkish-Azerbaijani war games, saying that they "further aggravate the situation" in the Karabakh conflict zone.

"Any [further] military inspection conducted on the territory of Armenia by Turkey … would adversely impact Armenia's security interests and may jeopardize the security of its population," read the statement. It indicated that weapons inspectors from other OSCE member states will be allowed to continue to visit Armenia.

Armenia and Turkey have carried out mutual on-site arms inspections despite not having diplomatic relations and an open border. Neither country has accused the other of violating the CFE.

By contrast, the Armenian and Azerbaijani militaries have never inspected each other in line with a gentlemen's agreement dating back to the 1990s. Yerevan and Baku have long traded accusations of exceeding arms quotas set by the Cold War-era treaty.

## Armenia Seeks to Offset Turkish Threat to its National Security

YEREVAN — Armen Grigoryan, the secretary of the Armenian government's Security Council, reaffirmed Yerevan's serious concerns over Turkey's vehement support for Azerbaijan shown during and after recent deadly clashes on the Armenian-Azerbaijani border, Azatutyun.am reports.

"Seeing that Azerbaijan is unable to keep the situation under control on its own, Turkey is trying to intervene," Grigoryan told RFE/RL's Armenian service. "I think that this poses a serious threat to the region. It is also a challenge to the regional security architecture. The regional security architecture has long been unchanged. Turkey is now trying to change it through its intervention."

"We are fully prepared and will take steps to minimize this [threat.]" he said. "We also have a lot of work to do in this direction with our strategic ally Russia in order to prevent such changes in the region."

Asked about Moscow's reaction to the Armenian concerns, Grigoryan said: "The July incidents [on the border] coincided with the coronavirus pandemic, and we have not yet been able to discuss the issue at a higher level. But these issues are on the agenda because they are about challenges facing the region and we need a common response to these challenges."

Turkish and Azerbaijani troops began on July 29 joint military exercises in various parts of Azerbaijan.

The Armenian Foreign Ministry expressed concern at the exercises before the Armenian military put some of its forces on high alert. Defense Minister Davit Tonoyan said on July 28 that Armenian army units as well as a Russian-Armenian military contingent are "continuing to constantly monitor and analyze" Turkish-Azerbaijani military activities "with all reconnaissance means" at their disposal.

# Promising Translations




**BY DR. MINAS KOJAYAN**

"That which I gave to others returned sweeter."
—Vahan Tekeyan(Poet)

A seasoned teacher's life is full of pleasant surprises, which, to the extent that they proceed from his imparted instruction—what [he] gave to others, in Vahan Tekeyan's words—return sweeter, and stronger, to rest in his soul eternally.

A phone call recently took me back 15 years to the 11th grade class at AGBU Manoogian-Demirdjian School, on an 11-day field trip and pilgrimage to Armenia. Behind a pair of glasses stood an interesting and inquisitive student named Beyon. Happily, and sometimes indulgently, I would answer his questions. He graduated the following year and I heard no more about him, except when I would visit his honorable grandparents, Mr. and Mrs. Noubar and Marie Agopian. That was how I found out that he had travelled to Australia to pursue a PhD in psychology. Good news, certainly.

The caller was Beyon Miloyan. Without delay, he explained that he had joyfully devoted himself to translating Armenian literature to English. Could a teacher—in this case, my wife and I—have received better news?

He spoke proudly about how he and his friend and former colleague, Dr. Kimberley McFarlane, had translated Raffi's works, Jalaleddin, Harem, and Arable Land, and were enthusiastically determined to enrich the libraries of English readers with many more translations to come.

"My heart would ache," said Beyon, "that the current generation (of Armenians and non-Armenians) knows nothing about Armenian literature, which has much to offer a broad readership."

Beyon was right. He had felt this pain himself, far away in Australia, where he met his talented Australian colleague who also treasured good literature. Their literary tastes converged. It did not take long for them to jointly found their own publishing company, Sophene, and their subsequent translations and projects elucidate different historical periods of the Armenian tradition.

Beyon and Kimberley have dedicated themselves to this project so ardently that the latter decided to drink from the spring, so to speak, by learning Armenian with AGBU Armenian Virtual College (AGBU-AVC), founded by the accomplished Dr. Yervant Zorian.

I looked over their translations of Harem, Jalaleddin, The Fool, and Prohaeresius, and their updated editions of Charles Neumann's 1831 translation of Vahram Rabuni's History of the Rubenian Dynasty and The Near East, which includes various excerpts on historic Armenia from Strabo's important 1st century historical work, Geographica.

"Nothing beats the original. We prefer that Armenians and those who can read Armenian to have the original text, which is why we republish these alongside our translations. Unfortunately, diaspora Armenians, especially the current generation, do not know about our rich Armenian literary heritage, and besides that, are not very interested. By translating these works, we hope to make them available to those Armenians who do not read the language, but appreciate the aesthetics of our culture and want to learn about our heritage, as well as to non-Armenians who have a love for classic literature."

Translating Armenian literature into foreign languages is an important initiative in the dissemination of Armenian culture. Let us turn back for a moment to the 5th century and imagine what would have happened if Mesrop Mashtots, Sahak Partev (*), and their pupils had not translated key works from Greek and Assyrian into Armenian, beginning with the Holy Gospels. Literature, as an important form of communication between peoples, civilizations, and epochs, brings itself palpably to the service of mutual understanding, friendship, and coexistence.

It is in this faith and knowledge that Beyon said to me:

"For over 100 years, people praise the literature of other nations (Russian, French, Indian, Nigerian, and so on…), because they enjoy them and take them to heart. Armenian literature one day may reach such lofty heights. Why not, if we Armenians can succeed in bringing our literature to light?"

Link: www.sophenearmeniaca.com

(*) Mashtots is the inventor of the Armenian alphabet circa 414, and Sahak Partev was the supreme head (Catholicos) of the Armenian Church. The whole project was sponsored by King Vramshapuh of Armenia.

# Lydian Ramps Up Security Against Amulsar Activists

VAYOTS DZOR – Several activists were arrested on August 4, in a tense standoff near the Amulsar mountain for blocking the road in protest against Lydian International's controversial gold mining project, amid fears that the foreign owned entity has resumed operations in spite of heavy opposition by the general public.

The company's new management group elevated their security in recent days against peaceful protesters resulting in several arrests. According to the Armenian Environmental Front, Lydian's Turkish investors are highly interested in the exploitation of the Amulsar Gold Mine.

It was reported in days leading up to the arrests, that Lydian tore down resistance posts with large cranes at nighttime without any notification, replacing them with Lydian posts and claiming that the land belongs to the corporation. The Mayor of Jermuk, in a signed letter, stated that the land does not belong to Lydian and is in fact public property. In a February-March 2020 poll conducted by CRCC Armenia, 53% of Armenia's citizens stated that they were against the mining, and 19% were in favor.

For two years, environmental activists and locals, who fear that the project will destroy the pristine natural habitat of the region, including the nearby Jermuk natural spring and Vorotan river, have staged sit-ins at the project site, in an effort to prevent Lydian from resuming with dangerous mining activities, including the use of cyanide to extract gold – a highly controversial practice which poses long-lasting catastrophic impacts on the environment and its inhabitants.

The mine sits just above a tunnel which supplies water to Lake Sevan and scientists believe that acidic damage would eventually make its way into the lake and threaten the landlocked nation's water system.

The Amulsar Gold Mine project came under intense scrutiny after Prime Minister Nikol Pashinyan, in August of 2019, gave Lydian the green light to resume mining. Following his approval, large scale protests led to the government questioning Lydian's motives, requesting an environmental impact report and hiring an independent consulting firm to review the report to determine whether the project would hinder the region's ecosystem.

After the independent firm concluded that Lydian's report was incomplete, and no assessment could be made regarding mining Amulsar for gold deposits, the issue remained silent and the project was presumed to have come to a halt. Yet, Lydian and its investors exerted pressure and made threats of legal action against the Armenian government for the initial approval of the project by former President Serzh Sargsyan's administration back in 2012 when the initial drilling took place.

Furthermore, reports came to light that the European Union Delegation to Armenia, on the behest of the US and UK governments, urged Prime Minister Pashinyan to allow Lydian to resume operations.

In a September 2019 interview with MassisPost, Arman Suleymanyan, writer and director of the documentary Amusl̈ar: A State of Indifference, talked about the controversial project in depth.

# Armenian FM to Jerusalem Post

**Continued from page 1**

advantage dramatically failed and we have a clear case of miscalculation.

**Question: Is Armenia prepared for a ceasefire?**

Zohrab Mnatsakanyan: Unlike Azerbaijan Armenia agreed to all proposals of the international mediators to strengthen the ceasefire by putting on the ground more monitors and introducing investigative mechanisms into ceasefire violations. Armenia continues to advocate those and other measures to reduce risks of escalation.

**Question: We are seeing a lot of Israeli weapons (drones, missiles) being used by Azerbaijan. Have you conveyed concern about this to the Israeli government? Have you asked that Israel reconsider selling Baku these weapons?**

Zohrab Mnatsakanyan: Arms trade to Azerbaijan is fatal, because Azerbaijan never hesitates to use those weapons against civilian infrastructure, the civilian population.

We will consistently pursue this issue, it will always be an integral part of our agenda both on bilateral and multilateral platforms. Israel should stop this deadly business with Azerbaijan.

**Question: Armenia has reportedly had success shooting down Israeli-made drones during the recent fighting. What can you tell us about this?**

Zohrab Mnatsakanyan: For us those weapons are deadly as they kill our people. Our military has neutralized Azerbaijani weapons regardless of their perceived origins. Facts about weaponry obtained by Azerbaijan and used against civilian infrastructure and population of Armenia and Nagorno-Karabakh are numerous and the July events serve as an additional proof.

**Question: Israel has for years flip flopped on recognizing the Armenian Genocide. Is that something you still expect Israel to do? Have you brought this up recently with your Israeli counterparts?**

Zohrab Mnatsakanyan: Recognition of the Armenian Genocide by a nation who survived the horrors of the Holocaust is a moral issue. It's on your conscience. I know that many Jews – public personalities, intellectuals and ordinary people – strongly share this point of view. However, it is up to the authorities of Israel to recognize the Armenian Genocide or refrain from doing it. It's not only about Armenia but Israel as well.

# Three Timely Grants of the Society for Armenian Studies Are Underway

FRESNO -- Despite the impact of the ongoing pandemic, the Society for Armenian Studies (SAS) has worked hard to expand its efforts to foster Armenian Studies through different initiatives. Three existing and new competitive grants have been announced, with deadlines scheduled for September. The first two are open to students who are current members of the SAS.

The Fall 2020 edition of the SAS Graduate Research and Conference Grants for M.A. and Ph.D. students is underway. The amount of grants will be up to $1,000 per applicant and the deadline is September 15, 2020.

Due to the current restrictions on travel, applicants should also specify an alternative plan if they request funding for travel. Funding will also be available for research-related expenses (archival and library materials, et cetera).

These grants have been made possible by the institutional support of twelve Armenian Studies chairs, programs, centers, and libraries in the United States and abroad.

The Nina G. Garsoïan Graduate Research Grant for Ancient and Early Medieval Armenian History for M.A. and Ph.D. students has been recently launched. This grant of up to $1,000 will be awarded on an annual basis to a graduate student in the field. The deadline for this year grant is also on September 15, 2020.

Nina G. Garsoïan is a world renowned Byzantinist and Armenologist who was the dean of the Princeton University Graduate School and the first holder of the Gevork M. Avedissian Chair in Armenian History and Civilization at Columbia University. The grant is funded by Dr. Levon Avdoyan, who recently retired as the Area Specialist for Armenia and Georgia at the African and Middle Eastern Division of the Library of Congress. Dr. Avdoyan received his Ph.D. from Columbia University in New York in ancient and Armenian history under the supervision of Prof. Garsoïan.

The third grant addresses graduate students and post-graduate scholars, both SAS and non-SAS members. It is designed to support scholarship in the field of Armenian Studies that focuses on racial matters with the intention to encourage filling the gap of research on race. Two grants of up to $500 per applicant will be awarded. The deadline is September 30, 2020.

The SAS welcomes proposals for any research project that grapples with the role race has played in Armenian history across time and space, and particularly examines the impact of racial policies and racism on Armenian communities in the United States and/or explores the relations and entanglements between Armenians and Black communities in the United States. Researchers are highly encouraged to engage with the work of Black, indigenous, and other scholars of color and with critical race theory.

Applications can be made at: societyforarmenianstudies.com/2020/07/28/society-for-armenian-studies-grant-on-race/.

# Rebuilding Begins in Communities Attacked by Azerbaijan

**Paros Foundation Increases its Emergency Reconstruction Fund to $200,000**



TAVUSH -- Azerbaijan launched a vicious attack on Armenia on July 12, in violation of the ceasefire agreement. Over the next two days, Azerbaijan launched artillery of various calibers at the Armenian civilian populations of several communities within Berd Consolidated Communities of Armenia's Tavush Region. The Armenian Armed Forces not only successfully defended these areas, but captured a very important military post and has destroyed tens of millions of dollars worth of Azeri artillery and drones.

These military victories, however, have come with a huge price tag. Five of our valiant soldiers were killed and others along with a dozen villagers have been wounded. In addition, families in these villages have experienced material losses on their homes and property. Several days ago, The Paros Foundation team joined Tavush Governor Hayk Chobanyan, Berd Consolidated Communities head Harutyun Manucharyan, representatives of the Prime Minister's office, and local village representatives to visit the Nerkin Karmir Aghbyur, Aygepar and Chinari communities to assess the damage and to strategize and coordinate the next steps forward. Due to the extent of the damage and needs of the border villages, we are increasing our fund goal to $200,000, and are humbled to report contributions and pledges to date in excess of $120,000. The Paros Foundation's Emergency Reconstruction Fund will work to not only make repairs to these damaged homes, but, will make substantial improvements on them. In addition, funds will be used to make other substantial infrastructure improvements within the communities.

Through the generous support received from donors around the world thus far, our team has already begun planning the reconstruction of damaged areas, while our local construction crews look forward to beginning the job of rebuilding their communities. Work on rebuilding the Aygepar Kindergarten has already begun. Rebuilding of the houses will begin early next week in order to complete work prior to winter.

The Paros Foundation was launched in 2006 and has implemented more than $7.9 million worth of projects in Armenia through its unique model of philanthropy and community partnership.

# AIWA Announces Recipients of 2020 Scholarship Awards

LOS ANGELES – The Los Angeles Affiliate of the Armenian International Association are proud to announce the six recipients of the Hasmik Mgrdichian Scholarship Awards. Each year awards of $5,000 each are presented to fulltime California female students of Armenian descent, both under graduates and graduates, enrolled in accredited colleges and universities in the United States and abroad. It is encouraging and heartwarming each year to receive their applications and to learn of their scholastic achievements and goals for the future.

The Hasmik Mgrdichian Scholarship Awards was established in 2011 thanks to the continued generosity of Hasmik Mgrdichian, one of the founders of the Los Angeles Affiliate. The Los Angeles Affiliate of AIWA take great pride in her legacy to recognize and assist in the education of Armenian women.

The 2020 Hasmik Mgrdichian Scholarships were awarded to the following:

ANI HAKOBYAN, although born in Russia, has not lived there ever since and grew up in the United States. She received a BA from USC Berkeley and will be entering her first year at the University of Southern California to pursue a Master's Degree in Education. Her goal is to hold a position in the Ministry Education in Armenia.

HELENA NICOLE KEVORKIAN is a graduate of the AGBU Manoogian School. She will be attending the University of Southern California, Los Angeles, to pursue a degree in Communications/Public Relations.

MARIAM KHORENYAN was born in Yerevan, and received her undergraduate degree from the American University of Armenia. She served as a volunteer in the Peace Corp in Tbilisi, Georgia. She will be attending New York University, pursuing a Master's Degree in Global Affairs.

TAMAR NACHIAN is a third year student at the University of California, Santa Barbara. Her career goal is to pursue a degree in statistics and data science with an emphasis in Biopsychology.

LILIT OGANESSIAN will be attending the University of California, Davis. She is a first year student in a Ph.D. program in Veterinary Medicine. Her goal is to eventually work a government agency whose focus is on issues associated with human relationship to animals.

ZHANNA TER-ZAKARYAN, born in Yerevan, received a baccalaureate from Li Po Chun United World College of Hong Kong and a Bachelors Degree in Art History from the Art Institute of Chicago. She will be continuing her education at the Center of Socio-Legal Studies at the University of Oxford.

Nicole Nishanian, President of AIWA-LA states "How inspiring it is to look at the dedication of the Los Angeles Affiliate's Scholarship Committee, specifically our Scholarship Chair, Lily Balian. These past months when so many of us are concerned with the pandemic crisis, she has spent countless hours to communicate with each of the applicants, collected their transcripts, personal statements and applications. Lily, your leadership is an inspiration. My special thanks also to your committee members: Diane Cabraloff, Diana Hekimian, Hermine Janoyan, Houry Aposhian, Cindy Norian, Jean Kelegian and Lysa Gregorian.

# Վերջին Հեքիաթը

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

*... Հազիւ լսելի՝ հարեւան սենեակից նրա ականջին էին հասնում հարազատների եւ բարեկամների միջեւ տեղի ունեցող զրոյցի արձագանգները:*

*- Խե՜ղճ մարդ, վերջին փափագին չկրցաւ հասնիլ,- ասում էր մէկը:*

*-Գոնէ երկար ապրեցաւ,- աւելացնում էր միւսը:*

*- Ապրիլն ի՞նչ, ճանըմ, մարդ իր հողին չ'արժանանալէ ետք, ի՞նչ արժէք ունի անոր երկար ապրիլը,- շարունակում էր երրորդը:*

*Եւ այսպէս, մէկը միւսի ետեւից իր կեանքի տարեգրութիւնն էին ամփոփ ձեւով մեկնաբանում հարազատները, իսկ ինքը՝ անկողնում պառկած լսում էր այդ ամբողջը ու ծանրութեթեւ էր անում, մէկ՝ ընդունում, մէկ էլ մերժում էր այս կամ այն ասուած միտքը:*

*Իր սրտին խօսող ամենաճշմարիտ ելոյթը առաջին արտայայտուողինն էր,- ճիշդ էր պարոնը,- ասաց ինքնիրեն,- ես իմ վերջին փափագին չհասայ, էս անտէր հիւանդութիւնը ինձ անկողնում գամեց, ու ես ստիպուած եմ հաշտուել իրականութեան հետ:*

*Եւ այսպէս, տարբեր զգացումների արդիւնքում հիւանդի դէմքը մէկ ջղաձգւում, մէկ էլ հարթւում էր: Թեթեւ, սահանցիկ ժպիտը աւելի էր խոշորացնում շրթունքների անկիւնների ծալքերը, ու աչքերից հոսում էր արտասուքը, իջնում երեսնիվայր, հաճելի տաքութիւն հաղորդելով սառած դէմքին:*

*Վարպետ Անդրանիկը գիտէր, որ սա իր վերջին գիշերն է, գիտէր որ, ահա ուր որ է, հրաժեշտ կը տայ կեանքին, գիտէր, որ հարեւան սենեակում հաւաքուածները իր մահուանն են սպասում, որպէսզի անհրաժեշտ կարգադրութիւններն անեն՝ իրեն հանդիսաւոր ձեւով հողին յանձնելու համար*

*Վարպետը նոյնիսկ կռահում էր թէ որ գերեզմանատանն է հանգչելու իր տառապած ու տանջուած հոգին: Գիտէր այդ ամէնը ու՝ հանգիստ էր: Իր միտքն անհանգստացնողը միայն այն էր, որ թաղուելու էր օտար հողում:*

*Այս մտածումը, որ իշխող էր մնացեալ խորհրդածութիւնների մէջ, երկար տարիներ է, որ մաշում էր իր հոգին, նոյնիսկ՝ առոյգ, գործունեայ եղած ժամանակ: Ու հիմա՝ փաստի առջեւ էր կանգնած:*

*- Ի՞նչ արած,- մտածում էր վարպետ Անդրանիկը,- սա էլ իմ բախտն է...*

*Հարեւան սենեակի խօսակցութիւններն սկսեցին աւելի լսելի դառնալ եւ Անդրանիկը ջանաց կարելոյն լարել լսողութիւնը, որի արդիւնքում կարողացաւ լսել հետեւեալ պարբերութիւնները.*

*- Ճանըմ..., վազ անցիր ատանկ բաներ մի խորհիր, Անդրանիկը խելացի մարդ եղած է միշտ: Ան ժամանակին կարկադրած կ'ըլլայ ժառանգութեան խնդիրը եւ, վստահ եմ, բոլոր անդամներն ալ գոհ կը մնան:*

*- Խօսէ՜ք, խօսէք,- ինքն իրեն համարեայ շշուկով ասաց վարպետը,- մի՞թէ դուք եւ հազարաւոր այլ հայրենակիցներ իմ բախտին չէք արժանանալո՞ւ...*

***

*Հարեւան սենեակում կամացկամաց սկսեցին մարել ձայները, ուրեմն՝ հարազատները գնում էին իրենց տները: Կը նշանակի, նրանք «յոյս» չունէին, որ ինքը կը մեռնի այս գիշեր:*

*Վարպետ Անդրանիկը մեն-մենակ մնաց իր խոր-հըրդածութիւնների հետ: Նրա աչքերի առջեւով անցնում էին իր պատանեկութեան եւ երիտասարդութեան տարիները: Յիշեց իրենց հարեւանի աղջկան՝գեղեցկուհի Լիլիթին, որի հետ Քարկտիկ էր խաղում, տղաներն էլ ծիծաղում էին իր վրայ, ասելով թէ դա աղջկայ խաղ է, աղջկայ զբաղմունք: Ի՞նչ իմանային նրանք, որ պատանեկան սէրն էր նրան դրդում Լիլիթի հետ նստել գորգին ու ծուռումուռ պստիկ քարերը հրել ձախ ձեռքի երկու մատների արանքով: Խաչոն էլ, միշտ խաղում էր իր հոգու հետ, ասելով թէ տղամարդու խաղը Լախտին է, այն՝ որ տղաները գոտիներով դաղում են միմեանց:*

*- Ո՞ւր է արդեօք Լիլիթը, ո՞ղջ է, թէ մեռած,- մտածում էր վարպետ Անդրանիկը:*

*Եւ այսպէս, շարժանկարի ժապաւէնի նման, մէկը միւսի ետեւից նրա աչքերի առջեւով սահում էր իր ողջ կեանքը, յիշում էր սիրելի, անմոռանալի դէմքեր ու բազո՜ւմ դէպքեր:*

*Հին յիշատակներով արբեցած վարպետը, այն է, փորձում էր քնել, գուցէ եւ վերջին քնով, երբ սենեակի դուռը անձայն բացուեց, ու սենեակի աղօտ լոյսի տակ երեւաց Անդրանիկի թոռնիկը՝ Արմինէն, որ յուշիկ քայլերով մօտեցաւ իրեն՝ ստուգելու համար՝ քնա՞ծ է պապիկը, թէ՝ արթուն: Քնած ձեւացրեց իրեն ծերուկը, բայց տեսնելով, որ թոռնիկն ուզում է գնալ՝ մեկ վայրկեանում պայծառացած ուղեղը յուշեց նրան՝ իր մօտ կանչել Արմինէին:*

*- Այդ դո՞ւ ես Արմինէ, աղջիկս, մօտ արի,- դիմեց նա թոռանը, որ պատրաստւում էր դուրս գալ սենեակից:*

*- Յիշո՞ւմ ես աղջիկս, երբ դու աւելի փոքր էիր, գրեթէ ամէն գիշեր ես քեզ հեքիաթներ էի պատմում: Այսօր իմ հեքիաթն եմ պատմելու քեզ, երեւի վերջին անգամ, եւ սա կը լինի իմ վերջին հեքիաթը, պատմածս հեքիաթներից ամենալաւը:*

*Առանց մի խօսք ասելու Արմինէն տեղաւորուեց պապի անկողնու վրայ եւ համակ ուշադրութիւն դարձած սկսեց լսել պապին:*

*- Արմինէ, աղջիկս, դու գիտես չէ՞ այս ժամացոյցը, աւելի ճիշդ զարթուցիչը..., ահա այն, նայիր: Եւ եթէ դու սեղմես ահա այս կոճակը՝ նրանից դուրս կը գան ծիծեռնակները, հա, հա՜, հաւատայ..., գիտե՞ս, սրանք այն ծիծեռնակներն են որոնք ապրում են Հայաստանում: Տարուայ ցուրտ եղանակներին էլ չըւում են օտար, տաք երկրներ, իսկ յետոյ, գարնանը վերադառնում են իրենց հայրենի բոյնը...*

*-Նայիր աղջիկս, ահա սեղմում եմ կոճակը..., մէ՜կ, երկո՜ւ, երե՜ք..., տե՛ս, դուրս եկաւ առաջին ծիծեռնակը, մայր թռչունը, նայի՜ր, նայի՜ր..., գալիս են նաեւ միւսները, հիմա նրանք կ' երգեն, կը պարեն միասին, համերաշխ..., օ՜հ, այս ի՞նչ է..., ո՞ւր են ուզում թռչել նրանք, մի՛ թողնիր..., ա՜հ, այդպէ՜ս, այդպէ՜ս, ապրես աղջիկս, աւելի լաւ է խնդրես նրանց մնալ..., խնդրիր նրանց, խնդրի՜ր հենց իրենց երգով, դու գիտես չէ՞ այդ երգը.*

Ծիծեռնա~կ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ:

*- Նայի՜ր... կանգնեցին աղջիկս, նայի՜ր..., լսում են,, տես՝, քարացել են կարծես..., այս ի՞նչ է Արմինէ..., բռնիր այդ մէկին, ուզում է փախչել..., մի՛ թողնիր, խնդրո՜ւմ եմ, խնդրո՜մ..., բայց...,, սպասիր, սպասիր..., բաց թող նրան աղջիկս..., թո՜ղ, թող..., տե՞ս, տես..., կանգնեց, սպասում է մեր խօսքին.*

Ա~խ, թռի~ր ծիծեռնակ,
Ծընած տեղս՝ Աշտարակ,
Անդ շինիր քո բոյնը.
Հայրենի կտուրի տակ:

*- Ա՜հ..., հոգնեցի աղջիկս..., թո՛ղ, թո՜ղ քնեմ..., ցուրտ է, ծածկիր ուսերս, բայց..., բայց..., նայի՛ր, նայիր դու սրան..., կանգնել՝ նայում է աչքերիս, ի՞նչ է ուզում, հարցրու իրեն..., դու գիտե՞ս նրանց լեզուն..., հա՜..., այո՜ հասկացայ..., լուր է ուզում տանել մերոնց..., ասա՛, ասա՛ դու նրան.*

Անդ հեռու ալեւոր,
Հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իր որդուն,
Սպասում է օրէ օր:

*- Այս ի՞նչ է Արմինէ, չէ՛ լսում*

Շար.ը էջ 19

## Լրագրող Մարգարիտա Սիմոնեանի Մաղձը՝ Ուղղուած Հայաստանի Իշխանութիւններին Գրութեան Առթիւ

*«Մասիսի» նախորդ թիւով լոյս տեսած Հենրիկ Անասեանի յօդուածին կցուած խմբագրական ծանօթութիւնը տարակուսանք յառաջացուցած է կարգ մը ընթերցողներու մօտ՝ թողելով այն տպաւորութիւնը, թէ մենք համաձայն չենք գրութեան ամբողջ բովանդակութեան հետ:*

*«Մասիս» պարզապէս կը յայտնէր թէ, համաձայն ըլլալով հանդերձ Մարգարիտա Սիմոնեանին տրուած պատասխանին հետ չի բաժներ յօդուածագիրի որոշ որակումները:*

*Խմբագրութիւն*

# ՕՐԵՐՈՒՆ ՀԵՏ
## Ծիրանի Եւ Ձմերուկի Պատերազմ

ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

«Սատկած կատուին վրայ դանակ չեն բարձրացներ...»: (Ժող. Առած)

*Ազգին ծոցէն ծնած Զօրավար Անդրանիկ միշտ խորհուրդ կու տար, կը յորդորէր, նոյնիսկ կը հրահանգէր ձեռք չտալ կանանց, երեխաներուն, ծերերուն եւ անզէն քիւրտին ու թուրքին, «մեր թշնամին ասկեարն է« կ'ըսէր: Մեծ իմաստութիւն կայ այս խօսքին մէջ, որ կը բխէր իր ուժին վստահ հայ քաջամարտիկի ու զինուորականի դաստիարակութենէն ու հոգիէն: Այդպէս ըրին Խոճալուի դէպքերու ժամանակ հայ ազատամարտիկները, որոնց վեհանձն արարքը խեղաթիւրման փորձի ենթարկուեցաւ թուրքազերի պարտեալներու կողմէ:*

*Այս օրերուն, երբ մեր հերոս բանակայինները ոչ միայն կասեցուցին մեր ակամայ հարեւաններուն հերթական նախայարձակումները, թշնամիին մեծ ու փոքր բորենիները դիմեցին ամէնէն ստոր միջոցներու եւ երկրին առաջին խանումէն սկսելով կոչեր նետեցին հրապարակ, որպէսզի...ծիրանի պատերազմ մը սկսին Մոսկուայի մէջ՝ քրտինքով իրենց բերքը վաճառող հայերու վրայ: Սեւաչեայ խանումին կամ «տիւնեայ կէօզէլին» (աշխարհագեղեցկուհի) կոչին անսալով իր հմայլքէն տարուած ցեղակիցները յարձակեցան պատահական հայերու վրայ եւ խոշտանգեցին՝ չխնայելով տկար կանանց ու ծերերուն: Մահմետականներու սուրբ գիրքն անգամ կը դատապարտէ նման արարքները: Բայց այս գայլերու եւ բորենիներու վոհմակները ոչ մէկ սրբութիւն ճանչնալով ըրին ինչ որ կրնային...ռազմադաշտէն հեռու, Մոսկուայի մէջ: Ա'յս է իրենց գազանաբարոյ բնագդը: Ասոնք չեն փոխուիր:*

*Բնականաբար այս բոլորէն վրդովուած ու խորապէս վիրաւորուած հայեր պիտի պատասխանէին թրքազերիավարի՝ «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» կարգախօսին հետեւելով: Կ'ուզեմ հաւատալ որ թշնամիին ներկայացուցիչները ստացան վրիժառու հայերու յղած պատգամը:*

*Բայց ես պիտի ուզէի որ մենք վեր մնայինք նման վրէժխնդրական ռազմավարութիւններէ եւ պատերազմը փոխադրէինք հանրային կարծիքի դաշտ, մտնէինք զանգուածային լրատուութեանց ցանցերէն ներս՝ Անդրանիկին վայել արարքներով:*

*Գիւղական կամ անգրագէտ «տէրտէրի» անողնաշար քարոզ չէ որ կը կարդամ, այլ Խրիմեան Հայրիկի եւ Գարեգին Վրդ. Յովսէփեանցի ու նմաններու ոգիով: Այս տարիներուն, երբ արար աշխարհը կախուած է իր բջիջայիններէն ու համակարգիչներէն եւ մարդիկ գրեթէ ամէն վայրկեան կը հետեւին զգայացունց լուրերու, հաւատացէք որ դիպուկ զէնք մըն է, որ կ'առաջարկեմ:*

*Օրինակ, ես պիտի ուզէի որ հայավարի մեր կեցուածքը ցոյց տայինք նաեւ հետեւեալ կերպ եւ փոխանակ ձմերուկները խեղճ ու կրակ թուրքազերիի գլխուն ջարդելու, մօտենայինք իրեն եւ ըսէինք. «Նայէ՛, ա'յ զաւալլը Մեհմետ, ձերինները դանակ կը քաշեն ծիրան ծախող քու նման գիւղացիներու վրայ, կ'արգիլեն մեր ծիրանի վաճառքը, կ"անարգեն մեր անմեղ քաղաքացիները, բայց ահաւասիկ մենք եկեր ենք քեզմէ ձմերուկ գնելու, մեղք ես, հաւանաբար Մուղանի դաշտին մէջ ընտանիք պիտի ապրեցնես, տուն պիտի պահես...»: Պատկերացուցէք թէ ինչպիսի արձագանգ պիտի գտնէր մեր արարքը, եթէ նման տեսանիւթ մը տարածէինք առցանց մամուլէն մէջ:*

*Կը շեշտեմ, ես հլու-հնազանդ ու անգամ քրիստոնեայի սին քարոզ չեմ կարդար, այլ պատերազմի ու կռուի այլ որակ մը կ"առաջարկեմ: Հիմա ալ ուշ չէ մտնել ռուսական շուկայ, մօտենալ սեխ ու ձմերուկ վաճառող խեղճ ու կրակ գիւղացիին եւ արար աշխարհ ցոյց տալ պայքարի ու վրէժի ՄԵՐ ոճը:*

*Մի'շտ յիշենք անզուգական Զօրավարի խօսքը՝ Անդրանիկի պատգամը, որ մեր թշնամին «ասկեարն» է եւ մենք պէտք եղած դասը կու տանք անոր աւելի' ուժգնութեամբ ու դիպուկ կերպով:*

# Լճաշէնցիները Միաւորուել են Եկեղեցաշինութեան Գաղափարի Շուրջ

ՊԱՊԻՆ ՄՈՒՐԱԴԵԱՆ
ՄԱՐԻԱՄ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ



*Հազարամեակների պատմութիւն ունեցող Գեղամայ լեռների հիւսիսային թէք լանջին գտնուող Լճաշէն գիւղը յայտնի է Կիկլոպեան ամրոցներով, Արգիշտի Առաջինի սեպագիր արձանագրութեամբ, պատմամշակութային այլ յայտնի ժառանգութիւններով:*

*Վերջին մէկ ամսուայ ընթացքում լճաշէնցիները պարբերաբար անդրադառնում են իրենց բաղձալի երազանքին. համայնքում գործող եկեղեցի ունենալն այսօր առաջնային հարց է:*

*Յուլիսի 12-ին լճաշէնցիները հաւաքուել են 7-րդ դարում կառուցուած, սակայն այժմ խոնարհուած Սուրբ Հռիփսիմէ վանքում կամ, ինչպէս գիւղացիներն են սիրում անուանել, ժամում՝ իրենց աղօթքն առ Աստուած ուղղելու եւ օրհնութիւն խնդրելու:*

*Ծնունդով լճաշէնցի Տէր Ստեփանոս քահանայ Իգնաթեւոսեանի ձեռամբ բաց կտուրի տակ անցկացուեց ժամերգութիւն, որից յետոյ արժանապատիւ Տէր հայրն իր խօսքն ուղղեց հաւաքուածներին;*

*«Իւրաքանչիւր օր, երբ այս խոնարհուած, առանց տանիք եկեղեցում լճաշէնցիները միասնաբար են աղօթում, նշանակում է, որ Աստծուց խնդրանք ունենք, ինչպէս նաեւ Աստծու եւ մեր նախնիների նկատմամբ պարտականութիւն ունենք, որ այս եկեղեցին պէտք է գործի: Լճաշէնցին պիտի ունենայ իր եկեղեցին, որտեղ նա կը կարողանայ աղօթել, իր երեխային իր եկեղեցում մկրտել»:*

*Ժամերգութեան աւարտին կատարուեց կատարուեց հոգեհանգստեան կարգ՝ ի խոնարհումն վերջերս մահացած լճաշէնցի մեծանուն գիտնական, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Յարութիւնեանի յիշատակին: Եկեղեցի ունենալու անհրաժեշտութեան մասին քննարկումները նոր չէ, որ սկսուել են: 2013-ին Սուրբ Հռիփսիմէից փոքր ինչ հեռու գցուեցին Սուրբ Աստուածածին եկեղեցու հիմքերը, սակայն շինարարական աշխատանքները դադարեցուել են ֆինանսական խնդիրների պատճառով:*

*2015-ին Հայաստանի պատմութեան թանգարանում երեւանաբնակ լճաշէնցիների համաժողովի ընթացքում բազում հարցերի թւում կրկին առաջնային էր համարւում գիւղում գործող եկեղեցի ունենալը:*

*«Լճաշէնցիների միաւորում» հասարակական կազմակերպութեան նախագահ Պապին Մուրադեանը, ով այդ համաժողովի կազմակերպիչն էր, ուխտել էր հետամուտ լինել իր սիրասուն ծննդավայրում աղօթատեղի ունենալու հարցում: «Մեր մեծագոյն նպատակն է մեր հաւատի տունը կառուցենք գիւղով, եթէ հայրենիքում ու սփիւռքում բնակուող իւրաքանչիւր լճաշէնցի իր դառը քրտինքից մի կաթիլ խառնի եկեղեցու շաղախին, ապա մենք կունենանք կանգուն սրբավայր, որը դարեր շարունակ կը ծառայի սերունդներին»,- ասում է Պապին Մուրադեանն ու փաստում, որ արտերկրում բնակուող լճաշէնցիները յաճախ զանգահարում ու խոստովանում են, որ կարօտում են նոյնիսկ «ժամի» քարերին. Նրանք իրենց պատրաստակամութիւնն ու աջակցութիւնն են յայտնում եկեղեցաշինութեան գործին: Անգամ Սփիւռքի որոշ համայնքներում կազմակերպուած գործունէութիւն են իրականացնում, որի դրական արձագանքները հասնում է հայրենի Լճաշէն, ինչն աւելի է ոգեւորում աշխատանքներն իրականացնող թիմին:*

*Եկեղեցաշինութիւն իրականացնելու նպատակով «Լճաշէնցիների միաւորում» հասարակական կազմակերպութիւնը բացել է նպատակային հաշուեհամար, որում հանգանակուած գումարը կուղղուի այս վաղեմի երազանքի իրագործմանը:*

*Նշենք, որ հետեւողականն ու նախանձախնդիր աշխատանքներ են իրականացւում 7-րդ դարի խոնարհուած Սուրբ Հռիփսիմէ եկեղեցու ուսումնասիրութիւնների վերաբերեալ:*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետները՝ տիկին Մերի Դանիէլեանի գլխաւորութեամբ Սուրբ Հռիփսիմէ եկեղեցում ուսումնասիրման եւ չափագրման աշխատանքներ են կատարելդ առաջիկայում նրանք մասնագիտական կարծիք կը յայտնեն:*

*«Լճաշէնցիների միաւորում» հասարակական կազմակերպութեան նախագահը պարբերաբար հանդիպում է ոլորտի մասնագէտների հետ եւ առաջիկայում սպասւում է ճարտարապետների եզրակացութիւնը, եւ ի վերջոյ գիւղացիները կը ստանան իրենց յուզող գլխաւոր հարցի պատասխանը՝ վերականգնե՞լ Սուրբ Հռիփսիմէն, թէ՞ շարունակել Սուրբ Աստուածածին եկեղեցու կառուցումը:*

*«Ես սրտանց ուզում եմ՝ էս եկեղեցին վերակառուցուի, հոգեւորը մարդուն միշտ պէտք է»,- ասում է գիւղի բնակիչ Ջանշիկ Յովհաննիսեանն ու մատնանշում Սուրբ Հռիփսիմէն: Յովհաննիսեանն ասում է, թէ տարիներ առաջ չեն գիտակցել եկեղեցու զօրութիւնը, հիմա ափսոսում են:*

*Գիւղացիները համոզմունք ունեն՝ եկեղեցու կառուցումն էլ աւելի կը համախմբի իրենց, մեծ գիւղի համար եկեղեցի ունենալը կարեւոր է: Գիւղի բնակիչ Մելիք Ներսիսեանը պնդում է՝ եկեղեցի ունենալը գիւղին աւելի քան անհրաժեշտ էգ*

*«Լճաշէնցիները քիլոմեթրեր են կտրում եկեղեցիներ գնալու, աղօթելու համար, բնակչութիւնը ձգտում է դէպի եկեղեցի»:*

*Գիւղի ուղիղ կեդրոնում գտնուող կիսաքանդ Սուրբ Հռիփսիմէն գործել է մինչեւ 20-րդ դարի սկիզբը, այսօր արդէն այն չի գործում, գիւղում պատարագներ ու ժամերգութիւններ չեն անցկացւում, զանգեր չեն հնչում, մինչդեռ գիւղացիները պնդում են՝ ունենն դրա կարիքըգ սա հոգեւոր ու մշակութային արժէքները պահպանելու լաւագոյն միջոցն է, քանի որ դա է գիւղն ու գիւղացիներին արժեւորում:*

*Եկեղեցաշինութեան ոգով տոգորուած լճաշէնցիները պատրաստւում են Խաղողօրհնէքի արարողութեանը: Կրկին միասնական աղօթքի են կանգնելու եւ խոնարհուած եկեղեցու բաց տանիքից հայեացքները երկինք հառած՝ Բարձրեալից խնդրելու են, որ մի օր էլ իրենց հաւատքի տունը շէն ու կանգուն տեսնեն:*

# Շահումեանի Շրջանի Մշակոյթի Կեդրոնի Հիմնանորոգումը Կ՚աշխուժացնի

ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ



*Շրջանի Մշակութային կեանքը*

*Լոս Անճելեսում գործող «Արարատ» Հիմնադրամի հովանաւորութիւնը վայելող «Քարվաճառը վերակառուցելու Արցախի ծրագիր» յանձնախումբը 2017 թուականից զբաղւում է Արցախի Շահումեանի շրջանի մշակոյթի երիտասարդութեան կենտրոնի շէնքի հիմնանորոգմամբ: Այս ընթացքում ամբողջութեամբ փոխուել է շէնքի տանիքը, հիմնանորոգուել կեդրոնի բեմը, առաստաղը, պատերը, ամբողջութեամբ փոխուել լուսաւորութեան և վարագոյրների համակարգը, վերանորոգուել են դահլիճի աթոռները: Շինարարական աշխատանքների համար մինչեւ այս պահը ծախսուել է մօտ 80 հազար ամերիկեան դոլար:*

*«Այս շինարարութեան հիմնական նպատակն այս շրջանի պատանիների, երիտասարդների կեանքն աւելի հետաքրքիր դարձնելն է: Եթէ այսօրուայ աշակերտը, աւարտելով դասերը, ուրիշ հետաքրքրութիւն չունենայ և դպրոցից ուղիղ տուն գնայ, նրա համար դժուար կը լինի հասկանալ, թէ ինչու ինքը պիտի մնայ Քարվաճառում ու վաղը կառուցի ու շէնացնի այն: Երիտասարդը միշտ ցանկութիւն ունի նաեւ հետաքրքիր կեանքի», մեզ հետ զրոյցում նշեց «Արարատ» հիմնադրանի նախագահ Լաուրա Մելիքեանը: Իսկ հետաքրքիր ժամանց, ըստ մեր զրուցակցի, հնարաւոր չէր ապահովել այն տխուր, մռայլ պատերով հաստատութիւնում, որտեղ անգամ խմելու ջուր և սանհանգոյց չկար:*

*Շէնքի վերանորոգման համար ծախսուած ողջ գումարը հաւաքուել է նուիրատուութիւնների շնորհիւ, որը կազմակերպել են «Արարատ» Հիմնադրամն ու նախագծի աջակցութեան համար ձեւաւորուած «Արցախ-վերակառուցենք Քարվաճառը» նախաձեռնող կոմիտէն, որի կազմում են Արա Ահարոնեանը, Ֆրեդրիկ Վարդանեանը, Մարալ Դաբաղեան-Անճարգոլեանը, Գայանէ Գեւորգեանը, Ստեփան Գումրիկեանը, Սիլվա Նատալի Մանուկեանը, Խաչիկ Մանուկեանը, Ռաքէլ Մելիքեանը, Լաուրա Մելիքեանը, Ֆրեդ Սարկիսյանը, Արմինէ Զաքարեանը և Ռիտա Մահդեսեանը:*

*Ինչպէս նշում է Լաուրա Մելիքեանը, այդ ընթացքում անախորժութիւնների ու դժուարութիւնների եւս հանդիպել են. «Այնպէս ստացուեց, որ որոշ անազնիւ մարդկանց պատճառով մի գործը երկու անգամ արեցինք, բայց կարեւոր է, որ մենք չընկճուեցինք և այսօր ունեցանք այս արդիւնքը»:*

*«Այդ նոյն գումարով և ժամանակահատուածում մենք կա-*

Շար.ը էջ 19

# Հայրենականչ

ՆԵԼԼԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ

*Տարիների ընթացքում, երբ վերջապէս ինքս ինձ հետ ծանօթացայ, փոքրիշատէ բացայայտեցի ներսումս ապրող մարդուն, քիչ թէ շատ ազգիս պատմութեանը մօտեցայ, սիրեցի ու կապուեցի այս մի պատառ հողին, ուր ծնունդ եմ առել, ուխտեցի տեսնել մեր պապերի երկիրը, որ ամէն օր տրորւում է, քանդւում վայրագ ցեղի սմբակների տակ:*

*Արդէն ուխտագնացութեան երրորդ օրն էր, սակայն դեռ չէի հասցրել մի կարգին հասկանալ՝ սրտումս ինչ էր կատարւում, բոլոր զգացողութիւններս խառնուել էին. մի կողմից՝ այս երանելի ազգի զաւակը լինելու հպարտութիւնն էր գլուխ բարձրացրել, միւս կողմից՝ մի գեղեցիկ օր, կորցրածը վերադարձնելու մտքերը հանգիստ չէին տալիս: Անցանք Կարսի երկար ու ձիգ ճանապարհներով: Ամբողջ ճանապարհը ձգւում էր հացահատիկի դաշտերի միջով, Կարսը շրջապատուած է անմատչելի ժայռերով եւ անդնդախոր հովիտներով. այն մի փոքրիկ բերդաքաղաք է եղել եւ միայն բարեկարգուել, շէնացել է Բագրատունիների գահակալութեան ժամանակ, տեսանք այն տան փլատակները, ուր ծնունդ էր առել, ձեւաւորուել Չարենց անհատականութիւնը, յետոյ մեր աչքի առջեւ յառնեց մի շքեղ ճարտարապետական կառոյց՝ Աբաս Բագրատունու օրօք շինուած Առաքելոց եկեղեցին, որ, ի ցաւս մեր հոգիների, այսօր վերածուել է մի սովորական մզկիթի: Եկեղեցու պատերը անկարութիւնից հառաչում են, ծեփ-ծեփ թափւում չարի անմիտ, անհասկանալի ոռնոցներից, բայց եւ այնպէս, դրանք, դեռ ցաւն իրենց պատերի ներսում խեղդելով, յոյսը հայի ճամբին պահած՝ դիմակայում են: Այդ կոթողներն այնպիսի գիտակ մտքով ու հմուտ ձեռքերով են կառուցուել, որ այդքան աւերուելուց յետոյ դեռ չեն խոնարհուել, չեն ծնկել. Նրանց պատերի ներսում հայի անպարտ ոգին է թեւածում:*

*Ցուցմունքն ու հետաքրքրութիւնը, կորուստն ու կարօտն այնքան խորն էին, որ բնաւ յոգնութիւն չէինք զգում, ամէն քայլափոխի, երբ աչքս ընկնում էր թուրքերէնով գրուած պաստառներին, նայում էի նրանց դէմքին, ոչ աւել, ոչ պակաս, նրանց չարախինդ աչքերում խուլ հեգնանք էի նկատում: Ինձ համար թուրքը ամենաարնախում գազանն է, եւ որքան էլ ասեն, թէ սերունդները դատապարտում են իրենց նախնիների վայրագութիւնները, միեւնոյն է, երբեք չեմ հաւատայ: Ամբողջ ճանապարհին աչքերիս էին պատկերանում հայրենակիցներիս տեղահանութեան, սպանդի սահմռկենող տեսարանները, կարծես ամէն տնից, փողոցից լսելի էին մորթուող կանանց, երեխաների գոռում-գոչումը, փլատակների վերածուած պատերի աղերսները, ականջներիս մէջ զրնգում էր այդ սինլքորների դիւային քրքիջը: Ակամայից ամուր փակեցի ականջներս՝ հոգեկան հաւասարակշռութիւնս չկորցնելու համար: Չգիտեմ այդ պահին դէմքս ինչպիսի արտայայտութիւն էր ստացել, երբ ինձ վրայ զգացի մէկի կարեկից հայեացքը:*

*- Ձեր ազգ շատ տառապել է, դուք շատ ցաւի միջով անցել էք,- յուզախառն ձայնով, հազիւ մի քանի բառ իրար կապկպելով, կողքիս նստած երիտասարդն ինձ դիմեց:*

*- Ցաւօք, իրաւացի էք: Պատկերացնել անգամ չէք կարող, թէ այդ հրէշներն ինչպէս են խոշտանգել մեր ժողովրդին,- մտքերս հաւաքելով պատասխանեցի՝ բացայայտ ցոյց տալով ներսումս կուտակուած մաղձն ու ատելութիւնը:*

*- Նրանք աւերել են մեր գիւղերը, քաղաքները, մեր կանանց ու աղջիկներին ստիպել կրօնափոխ լինել, մոր աչքի առաջ նրա մանկանը սպանել: Տարիներ շարունակ, այդ սատանաները մեր ժողովրդի հետ մտերմութիւն են արել, իսկ յետոյ մտել նրանց տները, սրի մատնել: Հաւանաբար, քիչ առաջ նկատեցիք մահմետականի հագուստներով կանանց, որ ծպտեալ խաչակնքում էին: Դուք գիտէ՞ք, որ դրանք կրօնափոխ հայեր են, իսկ այն տղամարդո՞ւն, որ մեզ մօտեցաւ եւ արցունքն աչքերին զրուցում էր մեզ հետ, նա էլ էր հայ, բայց օտար անունով, հասկանո՞ւմ էք, թէ ինչ է կատարուել. Մարդն օտարի պէս է ապրում իր հողի վրայ «ամէն օր մեղքի թողութիւն հայցելով, որ այն օրերին իր մէջ այնքան ուժ չի գտել՝ միւսների նման ջուրը նետուելու, ինքնասպան լինելու, բախտն էլ չի բերել, չեն սպանել, ու այսպէս արիւնը թշնամու արեանն է խառնել ու...*

*Երիտասարդն, անթարթ աչքերով, ջղաձգուած դէմքիս էր նայում ու ցաւով գլուխը տարուբերում:*

*-Միեւնոյն է, եթէ դարեր էլ անցնեն, մենք նրանց չենք ների, չենք մոռանայ, պատմութիւնը միշտ ճչալու է...*

*Էքսկուրսավարը պատմում էր Վանի թագաւորութեան հիմնադրման, պատմամշակութային կոթողների մասին, թէ ինչո՞ւ յանկարծ մի անարեւ օր, տասնեակ հազարաւոր հայեր ստիպուած թողեցին իրենց տունը, տեղը, ազգային հազարամեայ սրբութիւնները եւ բռնեցին գաղթի ճամբան: Ու պատմութիւնը՝ սիրտ կեղեքող թախծոտ երաժշտութեան պէս, գալիս լցւում էր մարդկանց սրտերը, յետոյ, միանգամից, կարծես դհոլ-զուռնի ձայնն էր հնչում՝ լցուելով բազմաչարչար հայի պատմութեան արնաներկ էջերի խորքերը:*

*Վանայ լճի մօտ մեքենան կանգ առաւ: Առանձնացայ խմբից. ուզում էի մենակ մնալ: Մօտեցայ ափին, ոտքերս մխրճեցի տաք աւազի մէջ: Շատ ծանօթ զգացողութիւն էր: Զնայած, առաջին անգամ էի ոտք դնում այդ հողի վրայ, բայց այնպիսի տպաւորութիւն էր, որ ողջ կեանքս այնտեղ էի ապրել, այդ դրախտավայրի շունչը զգացել: Ծովակն այնքան հանդարտ էր, կապուտաչ ալեակները մեղմ օրօրւում էին. Թւում էր՝ նա էլ էր հարազատ հոգի գտել, թոթով լեզուն բացուել էր, հոգեթով զրոյց էր անում ինձ հետ:*

*-Աղջի՛կս, ինչո՞ւ կու լաս, քեզ ի՞նչ պատահած է,- եօթանասուն տարեկանին մօտ, ձուլթի պէս սեւ, փոքր ինչ դուրս պրծած աչքերով մի տարեց մարդ, հազիւ ձեռնափայտին յենուելով՝ յուշիկ քայլերով ինձ մօտեցաւ: - Քու հողո՛ւն վրայ ես, քու տունի՛ն մէջն ես, ալ լալու պատճառ չունիս, թող ան լայ, ով յաւիտեան զրկուած է Վանայ ծովուն արեւածագը տեսնելու յոյսէն:*

*Այդ մարդու խօսքերն ասես մեխի պէս գլխիս մէջ խրուեցին, ակամայից բլուզիս թեւքով սրբեցի արցունքներս:*

*- Հայրի՛կ, որտեղի՞ց էք եկել,- մտերմիկ տոնով, դէմքիս մի փոքր ժպիտ նկարելով՝ նրա կողմը շրջուեցի:*

*- Լիոնէն եկած եմ: Հարս, մարս հոս ծնուած են, բայց ան տաժան օրերուն, աստեղ-անդեղ թաքնուելէն ետքը անգութ ենիչէրիներու ձեռքէն մի կերպ ազատուած են: Է՜, ինչ օրեր տեսած են, ձա՛գս, ինչերո՜ւ միջով անցած են: Տղամարդու խորաթափանց աչքերում արցունքի կաթիլներ շողացին. Այդ պահին զգացի նրա սրտի թփթփոցը. ձեռքերը բռունցքուեցին, ցաւից աչքերն այնքան խորացան, որ գնացին ձուլուեցին ծովակի հայատենչ ալեակներին: Ապա մի պահ լռեց, սկսեց ձեռնափայտով աւազի վրայ ինչ-որ անորոշ պատկերներ գծել, յետոյ փակեց աչքերը, ու դողացող շուրթերից դուրս եկող մեղեդին՝ թոնրի տաք հացի բոյրի պէս, շուրջը տարածուեց: Շատ էի լսել այդ երգը, բայց այս անգամ այն առաւել յուզիչ էր, խլացնում էր հոգուս ձայնը, որ խելագարի պէս ճչում էր, բողոքում, իրեն պատեպատ տալիս:*

*Իզուր էի ճիգ գործադրում ոտքերս շարժել, դրանք այնպէս էին ծանրացել, որ ես թրմփացի աւազին ու խառնեցի սփիւռքահայի քիչ առաջ գծած գունագեղ պատկերները, իսկ վերջինս, ասես հայրենի սար ու քարից աւելի մեծ ուժ առնելով՝ ձայնն աւելի ու աւելի բարձրացրեց: Երգն այնքան զուլալ էր, այնքան քաղցր էին հնչիւնները, որ ուղեկցողն ակամայից լռեց ու նրա կարօտականչ ձայնը գնաց հասաւ մինչեւ Էրգիր, մինչեւ Մասիս ու Նեմրութ, ու քարերն անգամ հառաչեցին ցաւից:*

*Իրիկնանում էր, երբ հիւրատուն հասանք: Ուսերիցս յոյզերի մի ամբողջ պարկ էր կախուել. այդ պահին մէջս մի հրէշ էր արթնացել, որ պատրաստ էր անգէն դուրս գալ, ձայնն ամբողջ ուժով տարածել, որ այդ ճղճիմները մի վայրկեան անգամ կասկած չունենային, որ նրանց մեր պապերի հողի վրայ ապրելու քիչ ժամանակ է մնացել, այս սրբազան լեռն անազատութեան մէջ պահելով՝ այդ ազգասպանները դեռ շատ զրկանքներ են ունենալու... Ուզում էի սենեակ բարձրանալ, երբ հեռուից ականջիս հասաւ մէկի արդէն հարազատ դարձած ձայնը: Գամուած մնացի տեղումս: Ոչ մէկի հետ խօսելու ցանկութիւն չունէի, բայց ստիպուած էի նրան լսել:*

*-Սոնա՛, աղուոր աղջիկ, բոպէ մը կեցիր:*

*-Ահա՛, փաստօրէն արդէն անունս էլ գիտի...*

*-Ամբողջ օրը քեզի հետեւած եմ, աչքերուդ ուրախութիւն անգամ չերեւցաւ, ամփողջովին թախիծով պատուած է: Ախր դուն լալու պէտք չունիս, դուն հայրենիքեդ մէջն իս, քեզ ոչ ով չի նեղացնիլ, դուն ամէն առտու կ'արթննաս, աս անուշ օդը կը շնչիս եւ ադ քեզի ապրելու, պայքարելու ուժ կու տայ:*

*-Ասում էք հայրենիքի՞ս: Ապա դուրս եկէք, ձեր շուրջ նայէք, տեսէք թէ էս բարբարոսները ինչպէս են առոք-փառոք ապրում մեր հողի վրայ:*

*-Կը հասկնամ աղջիկս, ադ համայն հայերուս ցաւն է, ան երբեք մեզի հանգիստ չի թողուր: Մէկ է՝ դուն հողուդ վրայ ես, դուն երջանիկ պիտի ըլլաս: Դուն կը հասկնա՞ս, մենք հոնտեղ՝ Ֆրանսայում, աղէկ կ'ապրինք, անոնք մեզի լաւ կը վերաբերուին,- նա մի պահ զրոյցն ընդհատեց՝ տաք թէյի բաժակը դողդղացող շուրթերին մօտեցնելով:*

*- Կը ներէ՛ք, բայց այդպէս էլ ձեր անունը չասացիք,- մէկ անգամ եւս կրկնեցի՝ մի կերպ ճիգ գործադրելով՝ կոպերիս ծանրութիւնից աչքերս չփակել:*

*-Անունս Խաչադուր է, -հպարտօրէն հնչեցրեց վերջինս, -Խաչատուր Բարսամեան, երկար ատեն Լիոնին մէջ դասատուութիւն կ'ընէի. Բայց որոշեցի ձգել, ա՜լ յոգնած եմ, ուժ չունիմ:*

*- Հայրի՛կ, ուրախ եմ մեր ծանօթութեան համար,- ինքնաբերաբար սկսեցի շփել սառած ձեռքերս՝ մտամոլոր հայեացքս շուրջը տարածելով:*

*- Շատ անուշիկ աղջիկ մըն ես: Շատ կը հաւնեմ մեր հայ աղջիկները, անոնք ուրիշ արմատեն են: Ես ալ քո տարիքի թոռնուհիներ ունիմ, բոլորն ալ բարձր տեղեր կ'աշխատին, բայց...*

*- Դուն ինչո՞ւ հոս մենակ եկած ես,- սառած թէյից մի փոքրիկ կում անելով՝ հարցրեց պարոն Խաչատուրը:*

*- Ինչո՞ւ,- քթիս տակ մտմտացի՝ սառած թէյի բաժակը ձեռքերիս մէջ պտտացնելով: Ուզում էի գոնէ գնալուցս առաջ արեւմտեան Հայաստանը տեսնել,- հազիւ շունչս պահած, շուտասելուկի պէս պատասխանեցի նրա հարցին:*

*Նա մի պահ կարկամեց, յետոյ, ակնապիշ հայեացքը վրաս սահեցրեց, վրդովուած կոկորդը մաքրելով՝ թէյից մի կում էլ արեց ու խորը մտքերի մէջ ընկաւ:*

*- Շատ դառնացուցիր զիս, դո՞ւն ինչու կը լքիս հայրենիքդ, աս ազնիւ Էրգիրը, կը կարծիս հոն ապրիլն աւելի՞ լաւ է: Դուն մի սխալուէ, ան քուկդ չէ, քուկդ ա՛ս է, ա՛ս,- բարկութիւնից ձեռնափայտը գետնին խփեց՝ ուշք չդարձնելով, որ կէս գիշեր էր եւ բացի մեզնից ոչ մէկը չկար հիւրասրահում:*

*- Հայրի՛կ ջան, խնդրո՛ւմ եմ, վէրքիս աղ մի լցրէք,- յուզախռով ձայնով նրան դիմեցի, ամօթից դէմքս մինչեւ գետին իջեցնելով: Ես էլ չեմ ուզում գնալ, բայց ստիպուած եմ: Կարծում էք մեր երկրից օր օրի հեռացող հայերն ուզո՞ւմ են իրենց երկիրը լքել: Հիմա կ'ասէք. »այդ դէպքում ինչո՞ւ է Հայաստանը դատարկւում«: Ցաւալին այն է, որ առաջ ես էլ էի նրանց դատապարտում, իսկ այսօր...*

*- Գիտե՛մ, այսօր մեր հողուն վերայ ինչ սարսափելի բաներ կը կատարուին, ինչ դրութեան մէջ են աս պահուն հայերը, բայց ատիկա ելք չէ, ատիկա փախուստ մըն է, դաւաճանութիւն մըն է աստեղ մնացողներուն հանդէպ: Այն ատեն ի՞նչ պիտի ըլլա աս ազգին ճակատագիրը, եթէ բոլորն ալ ասպէս բռնին օդարի ճամբէն: Դուն գիտակից աղջիկ մը կ'երեւիս, դուն կը հասկնաս, որ թուրքերուն ցանկութիւնն հենց ադ է, տեսնիլ Հայաստանն առանց հայերու, որ վերջապէս կատարուի նրանց դարերու փափաքը: Ապա ինչո՞ւ աս հողուն համար կուլաս, եթէ պիտի ըսելիքս չհասկնաս:*

*- Չէ՛, երբեք նման բան չասէք, անգամ մտքներովդ չանցկացնէք,- փորձեցի նրան հակառակն ապացուցել՝ ձայնիս մէջ մի տեսակ յանդգնութիւն խցկելով: Մեր երկրում այնպիսի ազգանուէր մարդիկ են ապրում, որ մի թիզ անգամ չեն զիջի, մենք այնքան քաջ երիտասարդներ ունենք, որ պատրաստ են ամէն գնով իրենց պապերի արիւն-քրտինքով պահպանած հողը պաշտպանել: Ոչ մէկը չի կարող ուրիշի*

Շար.ը էջ 19

# Արեգակն է եկել՝ Ամառ Բերել Արմինա-Հայաստան Աշխարհին

Ինչպէս ամէն մարդ ունի իր տունը, նաեւ ամէն ազգ պէտք է ունենայ իր տունը եւ սեփական տունը պէտք է լինի ազգի գոյատեւման հիմնաքարը

Հրապարակագիր՝ Հրայր Ճէպէճեան

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

*Արմինա աշխարհի Բակուր, Վասակ իշխանների «Սիւնիք» աշխարհի «Քարահունչ-Զօրաց Քարեր»-ի սարահարթ, ուժեղ, հուժկու լեռնաշղթայ «Բարգուշատ»-ի գոգաւորութիւնում լայնածաւալ հարթավայր, երեսները դէպի տիեզերքի հեռուները յարած, եօթ հազար հինգ հարիւր տարիների վաղեմութեան 203 հսկայ քարեր են կանգնած: «Զօրաց Քարեր», զօրաւոր մարդկանց արարած այդ կառոյցը աշխարհի ամենահին աստղադիտարանն է: Հարթավայրը կարող էր լինել այն տեղանքներից մէկը, որտեղ կարող էին այցի եկած լինել տիեզերքի հեռուների մոլորակների մարդիկ: Քարահունչի 85 քարերի վրայ փորագրուած են սկաւառակների նման առարկաներ վեր պահած, ճաղատ գլուխներով ու շեղ աչքերով մարդակերպ արարածների նմանութեամբ պատկերներ: Մամուռ է բուսել նրանց վրայ, այն չի կարողացել ջնջել հազար-հազար դարեր գնացած նրանց յուշը: Քարերի վրայ փորագրութիւնները կարող էին մարդկային յիշողութեան մի պատահարի եղելութիւնը լինել եւ կարող էր նաեւ շատ վաղ ժամանակների բնիկները անոր ականատեսը եղած լինէին: Այդ մարդակերպ պատկերների փորագրութիւնները կարող էին տիեզերքի ուրիշ մոլորակների այցելուների պատկերները լինէին, կարող էր նաեւ Քարահունչի սարահարթը երկիր վայրէջքի նրանց ընտրած յարմար վայրը եղած լինել: Մարդու հասակի բարձրութեան քարերի երեսին՝ դէպի երկնի հեռուների տարբեր ուղղութիւններ նայող ուղիղ ու շեղ անցքեր են, որտեղից Արմին աստղագէտները կարող էին տիեզերքի «Կարապի Համաստեղութեան» աստղերնն էին դիտել:*

*Ամառ էր, Արմին-հայերի Յունիս ամսուայ երրորդ տասնամեակի սկիզբն էր: Մեծ Հայքի Այրարատ, Տայք, Մոկք, Ծոփք, Ուտիք, Աղձնիք, Արմէ-Շուպրիա, Սիւնիք, Տարօն աշխարհների հազար-հազար մարդիկ «Քարահունչ» եկել, Արամազդի որդիներ՝ Անահիտի ու Նանէի եղբայր, կենսատու լոյսի արեւ աստուած Միհրի տօնախմբութեանը մասնակցելու: Արմին-հայերի Յունիս ամսուայ 21-ի այգեբացի «Արեւակայք-Արեւադարձ»-ն էր: Սարահարթի կեդրոնում փոքր քարերով երիզուած լայն շրջանակ էր, որտեղ կանգնել էին Արմինայի տաճարների քուրմերը, հայոց իշխանները: Սիւնիք աշխարհի Միհրի տաճարի քուրմը, շրջանակի կեդրոն էր հրաւիրել Արատտա երկրի Մեծամոր ոստանի աստղագէտ քուրմ Արագին կատարելու արեւ աստուած Միհրի արեւադարձ-արեւակայքի յայտնութիւնը: Այսպէս էր նա խօսել.*

*«Արմինա աշխարհի մեհեանների քուրմեր, իմաստուն իշխաններ, աշխարհական մարդիկ՝ գնացէ՛ք քարերի մօտ, նրանց անցքերին ամրացուած թափանցիկ նիւթի հայելիով դիտեցէ՛ք «Տիր Կաթին» աստղաբոյլից արեգակի անցումը երկիր-մոլորակի հիւսիսային լայնութիւնից դէպի հարաւ: Թմբուկներ զարկէ՛ք, փողեր հնչէ՛ք արեգակն է եկել, զուարթ շողերով աւետում Արմինա աշխարհի Արաց (Յունիս) ամսուայ 21-ի այգեբացի գալուստը: Հորիզոնում լոյսի զուարթ շողեր են, արեգակն է գալիս ամառ բերելու Արմինա աշխարհին: Իշխաններ, աշխարհական մարդիկ «Զօրաց Քարեր»-ի շուրջը պար բռնէ՛ք, գրկեցէ՛ք նրանց, շոյէ՛ք նրանց մամուռը՝ Արմինա աշխարհում ամառ է: Գրկեցէ՛ք արեգակին, նրա շիկնած վարսերը գգուեցէ՛ք, նրա լոյսով ողողեցէ՛ք ձեր դէմքերը, Արա աստուծոյ մէջքի գօտիին հազար գոյնի լոյս է: Գիւների հրավառութիւն է հայոց աշխարհում, Արտերի երեսին կանաչ շապիկ է, ցորեանի գլխիկներին հասկեր են պայթել, ցորէնն է ծաղկել, ցորէնի ծաղկի բոյր... հայոց ծովածոցից եկած զեփիւռի քնքշանքի թեւերին յենած պար էին բռնում: Ես, մուսաների չէնի մանչ, թեւերս տարածած մեր արտում պար բռնել ցորեանի հասկերի հետ, քրքջացել, ծիծաղել, վազել ճպլանի թփիկներ փրցրել հողից: Նրանց հետ կանաչ հասկերով փունջ կազմել, կապել մի հասկով, գնացել տուն, այն կրակի բոցին պահած խորովել, մանրել ափիս մէջ... համով էր, խորոված ցորենի կանաչ հատիկներ, քչեր նրա համը գիտեն, չէ-... ամէն անգամ որ մտքով մեր լերան լանջեր, մեր տուն «գնամ» հիւանդ եմ լինում: «Հիւանդացել» է հայրենի տունը կորցրած Հայը, եւ դեռ խօսում են, առարկում են... ամօթի խարան նրանց ճակատներին, եթէ ունեն ամօ՛թ...:*

*Ամառ է, մուսաների լերան լանջերի հազար գոյնի նարկիզների, գլխիկոր մանուշակի, սեւուկ աչուկներով խաշխաշի ալ կարմիր ծաղկունքի, գլխիկներին սպիտակ ծաղիկների փունջերով դափնիների, հրավառ նռնենիների հազար գոյների հրավառութիւն էր արեգակին... Ժպտում էր արեգակը, արեւորդի դուն ալ Ժպտայ արեգակին: Այդքան գոյն ո՞րտեղից: Եւ դեռ ինչքա՜ն գոյների ծնունդ արմինների հողին: Հայրենիք վերադարձած նկարիչ Մարտիրոս Սարեան գոյներ շաղ տուել իր յօրինած նկարների պաստառներին, օտար մի նկարիչ դիտել նրա նկարները, ճշմարիտ չի համարել նրա պատկերների հազար երանգի գոյները, երբ Հայաստան էր ժամանել էր, դիտել նրա առաւօտը ... բացականչել՝ ճշմարիտ են Մարտիրոս Սարեան նկարների գոյները, նրանք իր երկրի առաւօտնն են...:*

*Ամառ էր, արեգակը հայոց աշխարհի արտերում, այգիներում, նրա լեռների լանջերին կրակի հանդէսի հրավառութիւն էր անում: Հայոց աստուծաների «Տիր Կաթին»-ի իրենց տաճարից Արմինա աշխարհ բերած «Տիրան»-ն է հասնում, տեսե՞լ էք հասած պտուղներով ծիրանի ծառ, ձեր հոգիների տաճարներում նախնիների հաւատի ջահի լոյսը չի՞ բռնկել, իմ մանուկ սրտում մեր պարտէզի ծիրանի ծառնի յուշն է բուսել: Ո՞վ էր ծիրանի ծառերի վրայ այդքան լոյսի շողեր կաթել, լոյսի ու կրակի համ լցրել ծիրանի պտուղներին: Արմին-Հայ արի մարդ, գնացե՞լ ես քու երկրի այգիներ, «Արայի գահ»-ի լանջերի հովիկներն էին պար բռնում ծառերի հազար գոյներով շաղախուած թեւերի հետ, պիտի տեսնէիր բնութեան հրաշախաղը, քու սիրտն էր նրա հեւքով պիտի ղողար, որպէս քու նախնիների մեհեան պիտի գրկէիր նրանց: Արտերում ու այգիներում հայրենի մշակներ քրտինք էին ցողել հողին, հողն էր բերրիացել, քու դուշմանը այգիների ու արտերի արարումը գողացաւ:*

*Երկիր էինք վերադարձել, պետութիւնը մի փոքրիկ կտոր ամայի հող տուեց, ասացին տուն պատէք: Հայկական Կամաւորական Լեգէոնի կապորալ Արմենակ հայրս հողամաս եկել, նայել հողին, կանչել՝ «Պօղոս, տղաս, այս հողում ծառ չի աճի»: Ծունկի խորութեամբ հողն էր փորել, ազատել այն փխրուն անպէտ քարերի շերտից, մաքուր հող արարել, այդպէս էին Մուսա Լեռցի չէների մարդիկ հող ստեղծել իրեն լեռների լանջերի դարաւանդներին: Ամառամուտի մի առաւօտ, հայրս խաղողի տնկիներ գրկած տուն եկել: Հողամասի մէջտեղի հողին երեք շարք խաղողի տնկիները տնկել, պատուիրել հողամասի ճակատին ծիրանի ծառ տնկել, որ տան պատշգամբին իր երկրի լոյսը փռէր, նրա երկու կողմերին ամառային երկու տանձենիներ, հողամասի աջ ու ահեակ եզրերին կեռասի եւ այլ պտղատու ծառել տնկել: «Ահա քեզ պարտէզ», ասել հայրս, «մեր պատէզներում Պօղոս հօրս ու իմ տնկած ծառերը թուրք դուշմանին տուին, Պօղոս հայրիկիս ու իր նախնիների յիշատակին այս ծառերը տնկեցի, աշխարհների որ ճամբաներով հայը անցաւ ծառ տնկեց, ծիրանի ծառ, խաղողի թարմաներ, այն իրենց նախնիներին խաչեր համարեց: Ծաղկեց այգիս, ծաղկեցին ծառերը ու որթատունկերը, արեգակի ճառագայթների ներուժով պտղակալեցին ծառերը, արեգակն էր եօթ գոյների փունջերը փռել ծառերի սաղարթներին, թարմաների վրայ խաղողի ողկոյզներն էին հովիկներից մեղմիկ շարժւում, արեգակի շողերի բռնկած լոյսն էր հոսում սրտից ու հոգուց տաճարների խորաններ...:*

*«Հայ Արիական Միաբանութեան Հոգեւոր Յանձնախումբ»-ի քրմական դասի նախաձեռնութեամբ, Յունիս ամսուայ 21-ին, Քարահունչի սարահարթի տարածքում, Արմին-հայեր տօնախմբում «Ողջախոհութեան, Իմաստութեան, Մայրերի Երկունքի Պահապան, Մանչերի Հովանաւոր» Նանէ դիցուհու տօնը, նաեւ կատարում արեգակի ամառային արեւադարձի ծէսը: Քուրմ Արմօղը, Նանէ-ին նուիրուած տաղիկներ էր երգել: Ամէն տարի այստեղ, Արագ-Արածանի գետի ափերին տօնախմբում Նանէ դիցուհու տօնը, փառաբանում նրա իմաստութիւնը, փառաբնում արեգակի ամառուայ նոր լոյսի ճառագայթների հրավառութիւնը: Գինի ըմպէ՛ք, ծիսական պարեր կատարէ՛ք ի փառս Նանէի ու արեւագալի յայտնութեան»: Քուրմ Արմօղ իշխաններին ու աշխարհական մարդկանց հրաւիրել դիտել քարերին բացած անցքերից տիեզերքի հեռուների աստղերին եւ նրանց վրայի փորագրութիւններին...:*

*Արմին-Հայ արի մարդ, անչափ փոքրացած Հայաստան երկրում քու ցեղի հանճարի լոյսն ես աշխարհներ ճառագում . . . ազգերի հետ ժողովի նստում... քու նախնիները գրելու ու յիշատակութեան արժանի շատ գործեր են կատարել... քու աշխարհին մօտիկ շատ երկրների ժողովուրդների յետնորդներ չկա՜ն: Քու ցեղի մարդկանց առանձին սերունդները իրենց նախնիների աւանդութիւնների ջահերը փոխանցում նոր սերունդներին եւ այդպէս շարունակ ... ցեղիդ բերել մինչեւ նոր օրեր...: Ես, «Մուսա Լերան» լեգէոնական զինուոր Արմենակի զաւակ, իմ կեանքի քսան ու աւել տարիներին, ցեղի նախնիների, դուշմանի սիրտը պատռող լեռնական քաջերի սխրանքն եմ երգել, նրանց յիշատակութեան արժանի գործերը պատարագել, նրանց ջահի լոյսի մի ծուէն փոխանցել սերունդներին:*

*Այսպէս, հազար-հազար տարիներ յետոյ էլ վանական իմաստուն Նարեկի սրտում պայթել էր նախնիների աստուածների իմաստութեան հրդեհի բոցերի կրակը, Աստղիկ դիցուհու Վարդավառի հանդէսին նուիրել՝ իր իմաստուն մտքից ելած՝ նախնիների ջահի լոյսի մի փունջ՝*

Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից:

Ի վեր ի վերայ վարսից ծաւալէր ծաղիկ ծովային:

Ի համատարած ծովէն պղպջէր գոյնն այն ծաղկին,

Երփին երփնունակ ծաղկին շողշողէր պտուղն ի ճղին:

*Եւ նորէն ուրիշ մի իմաստուն այր՝ Ներսէս Շնորհալի, նախնիների լոյսի ջահի շողերից երկնել արեւադարձին նուիրուած «Առաւօտ Լուսոյ» շարական-երգը եւ ուրիշ երեք տաղեր նուիրել նախնիների հաւատի արեգակի անուշ, տաքուկ լոյսին:*

Առաւօտ լոյսի՝
Արդար Արեգակ,
Ինձ վրայ լոյս ծագեցրու
Բխումն հորից,
Բխիր հոգուս մէջ
Խօսք՝ քեզ հաճելի

*Քու նահապետի երկրից հեռացած արեւորդի Արմին Հայ մարդ, ամառ է... յիշո՞ւմ ես երկրիդ ամառը...: Չէ՜, այն ուրիշ ամառ էր: Այնտեղ արեւոտ լոյս էր: Ոստանը գրկել էին այրարատեան դաշտի մայրացած այգիները, «Տիրան»-ի հագուստ կապել Այրարատ աշխարհին: Ամառ... մարդ կարծես թեւանում է, կարծես թռչելու երկրի երկնակամարում անցնող կռունկների երամներին հասնելու, հայրենի երկրից անուշ խապրիկ մը տանելու օտարութիւնում տուայտող Արմին-Հայ քոյրերիդ ու եղբայրներիդ: Քայլում էինք արեւի հետ, չէինք վախենում անոր ջերմից, այն մեր մարմինները էր զօրացնում: Արեւի հետ խրոխտ քայլում մայր ոստանի փողոցների մայթերով, հսկայ սօսինները իրենց խոշոր տերեւները փռում մեր վրայ, ոստերից կախուած գնդիկներն էին օրօրւում, զարկում իրար, ցաւից խշշում: Պարթեւը սպաննեց իրենց պաշտամունքին նուիրուած «Սօսանուէր Իշպուինի-Անուշաւան»-ին, որ իր վախճանը չգուշակէր...:*

*Ամառ էր, Շաբաթ ու Կիրակի օրերին մանչերիդ հետ գնում ոստանի մանկական այգիներ, խաղում, վազում, ջուր ցանում իրար վրայ, տիկնոջդ հետ նստարաննե-*

Շար.ը էջ 17

# Արեգակն է եկել

Շարունակուած էջ 16-էն

րին նստած տան պակաս մնացած գրոյցը շարունակում: Ցայտաղբիւրներից վճիտ, մաքուր ջուր ըմպում, Արմին-Հայ մարդ, այստեղ ցայտաղբիւր չկայ, «Կուլա»-ով ջուր ծախող տղայ չկայ, հովեկներ զարմանում ցայտաղբիւրներից շատրուանող ջրերի հոսքից, կուշտ-կուշտ խմում... առանց վճարի էր: Այստեղ մանկական այգիներ չկան, ո՞ւր են վազվզում, նրանց նոյնիսկ բակ չես թողնում, մե՜ղք չեն: «Քսան Վեց Կոմիսարներ»-ի այգի, ջրանցքներով ջուրն էր շրջան անում, փոքրեր ջրեր իջնում, լողանում, ջուր ցանում իրար վրայ: «Քսան Վեց Կոմիսարներ»-ի այգի, ոստանի մարդիկ «Անգլիական Այգ»-ի էին անուանում այն: Ամառ էր, Երեւանում Անգլիական գինուորների մի ջոկատ էր պարեկում, նրանց կեդրոնատեղին այդ այգու տարածքում էր, տաքից պատսպարուելու համար ծառեր էին տնկել, նրանց տնկած ծառերից դեռեւս կանգուն են, արեւից պաշտպանում Հայոց մանչերին:

Ամառ էր... հանգստեան օրերին գնում քաղաքից հեռու, ըմբոշխնելու երկրի բնութեան սքանչանքը, լեռների պաղ ու անուշ հովիկների կենարար ուժի զգուանքը: Գնում հասնում ոստանի հիւսիսային կողմեր, որտեղ ծառերի ստուերները, ձիւնոտ լեռներից հասնող հովիկները հոգեպարար հանգիստ պարգեւում: Է՜հ, Արմին-Հայ արի մարդ, բնութեան գրկում քու պատրաստած խորոված ուրիշ համ ունէր: Մանչերդ գնում մօտակայ բացատներ՝ ալուան ծաղիկների փունջեր կապում:

Ամառ էր... գնում Ծաղկաձոր աւանի «Գարուն» ու այլ «Պիոներ» ճամբարներ, ամառային արձակուրդ, որտեղ մեր մանչերը իրենց ուսումնական տարուայ յոգնածութիւնն էին թօթափում, ծաղկաձորի ծաղկունքի ու արեւի մեղմիկ շողերի անդորրն էր իջնում իրենց սրտերին: Արեւագալին, իրենց հայրենի երկրի դրօշակի «Բարձրացման» հանդէս էին անում, լեռների հովիկները նրա գոյները տանում Թեղէնիսի լեռների լանջերի կանաչին փռում, հայրենի երկրի դրօշակի հանդէսը մանչերիդ հոգիներում երկրիդ սիրոյ լոյսը վառում: Քու նոր կացարանի տան շեմի առաջ, երկրիդ դրօշը պարզելու համար, այլ ազգի պատկանող դրացիդ կռիւ տալիս քեզ հետ ... ափսոս՝ Արա աստուծոյդ գօտիի արեւավառ գոյներին: Ափսոս քու մանչերիդ, հոգով ծախու վաշխառու մարդիկ քեզ հանեցին քու պատած տնիցդ: Ծաղկաձոր, նրա ձորակների լանջերին արարչագործ բնութեան ծաղկունքի հրավառութիւն էր, բարձրադիր մասերում անտառներ, մայրի ծառերի պուրակ, պատմում էին, որ հեռու Ռուսաստան-Պիտրզբուրգ քաղաքի ազնուական մի Ռուս մարդ այն պատուիրել էր տնկել . .. ամառներին ընտանիքով իրենց հանգիստը վայելելու:

Ամառ էր... գնում հանգստանում Գեղամայ-Սեւան ծովի ափեր: Հայկ Նահապետի տոհմից Գեղամ, իր զաւակ Հարմային թողնելով Արգիշտի-Արմայիսի Արմինա երկրի արքայի ոստան Արմաւիր քաղաք, ինք գնացել բնակելու արեւելեան կողմը հիւսիսի ծովակի ափեր: Իր անունով Գեղարքունիք կոչել լեռները, ծովակը՝ Գեղամայ ծով: Արմինա-Հայաստան երկիրը երեք ծովերի երկիր էր Վանայ, Կապուտան, Գեղամայ: Բաց ծով չունէր, սակայն ծովերի չափ լիքը ջրերով... Վանայ, Կապուտան, Գեղամայ ծովեր, որոնցից Գեղամայ ծովն է միայն մնացել քեզ: Ճեղքել էին նրա կողը, հազար-հազար տարիների նրա սրտում ամբարուած ջուրը բաց ու ստորգետնեայ առուներով գնացել անիւներ պտտացրել, որոնց պտոյտից յառնած էլեկտրական լիցքերը Ռուսի ենթակայութեան գործարանները աշխատացրել: Անխոհեմ ու ծախու մարդիկ ծրագրել էին այնքան ջուր հոսել ծովից, որից այն կողմը ծովը արդէն կը մեռնէր . . : Ծովի ջուրն էր 18 մեթր խորութեան նուազել, սպիտակել էին ափերը, «ծերացել» էր ծովը, 1416 կմ2 երեսը նուազել էր 160 կմ2, ջրի 58.5 միլիարդ մեթր3 ծաւալը պակասել էր 24.5 միլիարդ մեթր3: Կղզին թերակղզի դարձել: Հայոց հին աստուածները եկել կղզի, ծովի ջրի տօնախմբութիւն կատարել, Աստղիկին նուիրուած վարդավառ տօնախմբել: Հայոց հին աստուածների իմաստութիւնը մարելուց յետոյ կղզում եկեղեցի պատել, այնտեղ էլ մոմ վառե՞լ...: Արդեօք քեզ պատմե՞լ են, Բագրատունի Աշոտ Երկաթ թագաւոր իր զօրախմբով կղզի ելել, յաղթական ծովամարտ մղել կղզի ներխուժել յանդգնող արաբական զօրքի դէմ: Որպէսզի ծովը «չմեռնէր« հարբեցրին, խաբեցին երկրի մեծին . . . հրամանագիր ստորագեց պետութեան դրամով 48 կմ փապուղի բացել, որ Արփա գետի ջրերը ծով վազէին, կենսունակութիւն պարգեւէին նրան, նորէն արեւահուր աստղերով իշխանաձկներ լող տային նրա ջրերում:

Ամառ էր... մանչերի հետ Գեղամայ ծովի ափին էիք, պաղ են նրա ջրերը, արեւի անդրմանիշակագոյն ճառագայթները այրում մարդու մարմինի բաց տեղերի մաշկը, որի ներքին ճարպը մարդու մարմնի խիստ անհրաժեշտ D-3 կենսանիւթի համադրութիւն արարէր: Բարեկարգել էին ծովի ափերը, ամառներին ոստանի շատ մարդիկ գալիս ծովափ: Մանչերի խնդրաքով «Միկոեան» անունով նաւով պտոյտ կատարում բաց ծովում, «Իշխան» ձկներն էին նաւի ընթացքի հետ լող տալիս, արեւի ճառագայթներն ընկնում նրանց վրայ, աստղերի լոյս էր վառւում ջրերի երեսին:

Արի Արմին-Հայ մարդ, ամառ էր, ծովափի հովանոցի ստուերին էինք: Երկու ձեռքերով ձմերուկի շերտեր պահած ձմերուկ ուտում, կողքով անցնող հովեկների փոքր տղան հայեացքը մեր կողմն էր յառել, իրենց խօսքից երեւում Գերմանացի էին, Է՜հ գերմաններ ինչեր էք արել մեր երկրին, մեր գլխին, մեր ազնուազարմ Արմին ցեղին...: Կանչել էի մօտ գալ, խոշոր շերտ ձմեռուկ մեկնել, խմբի մարդիկ սկսել հերթով այն ճաշակել: Նորէն էի կանչել, խմբից մէկին մօտեցել, մի քանի խոշոր շերտեր էլ հրամցրել, Անգլերէն լեզուով հասկացրել, որ Հայ-Armenian մարդիկ էինք, եւ որ մեր նախնիների հեթանոս Աստուած Վանատուրն էր պատուիրած եղել՝ «Ինչ ունես բաժին հանիր քու մօտից անցնող մարդկանց»: Վանատուր աստուծոյ լոյսն էի վառում ծովի ափին: Նորէն «Վանատուր» կանչեցի, գրաբեցին, բացատրեցի Վանատուրի իմաստը: Արմին-Հայ արի մարդ, մոռացե՞լ ես Վանատուրին... Չէ ...:

# Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան

Շարունակուած էջ 8-էն

Միութիւնը իր ազգաշէն գործունէութեան ընթացքին, խորապէս ըմբռնած ըլլալով Հայ Առաքելական Եկեղեցիի դերի կարեւորութիւնը, հայ ժողովուրդի ինքնութեան, հայ ազգի գոյապահպանումին, դաստիարակութեան, հոգեւոր ու բարոյական արժէքներու մշակումին ու համայնքային կեանքին եւ հոգեմտաւոր կազմաւորումին մէջ, միշտ գործակից եւ աջակից եղած է անոր:

Անցնող տասնամեակներուն, քաղաքական, ընկերային եւ տնտեսական զարգացումներու պատճառով, մեր աշխարհատարած համայնքները տարբեր բնոյթի ծանր մարտահրաւէրներ դիմագրաւած են եւ կը շարունակեն դիմագրաւել, իրենց առօրեայ կեանքին առընթեր, նաեւ ազգապահպանումի իրենց պայքարին մէջ: Միութիւնը, միշտ հաւատարիմ իր առաքելութեան, քայլ պահած է սփիւռքի հայ համայնքներու շարժերուն, փոխուող պայմաններուն եւ կարիքներուն հետ, նոր միջոցառումներ, նախաձեռնութիւններ եւ կրթական ծրագիրներ մշակելով, որոնք կազմաւորուող նոր սերունդը ուղղակիօրէն կը կապեն հայրենիքին:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը իր հիմնադրութեան առաջին իսկ օրէն, պայքարած է հայրենիքի հզօրացումին եւ հայրենի պետականութեան ուժեղացումին ի խնդիր, անկախ տիրող համակարգերէն: Այդ պայքարը, յաճախ եղած է ի գին ծանր զոհողութիւններու, քաղաքական եւ ապահովական ծանր պայմաններու տակ, հաւատալով, որ հզօր հայրենիքը եւ զօրաւոր պետականութիւնը, մեր ազգի գոյատեւումի գրաւականներն են, նաեւ ազգապահպանումի կայուն կռուան, սփիւռքի հայութեան համար:

Հ.Բ.Ը.Մ.ը իր գործունէութիւններու ծիրը ընդլայնած է Հայաստանի եւ Արցախի մէջ, յատկապէս անկախութենէն ետք իր շեշտուող ներկայութեամբ, բազմաթիւ ծրագիրներ իրականացնելով կրթութեան, մշակոյթի, առողջապահական եւ ընկերային-տնտեսական ոլորտներուն մէջ:

Տասնամեակներ շարունակ, տարբեր բնագաւառներու մէջ իր շարունակուող օժանդակութիւններուն կողքին, կրթական բնագաւառէն ներս Միութեան նորագոյն եւ ամենածաւալուն ծրագիրներէն, կը յիշենք անոր դերը, Հայաստանի Ամերիկեան Համալսարանի հիմնադրութեան եւ զարգացումին մէջ, որուն արդիւնաւորութիւնը տարածաշրջանէն ներս, այսօր յայտնի է բոլորին:

Մեր մասնակցութիւնը Հայորդեաց Տուներու նախաձեռնութեան, Մայր Աթոռի գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ, հազարաւոր պատանիներու դաստիարակութեան ու տաղանդներու մշակումին ի նպաստ, աւելի քան քսանհինգ տարիներու շարունակուող գործունէութեամբ, կրթական հիմնարար ներդրում մըն է իր կարգին:

Կը նշենք նաեւ Հայկական Վիրտուալ Համալսարանը, որ հիմնուած Հ.Բ.Ը.Մ.ի Հարիւրամեակի նախօրեակին, առցանց մուլդիմիտիա ուսուցման զարգացման մարզին մէջ ճարտարագիտական նորարարութեան առաջնորդող նախաձեռնութիւն մըն է եւ կրթական ծրագիրներու մշակումի տասնհինգ տարիներու իր փորձառութեամբ, կարելիութիւններով եւ աշխարհատարած հասողութեամբ, այսօր դարձած է Հայաստանի կրթական նախարարութեան կարեւոր գործակիցներէն մին:

Միութեան կարեւոր ներդրումներէն է նաեւ Թումօ ստեղծարար ճարտարագիտութեան կեդրոնի գործունէութեան ընձեռած անոր աջակցութիւնը, յատկապէս Կիւմրիի եւ Ստեփանակերտի մէջ մասնաճիւղերու ստեղծումով:

Ասոնց շարքին կարեւոր գործունէութիւններ են նաեւ նախաձեռնողական-գործարարական կարողութիւններու մշակման, համայնքային կեանքէն ներս կանանց դերի զօրացման եւ քաղաքացիական հասարակութեան զարգացման տարբեր ծրագիրները: Միութեան շարունակուող ներդրումներէն են նաեւ բարձրագոյն կրթութեան հաստատութիւններու պարագային, Երեւանի Պետական Համալսարանին, Պետական Բժշկական Համալսարանին, Փոլիթէքնիք Ինստիտուտին եւ այլ ազգային կառոյցներու տրամադրուած մշտական աջակցութեան առընթեր, Ֆրանսական Համալսարանին, Ազգային Մատենադարանի հրատարակութիւններուն եւ երիտասարդ գիտնականներուն տրամադրուած աջակցութիւնը, երիտասարդ հոգեւորականներու արտասահմանի մէջ կրթութեան տրամադրուող եւ այլ բարձրագոյն ուսման կրթաթոշակները:

Հետեւաբար, որպէս համընդհանուր ազգային կազմակերպութիւն որ հաղորդ է սփիւռքի համայնքներու կեանքին եւ քաջածանօթ հայրենի իրականութեան, որ նաեւ իր գործօն մասնակցութիւնը կը բերէ սփիւռք-հայրենիք սերտակցութեան սատարող աշխատանքներուն, քաջատեղեակ անոնց փոխադարձ ակնկալութիւններուն եւ կարիքներուն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, ինչպէս միշտ, պատրաստ է բերելու իր մասնակցութիւնը հայրենի ծրագիրներուն, ինչպէս նաեւ կրթական ծրագիրներու մշակման այս հանգրուանին, ընդառաջելով ի հարկին կրթական նախարարութեան առաջարկութեան:

Մեր թելադրութիւնն է նաեւ որ նախարարութիւնը շարունակէ առանց փութկոտութեան, շրջահայեցողութեամբ գործել, չափորոշիչներէն բխող ծրագիրներու մշակումին, ուսուցման որակի ապահովումին եւ դասանիւթերու ընտրութեան աշխատանքներուն մասնակից դարձնելով ազգային տարբեր կառոյցներու ներկայացուցիչներ եւ պատմութեան ու մշակոյթի տարբեր բնագաւառներու, նաեւ Հայ Եկեղեցիի Պատմութեան ծրագրին առնչուած Մայր Աթոռի Կրթական Ենթախումբի մասնագէտներ:

Կարեւոր է նաեւ շարունակաբար հանրութիւնը իրազեկել, գիտակցելով փոփոխութեան եւ նորարարութեան նկատմամբ անոր զգուշաւորութեան, զգայնութիւններուն եւ մտահոգութիւններուն:

Մեր անկեղծ մաղթանքն է որ Հայաստանի կրթական բարեփոխումին եւ արդիականացումին լծուած կրթական նախարարութեան ճիգերը յաջողութեամբ պսակուին, ի շահ մեր հաւաքական նպատակներու իրականացումին:

**Հ.Բ.Ը.Մ.Ի ԿՐԹԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

## «Արսենալը» Յաղթեց «Չելսիին» եւ Նուաճեց Անգլիայի Գաւաթը




Լոնտոնի «Արսենալը» 14-րդ անգամ (բոլորէն շատ) նուաճեց Անգլիայի գաւաթը: Լոնտոնի «Ուեմբլի» մարզադաշտին մէջ տեղի ունեցած եզրափակիչ խաղի ընթացքին սպանացի Միկել Արտետայի գլխաւորած խումբը մրցեցաւ լոնտոնեան «Ջելսիի» հետ եւ տարաւ յաղթանակ 2:1 հաշուով՝ նուաճելով նաեւ Եւրոպայի լիգայի խմբային փուլի ուղեգիր:

Անգլիացի Ֆրենկ Լեմպարդի գլխաւորած խումբը հանդիպման հաշիւը բացաւ արդէն 5-րդ վայրկեանին: Աչքի ընկաւ ամերիկացի կիսապաշտպան Կրիստիան Պուլիշիչը:

28-րդ րոպէին «Արսենալը» ստացաւ 11 մեթրանոցի իրաւունք, որն արդիւնաւէտօրէն կատարեց գաբոնցի յարձակող Պյեր-Էմերիկ Օբամեյանգը: 67-րդ րոպէին նա դարձաւ դուբլի հեղինակ: 73-րդ րոպէին երկրորդ դեղին քարտի համար հեռացուեցաւ «Ջելսիի» խորուաթ կիսապաշտպան Մատեո Կովաչիչը:

Նախորդ անգամ «Արսենալը» Անգլիայի գաւաթը նուաճած էր 2017-ին՝ դարձեալ 2:1 հաշուով պարտութեան մատնելով «Ջելսիին»:

## Իտալիոյ Առաջնութիւնը Աւարտեցաւ. Ռոման Գրաւեց 5-րդ Տեղը

Օգոստոս 2-ին աւարտեցաւ ֆուտպոլի Իտալիոյ առաջնութիւնը: Հենրիխ Մխիթարեանի Ռոման 70 միաւորով գրաւեց 5-րդ տեղը եւ յաջորդ մրցաշրջանին պիտի խաղայ Եւրոպայի լիկային մէջ:

Աւարտած մրցաշրջանի ընթացքին Մխիթարեանը մասնակցեցաւ 22 խաղերու, արձանագրելով 9 կոլ, կատարեց 4 կոլային փոխանցում: Մասնակցած խաղերու ու կոլերու յարաբերակցութեամբ այս Մխիթարեանի լաւագոյն տարին էր 2012-2013 մրցաշրջանէն յետոյ:

9-րդ անգամ անընդմէջ Իտալիոյ ախոյեանի կոչումը նուաճեց Եուվենթուսը: Յաջորդ տարի Եուվենթուսէն բացի Ախոյեաններու Լիկային պիտի մասնակցին նաեւ Ինտերը, Ատալանտան եւ Լացիոն: Սերիա Ա-էն հրաժեշտ տուին Լեչէն, Բրեշիան եւ Սպալը:

## «Միլան» Կը Կրկնապատկէ Իբրաիիմովիչի Աշխատավարձը

Իտալիոյ «Միլանը» կը կրկնապատկէ 38-ամեայ շուէտացի յարձակող Զլատան Իբրահիմովիչի աշխատավարձը: Իտալական ակումբը համաձայնութեան եկած է ֆուտպոլիստի հետ պայմանագիրը մէկ տարիով երկարաձգելու:

Իբրահիմովիչը նոր պայմանագրով կը ստանայ շաբաթական 115 հազար եւրօ աշխատավարձ:

Յունուարէն սկսեալ «Միլան» կազմէն ներս հանդէս եկող Իբրահիմովիչը Իտալիոյ առաջնութեան եւ գաւաթի խաղարկութեանց մասնակցած է 19 խաղերու եւ արձանագրած է 10 կոլ:

## «Ինտերը» Մեսիին 4 Տարուայ Համար Կ’առաջարկէ 260 Միլիոն Եւրօ

Միլանի «Ինտերը» կը ցանկայ 2021թ. Յունիսին չորս տարուայ պայմանագիր կնքել «Բարսելոնայի» արժենթինացի յարձակող Լիոնել Մեսիի հետ, կը հաղորդէ gazetta.it-ը:

«Ինտերը» պատրաստ է 33-ամեայ ֆուտպոլիստին չորս տարուայ համար վճարել 260 միլիոն եւրօ:

Յաջորդ ամրանը կ’աւարտի Մեսիի պայմանագիրը կատալոնական ակումբի հետ: Համագործակցութիւնը երկարաձգելու վերաբերեալ բանակցութիւններ կողմերը դեռ չեն ունեցած:

Այս շաբաթ յայտնի դարձաւ, որ Մեսիի հայրը բնակարան գնած է Միլանի մէջ՝ «Ինտերի» գրասենեակի մօտ:

## Ջուիցերիոյ Դատախազութիւնը Դատական Հայց Ներկայացուցած է ՖԻՖԱ-ի Նախագահին Դէմ



Ջուիցերիոյ դատախազութիւնը դատական հայց ներկայացուցած է ՖԻՖԱ-ի նախագահ Ջանի Ինֆանտինոյի դէմ:

Նշանակուած նոր դատախազը՝ Ստեֆան Կելերը, պիտի քննէ Ինֆանտինոյի ու գլխաւոր դատախազ Մայքլ Լաուբերի գործը: Վերջինս թաքցրած է հանդիպումը Ինֆանտինոյի հետ, այն ընթացքին, երբ իր խումբը կը հետաքննէր ՖԻՖԱ-ի դէմ գեղծարարութեան մեղադրանքը:

Ինֆանտինոն 2016 թուականին փետրուարի 26-ին ընտրուած է ՖԻՖԱ-ի նախագահ՝ քուէարկութեան երկրորդ փուլին հաւաքելով 115 ձայն 207 հնարաւորներէն:

## Եուրգեն Կլոպը՝ Ալեքս Ֆերգիսոնի Անուան Մրցանակի Դափնեկիր



Անգլիոյ ախոյեան «Լիւերպուլի» 53-ամեայ գերմանացի գլխաւոր մարզիչ Եուրգեն Կլոպը արժանացած է «Մանչեսթեր Եունայթըդի» նախկին գլխաւոր մարզիչ Ալեքս Ֆերգիսոնի անուան մրցանակին, կը հաղորդէ լիւերպուլեան ակումբի մամուլի ծառայութիւնը:

Անգլիոյ մարզիչներու ընկերութիւնը Եուրգեն Կլոպին ճանաչցած է Պրեմյեր լիգայի աւարտած մրցաշրջանի լաւագոյն մարզիչը:

«Լիւերպուլը» ախոյեանի տիտղոսը նուաճեց՝ վաստակելով 99 միաւոր: Երկրորդ տեղը գրաւեց «Մանչեսթըր Սիթին» առաջնութիւնը աւարտելով 81 միաւորով:

## Forbes Ամսագիրը Կը Ներկայացուցած է Աշխարհի Ամենաթանկարժէք Սպորտային Ակումբները

Ամենաթանկարժէք ակումբներու առաջին տասնեակին մէջ տեղ գտած են ամերիկեան ֆուտպոլի 3, պասքեթպոլի 3, ֆուտպոլի 3 եւ պէյսպոլի 1 ակումբ:

Աշխարհի ամենթանկարժէք ակումբներու տասնեակը՝

«Դալաս» (ԱՄՆ, ամերիկեան ֆուտպոլ) - 5.5 միլիարդ տոլար

«Եանքիզ» (ԱՄՆ, պէյսպոլ) - 5 միլիարդ տոլար

«Նիւ-Եորք» (ԱՄՆ, պասքետպոլ) - 4.6 միլիարդ տոլար

«Լեյքըրզ» - (ԱՄՆ, պասքետպոլ) - 4.4 միլիարդ տոլար

«Կոլտըն Սթեյթ» (ԱՄՆ, պասքետպոլ) - 4.3 միլիարդ տոլար

«Ռեալ Մադրիդ» (Սպանիա, ֆուտպոլ) - 4.24 միլիարդ տոլար

«Նիու-Ինկլընտ« (ԱՄՆ, ամերիկեան ֆուտպոլ) - 4.1 միլիարդ տոլար

«Բարսելոնա» (Սպանիա, ֆուտպոլ)-4,02 միլիարդ տոլար

«Նիւ Եորք Ճայընթ» (ԱՄՆ, ամերիկեան ֆուտպոլ) - 3.9 միլիարդ տոլար

«Մանչըսթըր Եունայթըդ» (Անգլիա, ֆուտպոլ) 3,8 միլիարդ տոլար

## ՄՅՈւ-ն Փոխարինող Գտած Դէ Խեային



«Մանչեսթեր Եունայթեդը» փոխարինող գտած է խումբի դարպասապահ Դաւիդ Դէ Խեային: Այս մասին կը յայտնէ Mirror-ը:

Ըստ աղբիւրի՝ մանչեսթերեան ակումբի ղեկավարները դժգոհ են սպանացիի խաղէն եւ կը ցանկան նոր դարպասապահ մը ձեռք բերել: ՄՅՈւ-ի մէջ կը կարծեն, որ խումբի երիտասարդ դարպասապահ Դին Հէնդերսոնը, որ վարձավճարով կը խաղայ «Շեֆիլդի» մէջ, դեռ պատրաստ չէ հիմնական խումբին մէջ խաղալուն:

Կը հաղորդուի, որ ՄՅՈւ-ն կը մտածէ «Լեսթերի» դարպասապահ Կասպեր Շմեյխելին ձեռք բերելու տարբերակը: 33-ամեայ դարպասապահը դեռ 3 տարուայ գործող պայմանագիր ունի «աղուէսներու» հետ:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Ընկ. ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՖԵԱՆԻ մահուան առթիւ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկ. Ազատուհի Մութաֆեանին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

Այս առթիւ փոխան ծաղկեպսակի կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրողլեան $100
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Մարալ Ղարիպեան $100
Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեան $100
Տէր եւ Տիկ. Վարդիվառ եւ Նայիրի Կապուտեան $100
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Գոճապապեան $100
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան $100
Տիար Սարգիս Գալթագճեան $100

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՀՈՒՐԻ ՊԷՔՄԷԶԵԱՆ-ԿԻՒՏԷՇԵԱՆԻ մահուան տխուր առիթով Սան Ֆրանսիսքոյէն Տէր եւ Տիկ. Նայիրի եւ Մարինէ Պէքմէզեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Շահէ եւ Մարիժան Պէքմէզեաններուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի $150 կը նուիրեն «Մասիս»ին:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՀՈՒՐԻ ՊԷՔՄԷԶԵԱՆ-ԿԻՒՏԷՇԵԱՆԻ մահուան տխուր առիթով Սան Ֆրանսիսքոյէն Տէր եւ Տիկ. Ջաւէն եւ Ժանէթ Գնէլեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, յատկապէս ծնողքին՝ Տէր եւ Տիկ. Շահէ եւ Մարիժան Պէքմէզեաններուն, ամուսնոյն՝ Տիար Յարութիւն Կիւտէշեանին, զաւակներուն՝ Արային, Շահէին եւ եղբօր՝ Տէր եւ Տիկ. Սագօ Պէքմէզեանին:

Առ այդ փոխան ծաղկեպսակի $250 կը նուիրեն «Մասիս»ին:

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՀՈՒՐԻ ՊԷՔՄԷԶԵԱՆ-ԿԻՒՏԷՇԵԱՆԻ մահուան տխուր առիթով իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ծնողքին՝ Տէր եւ Տիկ. Շահէ եւ Մարիժան Պէքմէզեաններուն, ամուսնոյն՝ Տիար Յարութիւն Կիւտէշեանին, զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

Առ այդ «Մաասիս» շաբաթաթերթին փոխան ծաղկեպսակի կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները.

Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիւզան Պոյաճեան $200
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տեփոյեան $100
Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Սօսի Սաղրեան $100
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան $100

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՅՈՎՍԷՓ ՃԻՃԻԵԱՆԻ մահուան տխուր առիթով Գէորգ Պարտաքճեան (Միշիկըն նահանգէն) իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Տիկ. Մարիին եւ ընտանեկան համայն պարագաներուն:

Առ այդ 100 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:

# Շահումեանի Շրջանի Մշակոյթի Կեդրոն

Շարունակուած էջ 14-էն

րող էինք շատ այլ տարբեր բաներ անել, օրինակ, մի քանի դպրոց կամ մանկապարտէզ վերանորոգել, և ցոյց տալու աւելի շատ բաներ կը լինէր: Բայց դա չէր մեր նպատակը: Մեր հիմնական նպատակն էր Քարվաճառում ապրող երիտասարդին իր քաղաքում մի լաւ, լուսաւոր կենտրոն ունենալու հնարաւորութիւն տալ:

Շինութեան հիմնանորոգումը նպատակ ունի շրջանում ակտիվացնել մշակութային կեանքը: «Շէնքային պայմանները բարելաւելուց յետոյ մենք ակնկալում ենք նաեւ ծրագրային փոփոխութիւններ, գործունէութեան ընդլայնում և ակտիւացում հենց մշակոյթի և երիտասարդութեան կենտրոնի շէնքում: Յուսով ենք, ակտիւօրէն կը կազմակերպուեն տարբեր մշակութային, ինչու չէ՝ նաեւ կրթական, զարգացնող ծրագրեր ամբողջ շրջանի երիտասարդների համար. և այս հարցում մենք պատրաստ ենք հետագայ համագործակցութեան»: «Արարատ» Հիմնադրամի նախագահը վստահեցնում է՝ եթէ շէնքի արդէն վերականգնուած հատուածներն ակտիւօրէն օգտագործուեն, իրենք կը մտածեն շէնքի նկուղային յարկը վերանորոգելու, այնտեղ ընդարձակ ցուցասրահ և տարբեր միջոցառումների համար սրահ կառուցելու մասին:

«Արարատ» Հիմնադրամի նախաձեռնած հիմնանորոգման աշխատանքներին աջակցել է նաեւ Շահումեանի շրջանի վարչակազմը: Մասնաւորապէս վարչակազմի նախկին ղեկավար Գագիկ Մարտիրոսեանի նախաձեռնութեամբ կենտրոնն ապահովուել է անհրաժեշտ տեխնիկայով և հիմնանորոգուել են շէնքի առաջին յարկում գտնուող սանհանգոյցները: Այժմ ընթացքի մէջ է նաեւ առաջին յարկի սենեակներից մէկի վերանորոգումը: Շէնքի բացումը նախատեսւում է անել Սեպտեմբեր ամսին:

«Արարատ» Հիմնադրամի կողմից

# Հայրենականչ

Շարունակուած էջ 15-էն

զարմը վերացնելով հայրենիք ստեղծել: Օտարն ինչքան փորձի այս հողի վրայ արմատներ ձգել, միեւնոյն է, նրա ծառը պտուղ չի տայ, ճիւղերը կը չորանան, մեր ջուրը կը չորացնի դրանց արմատները, մեր մաքուր, անապական սարերի առուակներից բխող ջուրը կը սրբի, կը տանի, կը կորցնի դրանց հետքերն անգամ:

-Է, Սոնա՛, Սոնա՛, ապա դուրս նայիր ու տես հողուդ վրայ ովքեր կ՛ապրին ու արմատներ կը ձգին: Պարապ խօսքեր են, աղջի՛կս, ալ սուտ է, ալ հողն էլ, ջուրն էլ մեզ չեն պաշտպանիլ, մենք ալ նրան դաւաճանեցանք, օտարու հողը գերադասեցանք, օտարու սուտ խօսքերուն խաբուեցանք, ոչ ոք չէր կրնալ մեզ կործանիլ, ծուէն-ծուէն, երկրի մի ծայրեն միւսը քշիլ, եթէ մենք միաբան ըլլայինք. հողը դաւաճանութիւնը չի ների, ան կը զգայ մարդուն հոգիին մաքրութիւնը: Մենք առաջին քրիստոնեայ ազգն ըլլալով՝ ո՛չ մեր Աստծուն հնազանդուեցանք, ո՛չ ալ մեր հողը սիրեցանք, աղջի՛կս, աղ է պատճառը, որ տարաբախտ գտնուեցանք. ո՛չ ներսում հանգիստ գտանք, ո՛չ՝ դրսում:

- Բայց չէ որ հային կոտրելը դիւրին չէ, պարո՛ն Բարսամեան,- չգիտես ինչու, անմիջապէս մտերմիկ տօնից պաշտոնականի անցայ: Եւ ցաւալին այն է, որ բոլորդ այստեղ ապրող մարդկանց էք մեղադրում: Բայց չգիտէք՝ մարդը մի փոր հաց վաստակելու, մի կերպ ընտանիքի գոյութիւնը քարշ տալու համար ինչերի միջով կարող է անցնել: Էլ չեմ ասում, թէ ինչպէս ենք ներսի գազանների դէմ պայքարում: Համաձայն եմ, հեռուից ձայնը քաղցր է հնչում, բայց ոմանք ստիպուած են այդ ճանապարհն ընտրում, այլ ելք չգտնելով, ոմանք էլ, ցաւօք, գնում են աւելի լաւ ապրելու:

- Ջաւակս,- բնաւ քեզի բարկացնելու նպատակ չունէի,- գլուխս հայրաբար շոյեց Լիոնից եկած պարոն Խաչատուրը, որ ամէն կերպ ուզում էր դատապարտել երկիրը լքող մարդկանց:

- Կը ներէք ինձ, հայրի՛կ: Ուղղակի ձեր խօսքերը նետի պէս սիրտս են մխրճւում: Ինքս ինձ վրայ եմ բարկանում, ուզում եմ արարքիս արդարացում գտնել. մի բան, որ վիշտս կը թեթեւացնի:

Արցունքի ծանր կաթիլները՝ ժեռ քարերի պէս, ճանկռում էին ակնակապիճներս, լցւում բիբերիս մէջ: Մի պահ շուրթերս պաղեցին մեռելային սառնութեամբ, ասես Արարատի, Նեմրութի լանջերից փոթորկուող ձմեռնաշունչ քամին եկաւ լցուեց ոսկորներիս մէջ, ու հեւզհեւէ, ոտքերիցս բարձրացող անտանելի թմրութիւնը խլացրեց շուրթերիս պաղած հնչիւնները:

# Վերջին Հեքիաթը

Շարունակուած էջ 13-էն

քեզ..., դու ցաւեցրիր նրան..., չը համարձակուե՛ս, լսո՞ւմ ես..., ձեռք չտաս նրան, խնդրո՜ւմ եմ...,թո՜ղ, թող որ ես դիմեմ նրան..., նայի՞ր, կանգնել, սպասում է մեր խօսքին..., այս ի՞նչ է Աստուած իմ՝ միւսներն էլ են կանգնել..., էլ չեն պարում..., դու վշտացրիր նրանց, ա՜հ..., այդ ի՞նչ ես անում Արմինէ..., դու ուզում ես քանդե՞լ նրանց բոյնը..., չքանդե՛ս, լսո՞ւմ ես..., չքանդես..., ես քեզ հրամայում եմ. չի՛ կարելի քանդել նրանց բոյնը...: Ի՞նչ է, դու մոռացա՞ր քիչ առաջուայ ասածս:

- Նրանք վերադառնալու են իրենց բոյնը..., վերադառնալու են երբ օրերը տաքանան..., թո՛ղ նրանց, թող..., ա՜հ, այո՜, ցուրտ է..., ես մրսում եմ Արմինէ..., ծածկիր վրաս..., ա՜հ այդպէս..., ապրես..., նայի՛ր՝էս փոքրիկն էլ է մրսում, դողում է տերեւի պէս..., բաց թող նրան, թող թռչի, թող գնա՜յ..., եւ սակայն չմոռանաս նրան ասել, որ՝

Երբ տեսնես դու նորան,
Ինձնից շատ բարեւ արա,
Ասա, թող նստի լայ,
Իւր անբախտ որդու վրայ:

- Ա՜հ..., չէ՜, այն չէ...,տե՛ս՝ չեն թռչում, մենք վշտացրինք նրանց..., բայց ո՛չ, սպասիր..., ի՞նչ է սա..., հա՜..., մի՞թէ դու չես տեսնում, որ այս մէկը վիրաւոր է, չի կարողանում թռչել..., նայի՜ր, նայի՜ր, կարծես թէ սիրտն է վիրաւոր..., այո՜, այո՜, սիրտը, տեսնես ո՞վ է խոցել այն..., զգո՜յշ, մենք կը խնամենք նրան ու յետոյ բաց կը թողնենք, որպէսզի կարողանայ թռչել, լա՞ւ...: Յոգնեցի աղջիկս..., բռնիր, բռնի՛ր դու նրան, մի թողնի, որ թռչի, սիրտը վիրաւոր՝ նա ինչպէ՞ս տուն կը հասնի: Այն միւսին նայիր Արմինէ, նայի՜ր..., օհօ՜..., անհաւատալի է Աստուած իմ, անհաւատալի՜..., թռել է մեր տան կտուրին..., դու գիտես չէ՞ մեր տունը..., արի միասին գնանք մեր տուն..., յիշո՞ւմ ես՝ գիւղի ծայրին է, առջեւում էլ ընկուզենու ծառ..., տես, տե՜ս, էլի Խաչոն է թառել ծառի վրայ, ծոցն էլ լիքը ընկոյզ է..., ոչի՜նչ, ոչինչ մի ասա նրան..., մենք էլ քիչ յետոյ իրենց պճղովի դեղձի ծառը կը բարձրանանք, լա՞ւ...:

- Տե՛ս, տես Արմինէ, հիմա էլ իրար գլխի հաւաքուեցին ծիծեռնակները, տեսնես ի՞նչ են ուզում անել: Տե՛ս, տես Արմինէ, մայր ծիծեռնակն է խօսողը, ուշադիր լսիր..., այո՜, այո՛՝այդպէս էլ գիտէի: Որոշում են համատեղ, բոլորը միասին վերադառնալ իրենց հին բոյնը, չէ՞ որ հիմա Գարուն է այնտեղ, գարո՜ւն...:

...Իր հեքիաթի ոգեւորութիւնից անկողնում գրեթէ նստած վարպետ Անդրանիկը վերջացրեց իր հեքիաթը: Արմինէն ակնապիշ նայում էր նրան լո՜ւռ, անձայն, հետեւելով պապի ձեռքերի շարժումներին: Նրան թւում էր, թէ պապն էլ ահա ուր որ է՝ կը թռնի ծիծեռնակների հետ ու կը գնայ հեռո՜ւ..., իսկ զարթուցիչի մէջ շարունակում էր հնչել մեղեդին.

Ծիծեռնա~կ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ:

...Մէկ շաբաթ անց, տափարակ հարթութեան վրայ տարածուած, առանց շիրմաքարերի բաւական յայտնի գերեզմանոցի բազում շիրիմների կողքին աւելացաւ նաեւ վարպետ Անդրանիկի շիրիմը:

Գերեզմանոցի մետաղեայ միատեսակ սալիկների մէջ, հին քէօթահիացու սալիկը միւսներից տարբերւում էր նրանով, որ հանգուցեալի անունի տակ, ներքեւում փորագրուած էր երկու տող.

ԴԷ~, ԹՌԻ~Ր ԾԻԾԵՌՆԱԿ,
ԾՆԱԾ ՏԵՂՍ'ԱՇՏԱՐԱԿ:

# 2020 Մարդահամարին մասնակցելն անհրաժեշտ է մեր համայնքին



2020 Մարդահամարը հաշվում է Միացյալ Նահանգներում ապրող ամեն մեկին: Լրացրու մարդահամարի հարցաթերթիկն այսօր և դո՛ւ կօգնես որոշելու, թե ուր պետք է հատկացվեն առողջապահության, շտաբ օգնության և կրթության համար նախատեսված միլիարդավոր դոլարներն ամեն տարի՝ հաջորդ տաս տարվա ընթացքում: **Լրացրու մարդահամարն առցանց կամ ուղարկիր տվյալները փոստով: Իմացիր ավելին 2020census.gov/hy կայքից:**

**2020CENSUS.GOV/hy**

Վճարված է ԱՄՆ-ի Մարդահամարի Բյուրոյի կողմից

**Shape your future START HERE >**

United States Census 2020